# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1 (123). 2025



## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

## REGIONAL SECURITY

# ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ՝ 33 ՏԱՐԵԿԱՆ



Հայաստանի Հանրապետության բանակի ստեղծման 33-ամյակին նվիրված միջոցառում՝ ՀՀ Վարչապետ *Նիկոլ Փաշինյանի* (կենտրոնում), ՀՀ Պաշտպանության նախարար *Սուրեն Պապիկյանի* (ձախից), ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ *Էդվարդ Ասրյանի* (աջից) մասնակցությամբ



ՀՀ ՊՆ ԶՈՒ-ի տարբեր ստորաբաժանումների զինծառայողները մասնակցում են Հայաստանի Հանրապետության բանակի ստեղծման 33-ամյակին նվիրված միջոցառմանը

Երևան, ՀՀ ՊՆ, 2025 թ. հունվարի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

**1** (123). **2025**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Բաղդադյան Ա. Ա.**
(նախագահ)
**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
**Ալեքսանյան Դ. Ն.**
**Այվազյան Լ. Գ.**
**Ասատրյան Ջ. Դ.**
(գլխ. խմբագրի տեղակալ)
**Մկրտչյան Վ. Ա.**
**Շահնազարյան Թ. Ն.**
**Սարգսյան Ա. Գ.**
**Սիմոնյան Ս. Վ.**
**Ստեփանյան Հ. Լ.**
**Քոչարյան Տ. Տ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Ռ. Գ. Ավետիսյան,* Ֆրանսիայի արտաքին քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային ճարտարապետության ձևավորման վրա ...... 9

*Ա. Գ. Դավթյան,* Հարավային Կովկասի պետությունների և այնտեղ անմիջականորեն ներգրավված ուժային կենտրոնների դիրքորոշումները տարածաշրջանի տրանսպորտային ապաշրջափակման վերաբերյալ ................ 34

*Մ. Հ. Դերլոֆֆ,* «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի աշխարհատնտեսական նշանակությունը ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից .................... 43

*Ա. Մ. Սայիյան,* Թուրքիայի քրդական քաղաքականության փոխակերպումները սիրիական ճգնաժամի համատեքստում ..................... 57

*Հ. Ա. Փաշայան,* Ռուսաստանում աղբբեջանական լոբբիի ազդեցությունը հայ-ռուսաստանյան հարաբերությունների վրա ............ 68

### ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Մ. Ա. Շիրինյան,* Կոլեկտիվ անվտանգության ձևաչափը Ազգերի լիգայի և Միավորված ազգերի կազմակերպության օրինակով. համեմատական վերլուծություն .......................... 81

### ՌԱԶՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

*Վ. Պ. Գևորգյան,* Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների դերը ՀՀ Զինված ուժերի արդի բարեփոխումներում .................... 96

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Կ. Ռ. Կարապետյան,* Ռազմական բուհերի կուրսանտների արդյունավետ ուսումնառության շարժառիթներ ........................................110

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ,* Համարի բառարան ..........................124

## ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ժերար Դը Բուաբուասել,* Ֆրանսիայի «Սան Սիր» ռազմական ակադեմիայի «Զինված ուժերի համար նորագույն տեխնոլոգիաների մարտահրավերներ» գիտահետազոտական կենտրոնի պետ, հեռահաղորդակցության ինժեներ-հետազոտող, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Ս. Կարապետյան,* հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ա. Ա. Հախումյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Հ. Մաքևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ա. Հ. Մելիքյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Հ. Մեսրոպյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան,* ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ ՌԳԱ իսկական անդամ, *Տ. Տ. Քոչարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*Ա. Ա. Բաղդաղյան,* գեներալ-մայոր (նախագահ), *Տ. Տ. Քոչարյան,* գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (նախագահի տեղակալ), *Ա. Ս. Բաղդանյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Ա. Վ. Հայրապետյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Ս. Ա. Սուջյան,* պահեստազորի գնդապետ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 1** (123)**. 2025**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Багдадян А. А.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Айвазян Л. Г.*, *Алексанян Д. Н.*, *Асатрян З. Д.* (зам. гл. редактора), *Кочарян Т. Т.*, *Мкртчян В. А.*, *Саргсян А. Г.*, *Симонян С. В.*, *Степанян Г. Л.*, *Шахназарян Т. Н.*

# СОДЕРЖАНИЕ

**РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*Р. Г. Аветисян.* Влияние изменений внешней политики Франции на формирование безопасностной архитектуры Южного Кавказа . . . . . . . . 9 (21)*

*А. Г. Давтян.* Позиции государств Южного Кавказа и непосредственно вовлеченных там центров силы в вопросе транспортного деблокирования региона . . . . . . . . 34 (41)

*М. А. Детлофф.* Геоэкономическое значение международного транспортного коридора «Север–Юг» с точки зрения безопасностных интересов РА . . . . . . . . 43 (55)

*А. С. Саиян.* Трансформации курдской политики Турции в контексте Сирийского кризиса . . . . . . . . 57 (66)

*Г. А. Пашаян.* Влияние азербайджанского лобби в России на армяно-российские отношения . . . . . . . . 68 (79)

**БЕЗОПАСНОСТНАЯ ПОЛИТОЛОГИЯ**

*М. А. Ширинян.* Формат коллективной безопасности на примере Лиги Наций и Организации Объединенных Наций: сравнительный анализ . . . . . . . . 81 (94)

**ВОЕННАЯ СОЦИОЛОГИЯ**

*В. П. Геворгян.* Роль военно-социологических исследований в современных реформах в Вооруженных силах РА . . . . . . . . 96 (107)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ**

*К. Р. Карапетян.* Мотивы эффективного обучения курсантов военных вузов . . . . . . . . . . 110 (121)

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера . . . . . . . . . . 124 (126)



**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*А. Г. Авагян*, доктор исторических наук, профессор; *А. А. Ахумян*, член-корреспондент НАН РА; *Жерар де Буабуассель*, начальник Научно-исследовательского компонента «Вызовы новых технологий для вооруженных сил» Военной академии Сен-Сир, Франция, Инженер-исследователь по телекоммуникациям; *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор; *В. С. Карапетян*, доктор психологических наук, профессор; *Г. С. Котанджян*, доктор политических наук (РФ), профессор, действительный член АВН РФ; *Т. Т. Кочарян*, доктор политических наук, профессор; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *А. О. Меликян*, член-корреспондент НАН РА; *А. О. Месропян*, доктор филологических наук, профессор; *Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор; *В. Г. Саакян*, кандидат физико-математических наук; *Р. А. Сафрастян*, академик НАН РА; *О. Я. Саядян*, доктор географических наук, профессор; *Ю. М. Суварян, академик НАН РА*

**ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:**

*А. А. Багдадян*, генерал-майор (председатель); *Т. Т. Кочарян*, полковник, доктор политических наук, профессор (заместитель председателя); *А. В. Айрапетян*, полковник, кандидат военных наук; доцент; *А. С. Багданян*, полковник, кандидат военных наук; доцент; *Д. М. Манасян*, кандидат исторических наук, доцент; *С. А. Суджян*, полковник запаса, кандидат географических наук, доцент

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**№ 1** (123)**. 2025**
Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Baghdadyan A. A.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Aleksanyan D. N.*, *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*, *Kocharyan T. T.*, *Mkrtchyan V. A.*, *Sargsyan A. G.*, *Shahnazaryan T. N.*, *Simonyan S. V.*, *Stepanyan H. L.*

# CONTENTS

**REGIONAL SECURITY**

*R. G. Avetisyan.* The impact of changes in France's foreign policy on the configuration of the South Caucasus security architecture . . . . . . . . . . 9 (22)*

*A. G. Davtyan.* Stances of the South Caucasus states and the centers of power being directly involved there on the issue of unblocking transport links of the region . . . . . . . . . . 34 (42)

*M. H. Detloff.* Geoeconomic significance of the International North–South Transport Corridor from the viewpoint of the RA security interests . . . . . . . . . . 43 (56)

*A. S. Sayiyan.* Transformations of Turkey's Kurdish policy in the context of Syrian crisis . . . . . . . . . . 57 (67)

*H. A. Pashayan.* The impact of the Azerbaijani lobby in Russia on the Armenian-Russian relations . . . . . . . . . . 68 (79)

**SECURITY POLITICAL SCIENCE**

*M. A. Shirinyan.* Collective security format on the example of the League of Nations and the United Nations: a comparative analysis . . . . . . . . . . 81 (95)

**MILITARY SOCIOLOGY**

*V. P. Gevorgyan.* The role of military sociological research in modern reforms in the RA Armed Forces . . . . . . . . . . 96 (108)

* Numbers in brackets mean the page of the text in English.

**MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION**

*K. R. Karapetyan.* Motives for efficient learning among students in military academies . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 110 (122)

**MILITARY TERMINOLOGY**

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary . . . . . . . . . . . 124 (128)

**ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *Gérard de Boisboissel*, Head, Research Observatory "Challenges of Emerging Technologies for the Armed Forces", Saint-Cyr Military Academy, France, Research engineer in telecommunications; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor; *A. A. Hakhumyan*, Corresponding Member, NAS, RA; *V. S. Karapetyan*, Doctor of Psychology, Professor, *T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences (RF), Professor, Full Member, Academy of Military Science, RF; *M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA; *A. H. Melikyan*, Corresponding Member, NAS, RA; *H. H. Mesropyan*, Doctor of Philology, Professor, *E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *H. Y. Sayadyan*, Doctor of Geography, Professor; *Yu. M. Suvaryan*, Full Member, NAS, RA

**DEFENSE-ACADEMIC COUNCIL:**

*A. A. Baghdadyan*, MG (Chairman); *T. T. Kocharyan*, Colonel, Doctor of Political Sciences, Professor; *A. S. Baghdanyan*, Colonel, PhD in Military Sciences, Associate Professor; *A. V. Hayrapetyan*, Colonel, PhD in Military Sciences, Associate Professor; *D. M. Manasyan*, PhD in History, Associate Professor; *S. A. Sujyan*, Colonel (Ret.), PhD in Geography, Associate Professor

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

# REGIONAL SECURITY

DOI: 10.61760/18290108-afa.25.1-9

# ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ*

*Ռ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ավագ գիտական-վերլուծաբան, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող*



## Ներածություն

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության գերակայությունների արդի փոփոխությունները նշանակալի ազդեցություն ունեն Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման վրա: Ֆրանսիան մշտապես ակտիվ քաղաքական և տնտեսական համագործակցություն է ունեցել հարավկովկասյան պետությունների հետ, բայց տարածաշրջանային ներգրավվածության մեծացումը չի դասվել արտաքին քաղաքականության ռազմավարական գերակայությունների շարքը: Մեր ուսումնասիրության նպատակը Ֆրանսիայի արտաքին քաղաքականության արդի փոփոխությունների և Հարավային Կովկասում նրա ունեցած ազդեցության գնահատումն է: Հարավային Կովկասի անվտանգության ապահովման գործում Ֆրանսիայի աշխարհաքաղաքական դերը պարզելու համար գնահատվել են Ադրբեջանի ու Հայաստանի հետ Ֆրանսիայի ռազմաքաղաքական ու տնտեսական համագործակցության առանձնահատկությունները:

## Ֆրանսիայի արտաքին քաղաքականության գերակայությունների արդի փոփոխությունները

Ֆրանսիայի արտաքին և անվտանգային քաղաքականության գերակայությունների վերանայումն սկսվեց 2017 թ.՝ Մակրոնի նախագահության օրոք, ինչը պայմանավորված էր եվրոպական անվտանգային համակարգում անկայունության աստիճանի բարձրացման և ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների աճման միտումներով: Եվրոպայում ծայրահեղական իսլամի տարածումը, ահաբեկչության սպառնալիքները, ուկրաինական ճգնաժամը, Թրամփի առաջին նախագահության շրջանում առաջացած գործակցային պրոբլեմները, ԵՄ-ի տնտեսական և միգրացիոն խնդիրները Եվրոպական տարածաշրջանում ստեղծեցին նոր սպառնալիքներ, ինչն էլ

* Հոդվածն ստացվել է 03.03.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 21.04.2025:

Մակրոնի վարչակազմի համար հիմք դարձավ ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության գերակայությունները վերանայելու համար:

2017 թ. Ֆրանսիան հրապարակեց պաշտպանության և ազգային անվտանգության ռազմավարության վերանայման փաստաթուղթը, որով որպես արտաքին քաղաքականության գերակայություններ սահմանվեցին ահաբեկչության դեմ պայքարը, Սահելում և Մերձավոր Արևելքում ճգնաժամերի հաղթահարումը, ինչպես նաև ԵՄ-ի ռազմավարական ինքնավարության մեծացումը[1]: Ֆրանսիայում ահաբեկչության դեմ պայքարը մղվում էր ծայրահեղական իսլամի նկատմամբ կոշտ քաղաքականությամբ և միգրացիոն հոսքերի վերահսկմամբ: Տարածաշրջանային ճգնաժամերը հաղթահարելու համար ձեռնարկվել էին՝ Իրաքում և Սիրիայում «Շամալ» *(Opération Chammal)*, Սահելի շրջանում՝ «Բարխան» *(Opération Barkhane)* օպերացիոն գործողությունները, ինչպես նաև ապահովվել էր Լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի *(UNIFIL)* կազմում մեծ ներկայացվածություն: Իսկ ԵՄ-ի ռազմավարական ինքնավարության մեծացումը պահանջում էր անկախ եվրոպական պաշտպանական համակարգի ստեղծմամբ դրանում պետությունների ինտեգրմանն աջակցելու քաղաքականություն:

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության գերակայությունների հաջորդ վերանայումը տեղի ունեցավ 2022 թ.: Ռուս-ուկրաինական զինված հակամարտության մեկնարկը, տարբեր տարածաշրջաններում ազդեցության գոտիների բաժանման համար մղվող մրցակցության սրումը, գիտատեխնոլոգիական գերազանցության և նորամուծության շուրջ ծավալվող մրցակցությունը կամ «տեխնոլոգիական սպառազինությունների մրցավազքը», տրանսպորտային և էներգետիկ միջազգային հաղորդակցային ուղիների վերափոխումները հիմքեր ստեղծեցին Ֆրանսիայի համար, որպեսզի նա նորից վերանայի իր արտաքին և անվտանգային քաղաքականության գերակայությունները: 2022 թ. հրապարակված ազգային ռազմավարական վերանայման փաստաթղթով Ֆրանսիան ահաբեկչության ու ծայրահեղականության դեմ պայքարից անցում կատարեց Միջերկրածովյան ու Եվրոպական տարածաշրջաններում բարձր ինտենսիվությամբ միջպետական հակամարտություններին պատրաստվելու, հիբրիդային սպառնալիքները չեզոքացնելու, ուժային կենտրոնների միջև խորացող մրցակցությանը դիմակայելու և ռազմավարական զսպման մեխանիզմների արդյունավետությունը մեծացնելու ռազմավարությանը:

Ֆրանսիայի ռազմավարական շահերի փոփոխությունները դրսևորվում են նաև Մերձավոր Արևելքում: 2022 թ. Ֆրանսիան «Շամալ» օպերացիոն գործողությունների շրջանակում արդեն առաջնայնությունը տալիս էր ոչ թե տարածաշրջանային հակամարտություններում ուղիղ ռազմական ներգրավվածության մեծացմանը, այլ Իսլամական պետության դեմ պայքարող Սիրիայի քրդական ինքնապաշտպանության ուժերի, իրաքյան կառավարական ուժերի, Փեշմերգայի հետ համագործակցության խորացմանը[2]: Թեև Ֆրան-

[1] Այս և հաջորդ հղումները տես անգլերեն տեքստից հետո: - *Խմբ.:*

սիան Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, ԱՄԷ-ում, Քաթարում, Քուվեյթում դեռ ունի ռազմական ուժեր, այնուամենայնիվ դրանք արդեն ռազմավարական առումով լուրջ դեր չեն խաղում տարածաշրջանային անվտանգության և կայունության հաստատման գործում:

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից է ԵՄ-ի ռազմավարական ինքնավարության հաստատումը: Ռուս-ուկրաինական հակամարտությունը, ԱՄՆ - Չինաստան հակասությունների աճումը, ԱՄՆ-ում Թրամփի նախագահումը է՛լ ավելի են մեծացնում եվրոպական անվտանգության համալիրի դեմ ուղղված սպառնալիքները, ինչն էլ անհրաժեշտություն է առաջացնում մեծացնելու ԵՄ-ի ռազմավարական ինքնավարությունը: Բազմակենտրոն աշխարհակարգի հաստատման պայմաններում Ֆրանսիան ձգտում է նպաստելու ԵՄ-ն անվտանգության ապահովման «օբյեկտից սուբյեկտի» վերածելուն, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ից անկախ եվրոպական անվտանգային համակարգ հիմնելուն: Դրանով նախատեսվում է ԱՄՆ-ից, Չինաստանից, ՌԴ-ից անկախ քաղաքականության վարում, ԵՄ-ում Ֆրանսիայի համաեվրոպական առաջավարության հաստատում, այլ աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների հետ ընդհանուր շահերի շրջանակում համագործակցության խորացում: Այդ համատեքստում է դիտվում նաև ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ֆրանսիայի ռազմական տեխնիկայի արտահանման ծավալների մեծացման, համատեղ արտադրությունների խթանման քաղաքականության ակտիվացումը[3]:

ԵՄ-ի ռազմավարական ինքնավարության ձևավորման վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ Թրամփի որդեգրած քաղաքականությունը: ԱՄՆ-ում կառավարող վարչակազմի քաղաքական ուղեգծի փոփոխությունները Ֆրանսիայի համար նոր հնարավորություններ են ստեղծում եվրոպական պետությունները միավորելու՝ ԱՄՆ-ից անկախ նոր համաեվրոպական անվտանգային համակարգ կառուցելու գաղափարի շուրջ: Ֆրանսիայի համար մտահոգիչ է հատկապես ԵՄ-ի որոշ պետություններում ընտրություններին ԱՄՆ-ի վարչակազմի միջամտելու և եվրոպական աջ ծայրահեղական ուժերին աջակցելու իրողությունը[4]: Դա է փաստում նաև այն հանգամանքը, որ Ֆրանսիայի ռազմավարական փաստաթղթերով որպես արտաքին քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը սահմանված է տարածաշրջանում «շարժիչ ուժ» *(capacité d'entraînement),* իսկ համաշխարհային մակարդակում՝ «հավասարակշռող ուժ» *(puissance d'équilibre)* դառնալու նպատակը[5]: «Շարժիչ ուժ» դառնալու ռազմավարությունը բխում է Մակրոնի՝ «Եվրոպայի պաշտպանության դոկտրինից», որով ենթադրվում է Եվրոպական տարածաշրջանում ՆԱՏՕ-ի տարածքային պաշտպանության դերի լրացում, ընդհանուր ռազմական միջամտության ուժերի, միասնական պաշտպանական բյուջեի և գործողությունների միասնական դոկտրինի ստեղծում[6]: Իսկ «հավասարակշռող ուժ» դառնալու ձգտումները հաճախ ընկալվում են որպես ԱՄՆ–ՉԺՀ ռազմավարական մրցակցությունում կողմերից հավասար հեռավորություն պահպանելու ձգտում:

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության գերակայություններում կարևորվում է նաև հնդկախաղաղօվկիանոսյան ուղղությունը: Այս տարածաշրջանը կարևորվում է ոչ միայն այն պատճառով, որ դիտվում է որպես համաշխարհային տնտեսական աճման նոր շարժիչ ուժ, այլև այդ տարածաշրջանում է տեղակայված ռազմածովային զորակայանների մեծ մասը[7]: Միջերկրական ծով – Կարմիր ծով – Արաբական ծով – Հնդկական օվկիանոս – Խաղաղ օվկիանոս ուղղությունը Ֆրանսիայի ռազմածովային մատակարարումների հիմնական երթուղին է: Ընդսմին Ֆրանսիան բացահայտ կերպով աջակցում է Թուրքիան շրջանցող երկու կարևոր նախագծերի իրականացմանը՝ Միջերկրական ծովի իսրայելական հատվածում հայտնաբերված գազը փոխադրելու համար «ԻստՄեդ» *("EastMed")* խողովակաշարի կառուցման ծրագրին և «Հնդկաստան – Սաուդյան Արաբիա – Հորդանան – Իսրայել – Հունաստան» տնտեսական միջանցքի ստեղծմանը:

## Ֆրանսիայի դերը Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի կերպափոխման պայմաններում

Աշխարհակարգի փոփոխման և բազմակենտրոնության աճման պայմաններում աստիճանաբար փոխվում է Հարավային Կովկասում նախկինում հաստատված ուժային հաշվեկշիռը: 2020 թ. Ղարաբաղյան պատերազմից և ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո Ֆրանսիան ձգտում է ակտիվացնելու իր ներգրավվածությունը տարածաշրջանային անվտանգության փխրուն համակարգում: Ֆրանսիայի ազգային ռազմավարական վերանայման փաստաթղթում Հարավային Կովկասի կամ առանձին տարածաշրջանային պետությունների հետ համագործակցության վերաբերյալ դրույթներ չկան, միայն եվրոպական անվտանգության գերակայությունների բաժնում խոսվում է նաև ԵՄ-ի Եվրոպական հարևանության քաղաքականության մասին: ԵՄ-ի Արևելյան գործընկերությանը վերաբերող բաժնում, որտեղ հատուկ հիշատակվում են Ուկրաինան, Մոլդովան և Վրաստանը, նշվում է, որ Ֆրանսիան իր տնտեսական օգնության մեխանիզմներով և եվրոպական ծրագրերի միջոցով պետք է նպաստի դրանց կայունությանը և կառուցվածքային բարեփոխումների իրագործմանը[8]:

Քանի որ Ֆրանսիան չունի Հարավային Կովկասի առնչությամբ համապարփակ տարածաշրջանային ռազմավարություն, ի տարբերություն Բալկանյան, Հնդկախաղաղօվկիանոսյան, Կենտրոնասիական տարածաշրջաններից[9], ուստի պետք է հասկանալ, թե որ ավելի մեծ անվտանգային համալիրում է Ֆրանսիան ներառել Հարավկովկասյան տարածաշրջանը: Ֆրանսիայի՝ Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության տվյալներով՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ներառված են Եվրոպական տարածաշրջանին վերաբերող բաժնում[10]: Ընդ որում, պաշտոնական հրապարակումներում չկան երեք պետություններին միաժամանակ վերաբերող ռազմավարական ձևակերպումներ: Ինչպես նշեցինք, Հարավային Կովկասի ընդհանրությունները շեշտող միակ ձևակերպումը ԵՄ-ի Արևելյան գործընկերության

նախագծին աջակցելու քաղաքականությունն է: Այդ համատեքստում փաստաթղթում բերված ձևակերպումը նույնությամբ կրկնում է ԵՄ-ի «Ռազմավարական կողմնացույց» կոչվող պաշտպանական ռազմավարության դրույթները[11]: Ուստի կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիայի արտաքին և անվտանգային քաղաքականությունը տարածաշրջանում առաջնորդվում է 2022 թ. ԵՄ-ի Խորհրդում Ֆրանսիայի նախագահությամբ ընդունված փաստաթղթի դրույթներով:

Ֆրանսիան, լրացնելով ԵՄ-ի ռազմավարական մոտեցումները, ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո սկսել է ավելի մեծացնել իր ներգրավվածությունը հարավկովկասյան տարածաշրջանային խնդիրների կարգավորման գործում: Դա առաջին հերթին պայմանավորված է 2022 թ. Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ռազմավարական գերակայությունների վերանայմամբ: Հարավային Կովկասում տարածաշրջանային ներգրավվածության մեծացումը համարվում է ոչ թե արտաքին քաղաքականության նոր ռազմավարական ուղղության ստեղծում, ինչպես Աֆրիկյան, Մերձավորարևելյան կամ Կենտրոնասիական տարածաշրջանների դեպքում է, այլ տարածաշրջանն առավելապես դիտվում է որպես ընդլայնված Մերձավորարևելյան, Եվրոպական, Կենտրոնասիական տարածաշրջանների խաչմերուկում գտնվող ենթագոտի:

Ֆրանսիայի համար Հարավային Կովկասի նշանակությունը էականորեն մեծանում է եվրոպական ռազմավարական ինքնավարության հաստատման արտաքին քաղաքական նպատակի իրագործման և Ռուսաստանի նկատմամբ զսպումների կիրառման համատեքստում: Ընդմին Հայաստան–Ռուսաստան ռազմաքաղաքական հարաբերություններում առաջացած ճգնաժամը, Կենտրոնական Ասիան Եվրոպային կապող ու Ռուսաստանը շրջանցող ադրբեջանական էներգետիկ և տրանսպորտային կապուղիների դերի մեծացումը Ֆրանսիայի համար ստեղծում են նոր հնարավորություններ: Հարավային Կովկասի դերը այլևս չի սահմանափակվում միայն տարածաշրջանային պետությունների հետ ԵՄ-ի համագործակցության հեռանկարներով: Մասնավորապես՝ Ադրբեջանը գերազանցապես ընկալվում է Կենտրոնասիական, իսկ Վրաստանը և Հայաստանը՝ ընդլայնված Սևծովյան անվտանգային համալիրի համատեքստում: Եվ քանի որ Մերձավորարևելյան տարածաշրջանում Թուրքիայի աճող ազդեցությունը խոչընդոտներ է հարուցում Ֆրանսիայի ռազմավարական դիրքերի ամրապնդման համար, ապա Ֆրանսիան կարող է որոշակիորեն կարևորել նաև Մերձավորարևելյան տարածաշրջանում հայկական քրիստոնեական համայնքային կառույցների հետ համագործակցությունը:

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության գերակայությունների ռազմավարական վերանայումներով, ինչպես նաև Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայում էներգետիկ ներգրավվածության մեծացմամբ պայմանավորված՝ Ֆրանսիան հետաքրքրություն է դրսևորում նաև Հարավային Կովկասի հաղորդակցային ուղիները ապաշրջափակելու նկատմամբ: Կասպյան տարա-

ծաշրջանում Ֆրանսիայի էներգետիկ ազդեցության մեծացման համար ստեղծվում են նոր հնարավորություններ: Ուստի Հայաստանով անցնող հաղորդակցային ուղիների վերահսկումը ռուսաստանյան ուժերին վերապահելը կարող է էապես սահմանափակել Կասպյան տարածաշրջանում Ֆրանսիայի ներգրավվածության մեծացման հնարավորությունները: Ֆրանսիայի շահերից է բխում, որ տարածաշրջանային պետությունների ինքնիշխանության պահպանմամբ, առանց ռուսաստանյան կամ թուրքական վերահսկողության հաստատման, ամբողջությամբ ապաշրջափակվեն տարածաշրջանային հաղորդակցային ուղիները: Իսկ դա հնարավոր է միայն Հայաստանի և Ադրբեջանի միջև ուժային հաշվեկշռի ապահովման պարագայում:

### Ֆրանսիա - Ադրբեջան. տնտեսական ու քաղաքական հարաբերությունները և դրանց զարգացման հեռանկարները

Ֆրանսիայի և Ադրբեջանի միջև քաղաքական ու տնտեսական հարաբերությունները զարգացել են գործընկերային մթնոլորտում: Ֆրանսիան Թուրքիայից հետո երկրորդ պետությունն է, որը ճանաչել է Ադրբեջանի անկախությունը: Հեյդար Ալիևը և Իլհամ Ալիևը իրենց պաշտոնավարման ընթացքում առաջին արտասահմանյան այցերը կատարել են Ֆրանսիա: Ավելին. 1993 թ. երկու պետությունների միջև ստորագրվել է բարեկամության պայմանագիր, որով էականորեն զարգացել են երկկողմ տնտեսական, էներգետիկ, մշակութային ու կրթական կապերը:

Ֆրանսիայի և Ադրբեջանի հարաբերությունները զարգացել են նաև պաշտպանական ոլորտում: Ըստ Ֆրանսիայի խորհրդարանի զենքի արտահանման 2020 թ. հայտագրության՝ 2010–2019 թթ. ընթացքում Ֆրանսիան Ադրբեջանին վաճառել է 148,4 մլն եվրոյի զինամթերք[12]: Թեև զինամթերքի տեսակների մասին մանրամասներ չկան, բայց համապատասխան հրապարակումներ են եղել տարբեր հարթակներում: Ադրբեջանի պաշտպանության նախարարության ոչ պաշտոնական աղբյուրներից մեկը համարվող «Ազերի Դիֆենս» *("Azeri Defence")* հրատարակության հայտագրությունում նշվում է, որ Ֆրանսիան Ադրբեջանին մատակարարել է ՀՕՊ-ի «Աստեր 30 Սամպ/Տ» *("Aster 30 Samp/T")* և «ՎԼ Միկա» *("VL MICA")* հրթիռային համակարգեր[13]: Այլ բաց աղբյուրների համաձայն՝ ադրբեջանական զինված ուժերում առկա են նաև ֆրանսիական արտադրության «ՄՕ-120-ՌՏ-61» *("MO-120-RT-61")* տեսակի ականանետներ և «Շերպա 2» *("Sherpa 2")* զրահամեքենաների որոշակի խմբաքանակ[14]: Պաշտպանական ոլորտում Ադրբեջանը համագործակցում է ֆրանսիական «էյրբաս Դիֆենս ընդ Սպեյս» *("Airbus Defence and Space")* ընկերության հետ, որի միջոցով 2014 թ. «Ազերկոսմոս»-ին (*"Azercosmos"*) է վաճառվել «Սպոտ 7» *("Spot 7")* օպտիկալուսանկարչական դիտման արբանյակ: Նույն ընկերությունը Ադրբեջանում կառուցել է նաև արբանյակների կառավարման կենտրոն և զբաղվել է ադրբեջանցի մասնագետների վերապատրաստմամբ[15]:

Հարավային Կովկասի հետ Ֆրանսիայի տնտեսական կապերի 60 %-ը

բաժին է հասնում Ադրբեջանին: 2023 թ. Ֆրանսիա - Ադրբեջան առևտրաշրջանառությունը 2022 թ. համեմատությամբ կրկնակի աճել է՝ կազմելով 423 մլն դոլար: Ադրբեջանից Ֆրանսիա արտահանումը կազմել է 130 մլն դոլար, որի ավելի քան 90 %-ը նավթամթերք է[16]: Ադրբեջանի տնտեսության զարգացման մեջ բավական ակտիվ ներդրում ունի Զարգացման ֆրանսիական գործակալությունը (ԶՖԳ), որը ֆինանսական, տեխնիկական և խորհրդատվական աջակցություն է ցույց տալիս Ադրբեջանին հաղորդակցային ուղիների արդիականացման գործում: 2015 թ. ԶՖԳ-ն 112,5 մլն եվրո ֆինանսական աջակցություն է տրամադրել «Բաքու – Թբիլիսի – Կարս» երկաթգծի նորոգման համար: Իսկ 2018 թ. գործակալությունը 93,5 մլն եվրո է տրամադրել «Հյուսիս – Հարավ» երկաթուղային ցանցի մաս կազմող Սումգաիթ - Յալամա հատվածի արդիականացման համար[17]: Ըստ Ադրբեջանում Ֆրանսիայի դեսպանի հայտարարության՝ ԶՖԳ-ն պատրաստ է մինչև 5 մլն եվրո ֆինանսական աջակցություն ցույց տալ Ադրբեջանին՝ տրանսպորտային, ջրային, էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացման համար: Դեսպանի 2021 թ. հայտարարությունում կարևորվում է նաև Ադրբեջանի կայուն զարգացմանը Ֆրանսիայի նպաստելու պատրաստակամությունը, այդ թվում՝ նշելով, որ չկան ոչ քաղաքական և ոչ էլ այլ բնույթի խոչընդոտներ Ադրբեջանի «վերադարձրած» Լեռնային Ղարաբաղում տնտեսական գործունեության ծավալման համար[18]:

Ֆրանսիա - Ադրբեջան համագործակցությունում կարևոր նշանակություն ունի նաև էներգետիկ ոլորտը: Ֆրանսիական «Տոտալէներժի» *(TotalEnergies)* նավթագազային ընկերությունն Ադրբեջանի հետ ունի մոտ 30 տարվա համագործակցության փորձ: Նրան են պատկանում Ապշերոնի գազային հանքավայրի 35 %-ը և «Բաքու- Թբիլիսի- Ջեյհան» նավթամուղի 5 %-ը: 2023 թ. ընկերությունը պայմանագիր է կնքել Ադրբեջանի էներգետիկայի նախարարության հետ 250 ՄՎտ հզորությամբ արևային և 250 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների նախագծի գնահատման համար: «Տոտալէներժի» ընկերությունը մեթանի արտանետումների մշտադիտարկման աշխատանքներում համագործակցում է ադրբեջանական «ՍՈԿԱՐ»-ի *(SOCAR)* հետ: Ֆրանսիական ընկերությունը ներգրավված է նաև ադրբեջանական կրթական համակարգի ֆինանսավորման գործում, մասնավորապես՝ միայն 2023 թ. 400 հազ. դոլար կրթաթոշակ է տրամադրել ադրբեջանցի ուսանողներին[19]:

Ֆրանսիայի համար Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացումը մեծ կարևորություն է ստանում կենտրոնասիական պետությունների հետ համագործակցության պահպանման առումով: Այդ պետությունների կայունությունը մեծ կարևորություն ունի Ֆրանսիայի համար, քանի որ այդ տարածաշրջանում աստիճանաբար մեծանում է ֆրանսիական տնտեսական ներգրավվածությունը: Ֆրանսիայի էներգետիկ անվտանգության ապահովման համար մեծ կարևորություն ունի համագործակցությունը հատկապես Ղազախստանի և Ուզբեկստանի հետ, որոնց բաժին է հասնում

ուրանի համաշխարհային արդյունահանման ծավալների մոտ կեսը, իսկ Ֆրանսիայում էլեկտրաէներգիայի արտադրության 60 %-ն ապահովում են ԱէԿ-ները: Աֆրիկայում ազդեցության նվազմամբ պայմանավորված՝ Ֆրանսիան ստիպված դադարեցրել է ուրանի ներմուծումը Նիգերից, որը վերջին տասը տարվա ընթացքում ապահովում էր Ֆրանսիայի ուրանի պահանջարկի 20 %-ը[20]: Ֆրանսիան չի կարողանում օգտագործել նաև Սանկտ Պետերբուրգի նավահանգիստը՝ Ռուսաստանից ուրան ներմուծելու համար: Ուստի այդ պատճառով 2023 թ. Մակրոնի այցի ժամանակ ստորագրվեց ռազմավարական առումով օգտակար հանածոների ոլորտում Ղազախստանի հետ ռազմավարական նշանակությամբ համագործակցության հռչակագիրը[21]: Ներկայումս Ղազախստանում գործում են ավելի քան 170 ֆրանսիական ընկերություններ, այդ թվում՝ էլեկտրաէներգետիկայի և միջուկային արտադրության ֆրանսիական պետական ընկերությունները ու «Տոտալէնեդժի»-ն: Նավթավերամշակման ոլորտում Ֆրանսիան տարածաշրջանում ակտիվորեն համագործակցում է նաև Թուրքմենստանի հետ[22]: Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Արևմուտք–Ռուսաստան հաղորդակցային ուղիների արգելափակումը, Ռուսաստանի և Իրանի նկատմամբ գործող պատժամիջոցները Ֆրանսիայի համար էականորեն մեծացնում են Կենտրոնասիական տարածաշրջանից Բաքվի նավահանգստի միջոցով ուրանի և այլ էներգակիրների ներմուծման կարևորությունը: Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների վատթարացման դեպքում Ֆրանսիան կարող է ռիսկի տակ դնել Կենտրոնասիական տարածաշրջանում իր ռազմավարական ներգրավվածության պահպանումը:

Ֆրանսիա–Ադրբեջան տնտեսական համագործակցության մեծացման պայմաններում 2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո սկսեցին էապես վատթարանալ երկկողմ քաղաքական հարաբերությունները: Ֆրանսիայի և Ադրբեջանի միջև քաղաքական խնդիրների առաջացումը մշտապես պայմանավորված է եղել Հայաստանին Ֆրանսիայի տարբեր քաղաքական ուժերի ցուցաբերած աջակցությամբ: Բայց քանի դեռ Ֆրանսիան շարունակում էր փաստացի համարվել ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահ պետություն, Ֆրանսիայի կառավարությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացներում չէր կարողանում անվերապահ քաղաքական աջակցություն տրամադրել Հայաստանին: Ֆրանսիայի կառավարությունը մշտապես զգուշավորությամբ էր մոտենում Հայաստանին աջակցելու քաղաքականությանը՝ հաշվի առնելով միջնորդության գործընթացներից նրա դուրս մղվելու սպառնալիքները: Մակրոնի վարչակազմը, մի կողմից, չէր ցանկանում, որ Ֆրանսիայի քաղաքական ուժերը իրենց մեղադրեին Հայաստանին չաջակցելու մեջ, մյուս կողմից՝ չէր ցանկանում, որ այդ աջակցությունը Ադրբեջանն ընկալեր որպես միջնորդության դադարեցում և հակամարտության կողմ դառնալու ձգտում: Ուստի այդ տրամաբանությամբ են գործել նաև Ֆրանսիայի Սենատը՝ հանդես գալով 2020 թ. նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու կոչով, և Ֆրանսիայի կառավարությունը՝ ձեռնպահ մնալով որևէ ռեալ գործողությունից:

ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական գործունեության ժամանակ Ֆրանսիայի և Ադրբեջանի հարաբերություններում քաղաքական հակասությունները չէին վերածվում քաղաքական ճգնաժամի: Ֆրանսիայի և Ադրբեջանի միջև քաղաքական ճգնաժամի մեկնարկ կարելի է համարել Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացներում Ֆրանսիայի միջնորդության փաստացի դադարեցման ժամանակաշրջանը, որը սկիզբ առավ 2023 թ. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ Ադրբեջանի ձեռնարկած էթնիկական զտումից և բռնի տեղահանումից հետո: Այդ ժամանակ Մակրոնը մեղադրեց Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի վրա հարձակվելու մեջ և կոչ արեց քննարկելու նրանց իրավունքների և անվտանգության խնդիրները[23]: Բացի այդ, Ֆրանսիան սկսեց նախաձեռնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում և ԵՄ-ի տարբեր կառույցներում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության խնդիրների վերաբերյալ քննարկումներ, ինչը բնականաբար բախվեց Ադրբեջանի խիստ քննադատությանը:

Այդ իրադարձություններից հետո Ադրբեջանի տարբեր պաշտոնյաներ սկսեցին ուղղորդված կոշտ մեղադրանքներ հնչեցնել Ֆրանսիայի նկատմամբ՝ նրան մեղադրելով հակաադրբեջանական քաղաքականություն վարելու մեջ: Ադրբեջանն սկսեց Ֆրանսիայի այդ քաղաքականությունն օգտագործել նաև ներքաղաքական համատեքստում: Ալիևի վարչակարգը իր իշխանությունը պահպանելու, ապա անցնցում կերպով փոխանցելու համար ադրբեջանական հասարակությանը համախմբելու նպատակով փորձում էր ստեղծել նոր «թշնամական կերպարներ»: Այս համատեքստում 2024 թվականի փետրվարին հերթական նախագահական ընտրությունների ժամանակ որպես Ադրբեջանի դեմ ուղղված սպառնալիքներ ներկայացվեցին տարածաշրջանում արևմտյան ազդեցության մեծացումը և Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու օտարերկրյա ուժերի ակտիվացումը[24]:

Ի պատասխան Հայաստանին քաղաքականապես աջակցելու Ֆրանսիայի մոտեցումներին՝ Ադրբեջանն սկսեց Ֆրանսիայի քաղաքացիների դեմ ձեռնարկել որոշակի գործողություններ: 2023 թ. դեկտեմբերին Ադրբեջանի իշխանությունները լրտեսության մեղադրանքով ձերբակալեցին Ֆրանսիայի քաղաքացի Մարտին Ռայանին, իսկ 2024 թ. ապրիլին Բաքվի մետրոյում գույքային վնաս պատճառելու մեղադրանքով ձերբակալեցին ֆրանսիացի Տեո Կլերկին: Այս ձերբակալությունները ավելի լարեցին Ֆրանսիայի և Ադրբեջանի միջև հարաբերությունները: Ֆրանսիայի արտգործնախարարությունը դատապարտեց այդ ձերբակալությունները և իր քաղաքացիներին կոչ արեց խուսափելու Ադրբեջան մեկնելուց՝ կամայական կալանավորումների և անարդար դատավճիռների վտանգի պատճառով[25]:

Ֆրանսիա – Ադրբեջան քաղաքական լարվածության մակարդակը մեծացավ նաև Ֆրանսիային պատկանող Նոր Կալեդոնիա խաղաղօվկիանոսյան կղզում Ադրբեջանի հրահրած անկարգությունների պատճառով: 2024 թ. ապրիլին Ադրբեջանի խորհրդարանի նախագահը համագործակցության պայմանագիր էր ստորագրել Նոր Կալեդոնիայի անկախության կողմնակից

ուժերի հետ, որոնք փորձում էին անկայունություն մտցնել կղզում[26]: Տեղի ունեցած անկարգություններից և անհնազանդության նախաձեռնություններից հետո տեղի ֆրանսիական ուժերը շատ արագ կարողացան այնտեղ հաստատել իրենց վերահսկողությունը: Որպես արդյունք՝ հսկայական ռեսուրսների կիրառմամբ Ադրբեջանը չկարողացավ Ֆրանսիայի համար լուրջ մտահոգություններ ստեղծել, ավելին. Նոր Կալեդոնիայում հաստատված նոր իշխանությունները միանգամից չեղյալ հայտարարեցին Ադրբեջանի խորհրդարանի նախագահի հետ ձեռք բերված համագործակցային պայմանագրերը:

### Հայ-ֆրանսիական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումը

Հայաստանի և Ֆրանսիայի հարաբերությունները պատմականորեն զարգացել են բարեկամական մթնոլորտում, ինչում մեծ կարևորություն են ունեցել երկկողմ պատմամշակութային կապերը, Ֆրանսիայի՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, Ֆրանսիայում Հայկական սփյուռքի ունեցած ակտիվ դերը: Բացի այդ, Ֆրանսիան երկար տարիներ եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահ պետություն՝ հանդես գալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում միջնորդական դերով: Հայաստանի և Ֆրանսիայի միջև 1993 թվականից ստորագրվել են մի շարք համաձայնագրեր, որոնք վերաբերում են մշակութային, գիտական, տեխնիկական, տնտեսական, պաշտպանական ոլորտներում համագործակցության զարգացմանը[27]: Հարաբերությունների խորացմանը նպաստել է նաև «Հայաստան–ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» ստորագրումը, որը լրացուցիչ հնարավորություններ է տվել Ֆրանսիային՝ մեծացնելու իր գործունեությունը Հայաստանում:

Հարաբերությունների զարգացման վրա մշտապես մեծ ազդեցություն է ունեցել Ֆրանսիայում մեծ հայկական համայնքի գործունեությունը: Ֆրանսիայի հայ համայնքը, իր ծավալած պետութենամետ գործունեությամբ, Ֆրանսիայում լավագույնս ինտեգրվելու տեսանկյունից միշտ օրինակ է եղել այլ էթնիկ խմբերի համար: Հայկական համայնքային կազմակերպությունները Ֆրանսիայի հասարակական-քաղաքական գործընթացներում կարողացել են բոլոր քաղաքական ազդեցիկ դերակատարների հետ հաստատել գործընկերային հարաբերություններ: Ֆրանսիայում ծայրահեղական իսլամի դեմ պայքարը անուղղակիորեն նպաստել է նաև այնտեղ թուրքական և ադրբեջանական լոբբիստական խմբերի գործունեության թուլացմանը: Բացի այդ, ի տարբերություն թուրքական և ադրբեջանական լոբբիստական խմբերից, հայկական խմբերը մշտապես վարել են անկախ գործունեություն և չեն ուղղորդվել այլ ուժերով:

2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմից և ռուս-ուկրաինական ռազմական գործողությունների մեկնարկից հետո հայ-ֆրանսիական հարաբերություններն սկսեցին է՛լ ավելի ակտիվորեն զարգանալ: Դա պայմանավորված էր հայ-ադրբեջանական հարաբերություններում Ֆրանսիայի կաշ-

կանդող միջնորդության փաստացի դադարեցման, հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում լարվածության աճման, Հայաստանի պաշտպանական քաղաքականության «արևմտականացման» հետ: Հայաստանի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացմամբ Ֆրանսիան փորձում է կանխել Հարավային Կովկասի կառավարման «տարածաշրջայնացման» փորձերը: Ֆրանսիայի համար ռազմավարական առումով և՛ Թուրքիան, և՛ Ռուսաստանը մրցակիցներ են Մերձավոր Արևելքում, Կենտրոնական Ասիայում, Արևելյան Եվրոպայում և Սահելում: Հայաստանի՝ որպես դեպի Կենտրոնական Ասիա պանթյուրքականության տարածման աշխարհագրական խոչընդոտի գոյությունը, հայ-իրանական գործընկերային հարաբերությունները, ինչպես նաև Մերձավոր Արևելքի նախկին ֆրանսիական գաղութներում հայկական քրիստոնեական համայնքների դերը նույնպես կարևոր են հայ-ֆրանսիական հարաբերությունների ամրապնդման առումով:

Հայ-ֆրանսիական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման գործում կարևորվում է պաշտպանության ոլորտում[28] ռազմավարական համագործակցության ծավալումը, որն սկիզբ է առել 2022 թ.: 2023 թ. հոկտեմբերին պաշտպանության նախարարների մակարդակով համաձայնություն ձեռք բերվեց շարունակելու պետությունների միջև 2022 թ. մեկնարկած ռազմավարական մերձեցումը *(rapprochement stratégique):* Կողմերի միջև ստորագրված պայմանագրի համաձայն՝ Ֆրանսիան պարտավորվում է աջակցելու Հայաստանի Զինված ուժերի վերափոխմանը և կարողությունների զարգացմանը, ինչը պետք է կատարվի զինվորական անձնակազմի վերապատրաստման և ռազմատեխնիկական համագործակցության ձևով: Ռազմատեխնիկական աջակցության շրջանակում Հայաստանը հնարավորություն է ստանում ձեռք բերելու ՀՕՊ-ի «ԶՄ-200» *("GM-200")* համակարգեր, «Միստրալ» *("Mistral")* տիպի զենիթահրթիռային համալիրներ, գիշերային դիտման հեռադիտակներ, զրահամեքենաներ և այլն: Համագործակցության շրջանակում Հայաստանի Զինված ուժերում նշանակվել է ֆրանսիացի ռազմական խորհրդական[29]:

Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների զարգացման գործում կարևորվում է նաև տնտեսական գործոնը: 2023 թ. Հայաստանում Ֆրանսիան օտարերկրյա ուղղակի ներդրումների գծով զբաղեցրել է չորրորդ հորիզոնականը (12,1 մլն դոլար), որը, սակայն, 2022 թ. համեմատությամբ մոտ 5 %-ով քիչ է[30]: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, 2019 թ. Ֆրանսիան Ռուսաստանից հետո երկրորդ օտարերկրյա ներդրողն էր Հայաստանում[31]: 2022 թ. համեմատությամբ որոշակիորեն աճել են նաև երկկողմ առևտրաշրջանառության ծավալները, մասնավորապես՝ 2023 թ. դրանք կազմել են մոտ 150 մլն դոլար: 2023 թ. Ֆրանսիայից Հայաստան ներմուծման ծավալը աճել է մոտ 50 %-ով՝ կազմելով մոտ 140 մլն դոլար, իսկ Հայաստանից դեպի Ֆրանսիա արտահանումները գրեթե չեն փոխվել՝ կազմելով մոտ 10 մլն դոլար[32]: Հայաստանի տնտեսության հաշվեկշռում ֆրանսիական ընկերություններն ակտիվ դեր ունեն հատկապես ագրոպարենային («Պեռնո

Ռիկար» *(“Pernod Ricard”)*, բանկային («Կրեդիտ Ագրիկոլ» *(“Credit Agricole”))*, ջրային ռեսուրսների կառավարման («Վեոլիա» *(Véolia))*, ոլորտներում: Հայաստան–Ֆրանսիա տնտեսական հարաբերությունների զարգացման համար մեծ կարևորություն ունի նաև 2013 թվականից Հայաստանում գործունեություն ծավալող ՁՖԳ-ն, որը դրամաշնորհների և վարկերի տրամադրման միջոցով նպաստում է Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը և պետական ֆինանսների կառավարման արդյունավետության մեծացմանը[33]:

**Եզրակացություն**

2022 թ. Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ռազմավարական վերանայման հետևանքով փոփոխության ենթարկվեցին Ֆրանսիայի աշխարհաքաղաքական գերակայությունները: Ֆրանսիան ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարից անցում կատարեց դեպի միջպետական հակամարտություններին պատրաստվելու, հիբրիդային սպառնալիքները չեզոքացնելու, ուժային կենտրոնների միջև խորացող մրցակցությանը դիմակայելու ազգային ռազմավարությանը: Դա անհրաժեշտություն առաջացրեց, որ Ֆրանսիան թուլացնի Աֆրիկյան-Մերձավորարևելյան տարածաշրջաններում իր աշխարհաքաղաքական ներգրավվածությունը և փորձի էապես մեծացնել իր դերը Արևելաեվրոպական ու Կենտրոնասիական տարածաշրջաններում:

Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ռազմավարական վերանայումը էական ազդեցություն գործեց Հարավային Կովկասում նրա ներգրավվածության մեծացման վրա: Հայ-ֆրանսիական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումը հնարավորություն է տալիս Հայաստանին հաշվեկշռելու իր արտաքին քաղաքականությունը: Հարաբերությունների զարգացումը Հայաստանի համար հատկապես կարևորվում է Զինված ուժերի արդիականացման գործում Ֆրանսիայից աջակցություն ստանալու համար: Հայ-ֆրանսիական հարաբերություններում լուրջ հնարավորություններ կան էներգետիկ ոլորտում փոխգործության ակտիվացման համար: Այնուամենայնիվ Ֆրանսիան չի հավակնում Հայաստանի անվտանգության երաշխավորի դերին: Դեռ ավելին. Ադրբեջանի նկատմամբ Ֆրանսիայի վարած քաղաքականությունը մեծ մասամբ տեղի հայկական լոբբիստական խմբերի ջանքերի արդյունք է: Տարածաշրջանային անվտանգության տեսակետից կարևոր հանգամանք է այն, որ պաշտպանության ոլորտում Հայաստանի հետ Ֆրանսիայի համագործակցության խորացումը ուղղված է ոչ թե Ադրբեջանի դեմ որևէ ագրեսիա հրահրելուն, այլ ռազմական հաշվեկշռի ապահովմամբ խաղաղության մեխանիզմների ներդրումն ավելի դյուրին դարձնելուն: Դա նաև կնպաստի, որ Ֆրանսիան պահպանի իր տնտեսական ներդրումները Կասպյան տարածաշրջանում և մեծացնի իր աշխարհաքաղաքական ազդեցությունը:

# ВЛИЯНИЕ ИЗМЕНЕНИЙ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ФРАНЦИИ НА ФОРМИРОВАНИЕ БЕЗОПАСНОСТНОЙ АРХИТЕКТУРЫ ЮЖНОГО КАВКАЗА

*Р. Г. АВЕТИСЯН, кандидат политических наук, доцент, старший ученый-аналитик Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ*

РЕЗЮМЕ

В 2022 г. геополитические приоритеты Франции претерпели изменения в результате стратегического пересмотра ее внешней политики. Акцент был перенесен со стратегии борьбы с терроризмом и экстремизмом на подготовку к межгосударственным конфликтам, нейтрализации гибридных угроз, противостоянию углубляющейся конкуренции между центрами силы. Вследствие этого возникла необходимость ослабить геополитическую вовлеченность Франции в процессы, происходящие в регионе Ближнего Востока и Северной Африки, и нацелиться на значительное увеличение ее роли в Восточноевропейском и Центральноазиатском регионах. Стратегический пересмотр внешней политики Франции оказал значительное влияние и на возрастание ее присутствия на Южном Кавказе.

Развитие армяно-французских военно-политических отношений предоставляет Армении возможность сбалансировать свою внешнюю политику. Развитие этих отношений особенно важно для Армении в целях получения поддержки от французской стороны в процессах модернизации Вооруженных сил. В армяно-французских отношениях скрыт существенный потенциал для активизации сотрудничества и в сфере энергетики. Тем не менее Франция не претендует на роль гаранта безопасности Армении, более того, политика Франции, проводимая в отношении Азербайджана, в значительной степени реализуется усилиями местных армянских лоббистских групп. Важным обстоятельством для региональной безопасности является тот факт, что углубление оборонного сотрудничества Франции с Арменией не направлено на разжигание агрессии против Азербайджана, а на создание благоприятных условий для внедрения механизмов упрочения мира путем обеспечения военного баланса сил в регионе. В то же время это будет способствовать тому, чтобы Франция сохранила свои экономические инвестиции в Каспийском регионе и увеличила свое геополитическое влияние.

# THE IMPACT OF CHANGES IN FRANCE'S FOREIGN POLICY ON THE CONFIGURATION OF THE SOUTH CAUCASUS SECURITY ARCHITECTURE

*R. G. AVETISYAN, PhD in Political Science, Associate Professor, Senior Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Researcher, Institute for Armenian Studies, YSU*

## Introduction

Recent changes in France's foreign policy priorities have a significant impact on the formation of the South Caucasus regional security system. France has historically maintained active political and economic cooperation with the South Caucasus states; however, the region has not featured prominently among the strategic priorities of its foreign policy agenda. Our study is aimed at the assessment of recent changes in France's foreign policy, and its impact in the South Caucasus. So as to elucidate what role France geopolitically plays in ensuring security in the South Caucasus, the article has evaluated the specifics of France's military-political and economic cooperation with Azerbaijan and Armenia.

## The current changes in France's foreign policy priorities

Reviewing the priorities in France's foreign and security policy began back in 2017 during Macron's presidency, which was imputable to the tendencies in the rise of the instability in the European security system and that of the threats to the national security. The spread of Islamic extremism in Europe, terrorist threats, the Ukrainian crisis, the cooperation problems in the period of Trump's first presidency, as well as the EU's economic and migration issues generated new threats in the European region, which, in turn, provided a framework for Macron's administration to review the national security and foreign policy priorities.

In 2017, France published the Defence and National Security Strategic Review, which declared combating terrorism, overcoming the crises in the Sahel and the Middle East, as well as enhancing European strategic autonomy as foreign policy priorities[1]. The fight against terrorism in France was pursued through a tough policy towards Islamic extremism and control of migration flows. To overcome the regional crises, the operations "Chamal" *(Opération Chammal)* in Iraq and Syria, "Barkhane" *(Opération Barkhane)* in the Sahel region were carried out, as well as a significant presence of the United Nations Interim Force in Lebanon (UNIFIL) was maintained. And the enhancement of the strategic autonomy of the EU required a policy of supporting the integration of states into it by creating an independent European defense system.

The next review of France's foreign policy priorities was done in 2022. The launch of the Russia-Ukraine armed conflict, the intensification of competition

for dividing the spheres of influence in different regions, the competition in sci-tech superiority and innovation or the "technological arms race", and the transformations in international transport and energy lines of communications built France the bedrock to once again review its foreign and security policy priorities. With the publication of the 2022 National Strategic Review, France redirected its strategic focus from counterterrorism and the fight against extremism toward preparing for high-intensity interstate conflicts in the Mediterranean and European regions. The review emphasizes the need to counter hybrid threats, address the intensifying rivalry among great powers, and enhance the effectiveness of strategic deterrence mechanisms.

Changes in France's strategic interests are also displayed in the Middle East. In 2022, France, within the framework of Operation “Chamal”, was already prioritizing not increasing direct military involvement in regional conflicts, but rather deepening cooperation with the Syrian Kurdish Self-Defense Forces, Iraqi Armed Forces, and Peshmerga fighting against the Islamic State[2]. However, the French military deployments, still maintained in Syria, Iraq, Lebanon, the UAE, Qatar, and Kuwait, no longer play a key role in establishing regional security and stability in strategic terms.

Building the EU’s strategic autonomy is one of the important directions of French foreign policy. The Russia-Ukraine conflict, the growth of US-China contradictions, in addition to Trump's presidency in the US, further increase the threats to the European security complex, thus making room for the need to enhance the EU's strategic autonomy. Within the framework of the establishment of a polycentric world order, France seeks to embrace the EU’s transformation from being an “object to a subject” of security provision, notably, to establish a European security system independent of NATO. This implies conducting a policy independent of the US, China, and Russia, establishing France's pan-European leadership in the EU, and increasing cooperation with other geopolitical powers in the sphere of common interests. In this context, the article also discusses the activation of France's policy of increasing the volume of military equipment exports and promoting joint production after the Russia-Ukraine war[3].

Trump’s policy may greatly affect the formation of the EU's strategic autonomy. Changes in the political course of the US current administration create new opportunities for France to unite European states around the idea of building a new pan-European security system independent of the US. France has expressed particular concern over instances in which certain members of the U.S. administration are perceived to interfere in the domestic electoral processes of specific EU member states and to provide implicit or explicit support to right-wing extremist movements within Europe[4]. The fact that France's strategic documents define the goal of becoming a “driving force” *(capacité d'entraînement)* in the region, and a “balancing

power” *(puissance d'équilibre)* globally as one of the main priorities of its foreign policy, also indicate the abovementioned[5]. The strategy of becoming a “driving force” ensues from Macron's European defense doctrine, which implies complementing NATO's territorial defense role in the European region, establishing a common military intervention force, a common defense budget, and developing a shared military doctrine for action[6]. As for the aspirations to become a “balancing power”, they are often perceived as an attempt to maintain equal distance from both sides in the US-PRC strategic rivalry.

The Indo-Pacific direction is also in the shortlist of France's foreign policy priorities. This region is important not only because it is regarded as a novel powerhouse of global economic growth, but also because the majority of its naval bases are deployed there[7]. The Mediterranean − Red Sea – Arabian Sea – Indian Ocean – the Pacific route is the main itinerary for French naval supplies. Concurrently, France openly supports the implementation of two important projects that bypass Turkey: the “EastMed” pipeline construction project to transport gas discovered in the Israeli sector of the Mediterranean Sea, and the creation of the “India – Saudi Arabia – Jordan – Israel – Greece” economic corridor.

## The role of France in the South Caucasus changing security environment

In terms of changing world order and growth of polycentricity, the balance of power formerly established in the South Caucasus is gradually being reshaped. After the 2020 Nagorno-Karabakh War and the outbreak of the Russia-Ukraine War, France is in a somewhat pursuit of furthering its engagement in the fragile regional security system. France's national strategic review does not anticipate any provisions on cooperation with either the South Caucasus, or individual regional states, only the section on European security priorities brings up the EU's European Neighborhood Policy (ENP). The section on the EU's Eastern Partnership (EaP), where Ukraine, Moldova and Georgia have received particular mention, it states that France should contribute to their stability and the implementation of structural reforms by vitalizing mechanisms for its economic aid and European programs[8].

Since France does not have a comprehensive regional strategy for the South Caucasus, unlike the Balkan, Indo-Pacific, and Central Asian regions[9], it is of critical importance to understand in which broader security complex France has embraced the South Caucasus region. As per the French Ministry for Europe and Foreign Affairs, Armenia, Georgia and Azerbaijan are included in the section on the European region[10]. And what’s more, in official publications there are no strategic statements referring to the three states simultaneously. As we have mentioned, the only statement highlighting the commonalities of the South Caucasus is the EU's policy of supporting the Eastern Partnership

initiative. In this context, the statement in the document closely mirrors the provisions outlined in the European Union's defense strategy known as the "Strategic Compass"[11].Therefore, it can be concluded that France's regional foreign and security policy aligns with the provisions of the "Strategic Compass", adopted in 2022 during the French Presidency of the Council of the European Union.

Complementing the EU's strategic approaches, France, after the launch of the Russia-Ukraine War, began enhancing its engagement in the process of the settlement of the South Caucasus regional issues. This is primarily due to the review of France's foreign policy strategic priorities in 2022. Increasing regional involvement in the South Caucasus does not imply that a new strategic direction of foreign policy is being set up, as is the case with the African, Middle Eastern, or Central Asian regions, but rather that the region is by and large considered a sub-area at the intersection of the expanded Middle Eastern, European, and Central Asian regions.

For France, the weight on the South Caucasus is significantly increasing in the context of the implementation of its foreign policy goal of establishing European strategic autonomy and the application of restraints towards Russia. Simultaneously, the crisis in military-political relations between Armenia and Russia, as well as the increasing role of Azerbaijani energy and transport channels connecting Central Asia to Europe and bypassing Russia open up new opportunities for France. The role of the South Caucasus is no longer limited merely to the prospects of EU cooperation with regional states. Notably, Azerbaijan is primarily perceived in the context of the Central Asian, and Georgia and Armenia – in that of the expanded Black Sea security complex. Furthermore, given that Turkey's growing influence in the Middle East poses obstacles for France to strengthen its strategic positions, the latter may also attach certain importance to cooperation with Armenian Christian community-based organizations in the Middle East.

On account of strategic reviews in French foreign policy priorities, and enlargement of energy involvement in Azerbaijan and Central Asia, France takes some interest in unblocking the lines of communications in the South Caucasus as well. New possibilities arise for increasing the French energy influence in the Caspian region. Therefore, confiding the control over the lines of communications passing via Armenia to Russian forces is fraught with significantly limiting the possibilities of enlarging France's involvement in the Caspian region. It is in France's interests that regional lines of communications be completely unblocked, whereas the sovereignty of regional states is preserved, without the establishment of either Russian or Turkish control. And this is possible only if the balance of power between Armenia and Azerbaijan is ensured.

## France – Azerbaijan: economic and political relations and prospects for their development

Political and economic relations between France and Azerbaijan have developed in an atmosphere of partnership. France is the second state after Turkey to recognize the independence of Azerbaijan. Heydar Aliyev and Ilham Aliyev made their first foreign visits to France during their terms of office. Moreover, back in 1993, an agreement on friendship was signed between the two states, which significantly developed bilateral economic, energy, cultural and educational ties.

The defense sphere also saw development of relations between France and Azerbaijan. According to the 2020 Report to Parliament on France's arms export, in 2010–2019, France sold €148.4 million worth of ammunition to Azerbaijan[12]. Although no details about the types of ammunition are known, however, there have been subsequent publications in various media platforms. In the appendix to the "Azeri Defense", which is considered one of the unofficial sources of the Azerbaijani Ministry of Defense, it is stated that France has supplied Azerbaijan with *"Aster 30 Samp/T"* and *"VL MICA"* missile systems[13]. According to other open sources, the Azerbaijani armed forces also have French-produced *"MO-120-RT-61"* grenade launchers and a certain consignment of *"Sherpa 2"* armored vehicles[14]. In the defense sphere, Azerbaijan cooperates with the French company "Airbus Defence and Space", through which the *Spot 7* optical Earth-imaging satellite was sold to "Azercosmos" in 2014. The same company also built a satellite control center in Azerbaijan and undertook training Azerbaijani specialists[15].

60% of the share of France's economic ties with the South Caucasus belongs to Azerbaijan. In 2023, France – Azerbaijan trade circulation doubled as per in 2022, amounting to $423 million. Exports from Azerbaijan to France amounted to $130 million, more than 90% of which were oil products[16]. The French Development Agency *(Agence Française de Développement, AFD)* is actively involved in the development of the Azerbaijani economy, providing financial, technical and advisory support to Azerbaijan in the modernization of its lines of communications. In 2015, the AFD provided financial aid with the amount of €112.5 million for the renovation of the Baku – Tbilisi – Kars railway line. And in 2018, the Agency allocated €93.5 million for the modernization of the Sumgait – Yalama section of the North – South railway network[17]. As the French Ambassador to Azerbaijan declared, the AFD was ready to provide up to €5 million worth financial aid to Azerbaijan for the modernization of transport, water, and energy infrastructures. The ambassador's statement also highlights France's support for Azerbaijan's sustainable development, including potential economic activities in Nagorno-Karabakh. In this context, it is noteworthy that in 2021, the French ambassador to Azerbaijan stated that there was no obstacle, political or any other, to French businesses operating in the territories recently "recovered" by Azerbaijan[18].

The cooperation between France and Azerbaijan features the energy sector as well. The French oil and gas company “TotalEnergies” has nearly 30 years of experience in cooperation with Azerbaijan. It owns 35% stake in the Absheron gas and condensate field and holds 5% stake in the Baku – Tbilisi – Ceyhan (BTC) pipeline. In 2023, the company signed Memorandum of Understanding on energy cooperation with the Ministry of Energy of Azerbaijan for the development of 250 MW solar and 250 MW wind power plant projects. “TotalEnergies” is cooperating with the Azerbaijani SOCAR in the ongoing monitoring of methane emissions. The French company also takes interest in financing the Azerbaijani educational system, to be exact, in 2023 alone it provided $400 thousand worth scholarships to Azerbaijani students[19].

For France, the development of economic relations with Azerbaijan gains great importance in terms of maintaining cooperation with the Central Asian states. France puts a high value on the stability of these states, as it gradually increases its economic involvement in this region. In terms of France’s energy security, cooperation namely with Kazakhstan and Uzbekistan, which account for about half of the share of world's uranium production, whereas 60% of electricity generation in France is provided by nuclear power plants, is of utmost significance. Due to the decrease in influence in Africa, France was bound to stop its uranium import from Niger, which had provided 20% of France's uranium needs over the past ten years[20]. As for importing uranium from Russia, here, too, France is devoid of any possibilities of using the port of St. Petersburg. Therefore, during Macron's visit in 2023, a strategically important declaration of cooperation in the sphere of strategic minerals was signed with Kazakhstan[21]. Presently, more than 170 French companies operate in Kazakhstan, including French state-owned companies in electricity and nuclear production, and “TotalEnergies”. In the field of oil refining France also actively cooperates with Turkmenistan in the region[22]. To conclude, we can assert that the blockade of the West – Russia lines of communications, the sanctions against Russia and Iran significantly underscore for France the import of uranium and other energy resources from the Central Asian region via the port of Baku. In case the economic relations with Azerbaijan deteriorate, France may jeopardize maintaining its strategic involvement in the region of Central Asia.

In terms of the enhancement of economic cooperation between France and Azerbaijan the bilateral political relations notably suffered after the 2020 Nagorno-Karabakh War. Any emergence of political discrepancies between France and Azerbaijan has always been stipulated by cases of aid rendered to Armenia from various political forces in France. But as long as France was still factually considered an OSCE Minsk Group Co-Chair state, its government was unable to lend any unconditional political support to Armenia in the course of the negotiation processes on Nagorno-Karabakh conflict. The French

government has always been considerate about the support policy for Armenia, mindful of being thrust out of the mediation processes. On the one hand, Macron's administration didn't want to be accused by the French political forces of withholding support to Armenia, and on the other – didn't want that very support to be perceived by Azerbaijan as cessation of mediation and an urge to become a party to the conflict. With this very logic, in November 2020, the French Senate called for the recognition of Nagorno-Karabakh independence, whilst the French government refrained from any concrete action.

During the mediation activities of the OSCE Minsk Group, political discrepancies between France and Azerbaijan did not grow into a political crisis. The period of the actual cessation of French mediation in the Nagorno-Karabakh conflict resolution negotiation processes, which went down in 2023, after the Azerbaijani-imposed ethnic cleansing and forced displacement of the people of Nagorno-Karabakh, can be considered the outset of the political crisis between France and Azerbaijan. At that time, Macron accused Azerbaijan of attacking the people of Nagorno-Karabakh and called for a discussion of their rights and security issues[23]. Moreover, France began to initiate discussions on the security issues of the Nagorno-Karabakh people in the UN Security Council and in various EU structures, which, needless to say, encountered strong criticism from Azerbaijan.

Following these events, various Azerbaijani officials began to make harsh accusations directed at France, holding it responsible in the pursuit of an anti-Azerbaijani policy. Azerbaijan also began to use this French policy in a domestic political context. In order to preserve its power, and then smoothly transmit it, the Aliyev regime, tried to incorporate new "hostile characters" so as to consolidate the Azerbaijani society. In this framework, during the scheduled presidential elections in February 2024, the growing Western influence in the region and the activation of foreign forces to interfere in Azerbaijan's internal affairs were presented as threats against Azerbaijan[24].

In return for France's approches to politically support Armenia, Azerbaijan took up to certain actions against French citizens. In December 2023, Azerbaijani authorities arrested French citizen Martin Ryan on charges of espionage, and in April 2024, they arrested Frenchman Théo Clerc on charges of property damage in the Baku metro. These arrests further strained relations between France and Azerbaijan. The Ministry for Europe and Foreign Affairs of France condemned these arrests and urged its citizens to refrain from traveling to Azerbaijan in view of the danger of arbitrary arrests and unfair trials[25].

The political tension between France and Azerbaijan even rose more because of the Azerbaijani-instigated disturbances in the French Pacific island of New Caledonia. In April 2024, the Speaker of the Azerbaijani Parliament signed a cooperation agreement with pro-liberation forces in New Caledonia who were trying to destabilize the island[26]. Following the unrest and insurgencies the local French forces managed to regain control quite quickly.

As a result, Azerbaijan spent huge resources and still failed to fabricate serious concerns for France. Moreover, the newly established authorities in New Caledonia immediately declared the cooperation agreements with the Speaker of Azerbaijani Parliament null and void.

### Development of Armenia – France military-political relations

Relations between Armenia and France have historically evolved in friendly environment, which was much fostered by the bilateral historico-cultural ties, the recognition of the Armenian Genocide by France, the active role of the Armenian Diaspora in France. Apart from that, for years France has been an OSCE Minsk Group Co-Chair state, acting as a mediator in the Nagorno-Karabakh conflict resolution process. Since 1993, Armenia and France have signed a number of agreements pertaining to the cooperation development in the spheres of culture, science, technology, economy and defense[27]. In its turn, the "Comprehensive and Enhanced Partnership Agreement" (CEPA) signed between the European Union and the Republic of Armenia contributed to the enhancement of their relations, which provided complementary options for France to expand its activities in Armenia.

The development of relations has always been greatly influenced by the activities of the large Armenian community in France. In terms of the best integration in France, the case of the Armenian community in France, with its pro-state activities, can be best illustrated as exemplary for other ethnic groups. Armenian community organizations have managed to establish partnership relations with all influential political actors in French socio-political processes. The fight against radical Islam in France has also indirectly contributed to the weakening of the activities of Turkish and Azerbaijani lobbies there. In addition, unlike Turkish and Azerbaijani lobbies, Armenian interest groups have always conducted independent activities and never been directed by other forces.

In 2020 Nagorno-Karabakh post-war period and after the launch of Russia – Ukraine hostilities the relations between Armenia and France progressed even better. It was attributable to the de facto cessation of France's restraining mediation in Armenian-Azerbaijani relations, the rise in tension in Armenian-Russian allied relations, and the "Westernization" of Armenia's defense policy. By developing military-political relations with Armenia, France is trying out to prevent attempts at “regionalization” of governance in the South Caucasus. For France, both Turkey and Russia are strategic competitors in the Middle East, Central Asia, Eastern Europe, and the Sahel. The very existence of Armenia as a geographical obstacle to the spread of Pan-Turkism to Central Asia, the partnership relations between Armenia and Iran, as well as the role of Armenian Christian communities in the former French colonies in the Middle East are also important in terms of strengthening Armenian-French relations.

Expanding defense sector strategic cooperation in the development of military-political relations between Armenia and France[28], which commenced in

2022, is of great significance. In October 2023, an agreement was reached at the level of defense ministers to continue the strategic rapprochement between the states set in motion in 2022. The agreement signed between the parties states that France undertakes to support the transformation and capability development of the RA Armed Forces to be carried out in the format of retraining of military personnel and military-technical cooperation. Within the framework of military-technical aid, Armenia gains an offing of acquiring "*GM-200*" air defense systems, "*Mistral*"-type anti-aircraft missile systems, night-vision goggles, armored vehicles, etc. In the framework of the cooperation, a French military adviser has been appointed to Armenia's Armed Forces[29].

In the development of relations between Armenia and France the economic factor is similarly important. In 2023, France ranked fourth in terms of foreign direct investment in Armenia ($12.1 million), which, however, is about 5% less than in 2022[30]. Nevertheless, it should be noted that, for example, in 2019, by contrast, France was the second foreign investor in Armenia after Russia[31]. Compared to 2022, the volumes of bilateral trade circulation have also increased somewhat, in 2023, in particular, they totaled about $150 million. In 2023, the volume of imports from France to Armenia increased by around 50%, equaling roughly $140 million, while exports from Armenia to France remained almost unchanged, equivalent to close $10 million[32]. French companies play an active part in the balance of the Armenian economy, especially in the spheres of agro-based industries *("Pernod Ricard")*, banking *("Credit Agricole")*, and water resources management *("Véolia")*. The French Development Agency, which has been operating in Armenia since 2013, also plays a leading part in the development of Armenia – France economic relations by way of contributing to the advancement of the agriculture via grants and loans, and to the increase of the efficiency of public financial management in Armenia[33].

## Conclusion

Owing to 2022 France's Foreign Policy Strategic Review its geopolitical priorities underwent changes. France shifted from combating terrorism and extremism to a national strategy of preparing for interstate conflicts, neutralizing hybrid threats, and confronting the deepening competition among great powers. France chose to weaken its geopolitical involvement in the African – Middle Eastern regions and make efforts in significantly increasing its role in the Eastern European and Central Asian regions.

France's foreign policy strategic review did have a significant impact on its growing involvement in the South Caucasus. The augmentation of Armenian-French military-political relations facilitates for Armenia to balance its foreign policy. Suchlike enhancement of relations for Armenia especially features in receiving France's support in the modernization of the Armed Forces. In terms of bilateral relations there are serious opportunities also for boosting cooperation in the energy sector. For all that, France does not claim the role of

a guarantor of Armenia's security. Moreover, France's policy regarding Azerbaijan in due parts has been achieved through the efforts of local Armenian lobbies. From regional security perspectives, it is important that the deepening of France's defense sector cooperation with Armenia is targeted not at provoking any further aggression against Azerbaijan, but rather at facilitating the introduction of peace mechanisms by ensuring military balance. This will also serve France in maintaining its economic investments in the Caspian region and increasing its geopolitical influence.

*Translated by* ***Ani Martirosyan***

---

[1] Տես / See “Revue stratégique de défense et de sécurité nationale 2017”. Paris, 2017 (https://www.diplomatie.gouv.fr/IMG/pdf/2017-revue_strategique_dsn_cle4b3beb.pdf).

[2] Տես / See *F. Kelly.* France to continue military operation in Syria and Iraq in 2019, Macron says. “The Defense Post”, 17 January 2019 (https://thedefensepost.com/2019/01/17/france-military-operation-chammal-syria-iraq-2019-macron/).

[3] Տես / See *E. Soubrier.* Unpacking the storytelling around French arms sales: Demystifying the “strategic autonomy” argument. “Global Policy”, 2023, Vol. 14, Issue 1:

[4] Տես / See *J. Bennink, C. Lunday, J. Stanley-Smith.* Germany’s Scholz lashes out at Musk’s ‘disgusting’ interventions in Europe. “Politico”, 28 January 2025 (https://www. politico.eu/article/olaf-scholz-germany-election-elon-musk-nazis-history/).

[5] Տես / See “Revue nationale stratégique 2022”. Paris, 2022 (https://www.sgdsn. gouv.fr/publications/revue-nationale-strategique-2022).

[6] Տես / See *D. Keohane.* Macron’s European Defense Doctrine. “Carnegie Europe”, 28 September 2017 (https://carnegieendowment.org/europe/strategic-europe/2017/09/macrons-european-defense-doctrine?lang=en).

[7] Տես / See “La stratégie de la France dans l’Indopacifique”. Ministère de l’Europe et des Affaires étrangères, 2022 (https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/regional-strategies/indo-pacific/the-indo-pacific-a-priority-for-france/).

[8] Տես / See “Revue nationale stratégique 2022”. Paris, 2022 (https://www.sgdsn. gouv.fr/publications/revue-nationale-strategique-2022).

[9] Տես / See “France Diplomatie. Stratégies regionals”. Ministère de l’Europe et des Affaires étrangères, 2025 (https://www.diplomatie.gouv.fr/fr/dossiers-pays/strategies-regionales/).

[10] Տես / See “France Diplomatie. Europe”. Ministère de l’Europe et des Affaires étrangères, 2025 (https://www.diplomatie.gouv.fr/fr/dossiers-pays/europe/):

[11] Տես / See “Strategic Compass for Security and Defence”. Council of the European Union. Brussels, 21 March 2022.

[12] Տես / See “Rapport au Parlement 2020 sur les exportations d’armement de la France”. “SIPRI” databases (https://www.sipri.org/databases/national-reports/France):

[13] Տես / See «СМИ: Азербайджан закупит у Франции системы ПВО Aster и VL MİCA». «Эхо Кавказа», 3 Декабря 2018 г. (https://www.ekhokavkaza.com/a/2963 4909.html).

[14] Տես / See “Azerbaijan’s armored vehicles: Gurza-2 tactical intelligence patrol vehicle”. “Defence.az”, 14 February 2018 (https://web.archive.org/web/20201029111651/http:/defence.az/en/news/124381).

[15] Տես / See *Peter B. de Selding.* “Airbus Sells In-orbit Spot 7 Imaging Satellite to Azerbaijan”. “SpaceNews”, 4 December 2014 (https://spacenews.com/42840airbus-sells-in-orbit-spot-7-imaging-satellite-to-azerbaijan/).

[16] Տես / See “The Observatory of Economic Complexity, France-Azerbaijan Trade 2023” (https://oec.world/en/profile/bilateral-country/fra/partner/aze?).

[17] Տես / See “L'AFD et l'Azerbaïdjan: Relever le défi de l'après-pétrole”. “AFD: Agence Française de Développement” (https://www.afd.fr/fr/page-region-pays/ azerbaidjan).

[18] Տես / See “French - Azerbaijani trade and investment outlook”. Ambassade de France en Azerbaïdjan (https://az.ambafrance.org/French-Azerbaijani-trade-and-investment-outlook).

[19] Տես / See “Our activities in Azerbaijan”. TotalEnergies, 2024 (https://totalenergies.com/sites/g/files/nytnzq121/files/documents/totalenergies_activities-azerbaijan_2024_en_pdf.pdf).

[20] Տես / See *A. Maad.* How dependent is France on Niger's uranium? “Le Monde”, 7 August 2023 (https://www.lemonde.fr/en/les-decodeurs/article/2023/08/04/how-dependent-is-france-on-niger-s-uranium_6080772_8.html).

[21] Տես / See “Kazakhstan, France Sign Joint Declaration on Strategic Minerals” (https://astanatimes.com/2023/11/kazakhstan-france-sign-joint-declaration-on-strategic-minerals/).

[22] Տես / See “France Diplomatie. French policy in Central Asia”. Ministère de l'Europe et des Affaires étrangères (https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/central-asia/france-and-central-asia/article/french-policy-in-central-asia).

[23] Տես / See “Macron condemns Azeri use of force in Nagorno-Karabakh”. “Armenpress”, 20 September 2023 (https://armenpress.am/en/article/1119998).

[24] Տես / See “Azerbaijani president signals further divergence from West in inauguration speech”. “Eurasianet”, 16 February 2024 (https://eurasianet.org/azerbaijani-president-signals-further-divergence-from-west-in-inauguration-speech?).

[25] Տես / See “Azerbaïdjan - Situation de Théo Clerc (12 septembre 2024)”, Ministère de l’Europe et des Affaires étrangères (https://www.diplomatie.gouv.fr/fr/dossiers-pays/azerbaidjan/evenements/article/azerbaidjan-situation-de-theo-clerc-12-09-24).

[26] Տես / See “New Caledonia annuls cooperation agreement with Azerbaijan”. “OC Media”, 22 October 2024 (https://oc-media.org/new-caledonia-annuls-cooperation-agreement-with-azerbaijan/).

[27] Տես / See «Երկկողմ հարաբերություններ, Ֆրանսիա», “Bilateral Relations, France”. MFA AM (https://www.mfa.am/hy/bilateral-relations/fr).

[28] Ֆրանսիայի պաշտպանական ներուժի մասին տես / For France’s defence capabilities see *Ա. Հ. Մելիքյան, Դ. Ս. Չիլինգարյան,* Հիմնարար ու կիրառական գիտությունները և դրանց դերը պետության պաշտպանունակության ապահովման գործում. արտասահմանյան փորձը, *A. H. Melikyan, D. S. Chilingaryan.* Fundamental and applied sciences and their role in ensuring the state's defense capability: the foreign experience (in arm. and russ. lang.). “Haikakan Banak”, 2024, N 1 (http://haykakanbanak.am/wp-content/uploads/ 2024/09/HB-1-2024-Amboghjakan.pdf); *Մ. Ն. Կարապետյան, Ա. Պ. Պետրոսյան,* Ռազմատեխնիկական քաղաքականությունը որպես ռազմական արդյունաբերության զարգացման ուղեցույց, *M. N. Karapetyan, A. P. Petrosyan.* Military-technical policy as a guideline for the development of military industry (in arm.lang.). “Haikakan Banak”, 2022, N 2 (https://razmavaraget.wordpress.com/wp-content/uploads/202/10/hb_n2_2022.pdf).

[29] Տես / See “La France renforce sa relation de défense avec l’Arménie”. Ministère des Armées, 24 octobre 2023 (https://www.defense.gouv.fr/actualites/france-renforce-sa-relation-defense-larmenie).

[30] Տես / See “France Foreign Direct Investment Position: Inward: USD: Total: Armenia” “CEIC” (https://www.ceicdata.com/en/france/foreign-direct-investment-position-usd-by-region-and-country-oecd-member-annual/foreign-direct-investment-position-inward-usd-total-armenia?).

[31] Տես / See “France Diplomacy. France and Armenia”. Ministère de l’Europe et des Affaires étrangères (https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/armenia/france-and-armenia-65015/).

[32] Տես / See “Armenia Exports to France”. “Trading Economics” (https://trading economics.com/armenia/exports/france).

[33] Տես / See “Le groupe AFD et l'Arménie”. “AFD: Agence Française de Développement”, Février 2023 (https://www.afd.fr/fr/ressources/le-groupe-afd-et-larmenie).

DOI: 10.61760/18290108-ghk.25.1-34

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՒԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտական-վերլուծաբան*



## Ներածություն

«Խաղաղության խաչմերուկ» նախագծի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի միջև ուղեբացումը** նպաստելու է արտաքին աշխարհի հետ Հայաստանի հաղորդակցման բազմազանեցմանը և, միևնույն ժամանակ, մեծացնելու է Հարավային Կովկասի ինտեգրվածությունը միջազգային առևտրային հոսքերին: Տարածաշրջանի տրանսպորտային ապաշրջափակումը մեծացնելու է նաև տրանսպորտային և լոգիստիկ նշանակությունը: Միևնույն ժամանակ, հասկանալի է դառնում, որ տարածաշրջանի տնտեսական համայնապատկերի փոփոխությունը կախված կլինի այն բանից, թե, արդյոք, տրանսպորտային ապաշրջափակումը կկատարվի միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներով, թե՞ ոչ: Հենց այդ սկզբունքների պահպանումը Հայաստանի ղեկավարությունը դիտում է որպես տրանսպորտային ապաշրջափակման անհրաժեշտ պայման: Մյուս կողմից՝ տարածաշրջանի տնտեսական համայնապատկերի փոփոխությունը կախված կլինի նաև այն բանից, թե տրանսպորտային ապաշրջափակման նկատմամբ ինչ դիրքորոշումներ կդրսևորեն տարածաշրջանային պետությունները և այնտեղ գործող ուժային կենտրոնները:

## Տարածաշրջանի տրանսպորտային ապաշրջափակման գնահատումները

***Ռուսաստան:*** Ակնհայտ է վերջին տարիներին Հարավային Կովկասում Ռուսաստանի քաղաքական ազդեցության նվազումը: Ռուսաստանը փորձում է Թուրքիայի և Իրանի հետ գործակցության միջոցով կանխորոշել Հարավային Կովկասի տնտեսական հեռանկարները: Այս առումով տրանսպորտային

---

* Հոդվածն ստացվել է 05.02.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 10.04.2025:

** Սովորաբար սխալ է գործածվում «շրջափակում-ապաշրջափակում» տերմինային զույգը, որը ո՛չ ըստ թարգմանական և ո՛չ էլ ըստ բացատրական բառարանների չի համապատասխանում երևույթի իմաստին: Ուստի դրա փոխարեն սույն հոդվածում մենք օգտագործել ենք «շրջափակում-ապաշրջափակում»-ը՝ տարածաշրջանի առնչությամբ, իսկ երկկողմ հարաբերությունների դեպքում՝ «ուղեկապում-ուղեբացում»-ը:

ապաշրջափակման հարցում Ռուսաստանը ձգտում է չհակադրվելու Թուրքիայի և Իրանի ռազմավարական շահերին և, դրա հետ մեկտեղ, քաղելու դրանից տնտեսական օգուտներ: Այդ նպատակով Ռուսաստանը ակտիվորեն առաջ է մղում ԵԱՏՄ-ի և Թուրքիայի, ինչպես նաև ԵԱՏՄ-ի և Իրանի միջև տնտեսական ինտեգրման գաղափարը՝ փորձելով տարածաշրջանային ապաշրջափակումը դարձնել ԵԱՏՄ-ի ընդլայնմանը նպաստող կարևոր գործոն: Այլ խոսքով՝ Ռուսաստանը ձգտում է ապաշրջափակման հարցը կապակցելու ԵԱՏՄ-ի ընդլայնման անհրաժեշտության հետ:

Մյուս կողմից՝ Արևմուտք- Ռուսաստան փոխադարձ տնտեսական պատժամիջոցները և Արևմտյան շուկաներ ռուսաստանյան ապրանքների ու ընկերությունների մուտքի սահմանափակումները Ռուսաստանին դրդում են ավելի ակտիվացնելու այլ երկրների հետ առևտրատնտեսական և ներդրումային համագործակցությունը: Սա վերաբերում է գլխավորապես Չինաստանին, Հնդկաստանին, Իրանին, Թուրքիային և Մերձավոր Արևելքի երկրներին: Կարծում ենք՝ Ռուսաստանը շարունակելու է ջանքեր գործադրել ԵԱՏՄ-ին Իրանի անդամակցությունն ապահովելու և Իրանի հետ բազմոլորտ տնտեսական համագործակցությունը խորացնելու համար: Ընդ որում, Ռուսաստանի և Իրանի միջև ընդհանուր ցամաքային սահման չլինելու պատճառով ռուս-իրանական առևտրաշրջանառության մեծացումից օգտվելու է Ադրբեջանը (դրան է նպաստելու Ռուսաստան- Ադրբեջան- Իրան եռակողմ տրանսպորտային նախագծերի իրագործումը):

Ռուսաստանին ձեռնտու է Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղեբացման իրագործումը հենց իր միջնորդությամբ: Ավելին. դա նաև իր անվտանգային ծառայություններին հնարավորություն կտա վերահսկելու միջսահմանային ենթակառուցվածքների շահագործումը: Իսկ եթե հաշվի առնենք, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների բացման դեպքում նրանց երկկողմ առևտրաշրջանառության մաքսային ընթացակարգերը պետք է կատարվեն ըստ ԵԱՏՄ-ի ընդհանուր օրենսդրության (քանի որ ԵԱՏՄ-ին չանդամակցող պետությունների հետ առևտրում մաքսային կարգավորումները պետք է կատարվեն համաձայն ԵԱՏՄ-ի իրավական նորմերի[1]), ապա Ռուսաստանը՝ որպես ԵԱՏՄ-ի հիմնական շահառու, կստանա ավելի մեծ օգուտներ:

***Իրան:*** Իրանի ղեկավարությունը բազմիցս հայտնել է Հարավային Կովկասում տրանսպորտային ապաշրջափակման հարցում իր դիրքորոշումը: Տարածաշրջանային պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանումը Իրանը համարում է տրանսպորտային ապաշրջափակման անհրաժեշտ պայման: Իհարկե, սա, առաջին հերթին, թելադրված է այն մտավախությամբ, որ տրանսպորտային ապաշրջափակումը կարող է հանգեցնել Իրանի և Հայաստանի միջև սահմանի խախտման,

[1] Տես «Таможенный кодекс Евразийского экономического союза». Приложение № 1 к Договору о Таможенном кодексе Евразийского экономического союза (http://www.irtek.am/views/act.aspx?aid=150345):

ինչը Իրանը չի կարող թույլ տալ: Միևնույն ժամանակ, նա շահագրգռված է տարածաշրջանի պետությունների հետ տնտեսական, առևտրային և էներգետիկ համագործակցության մեջ: Դրա հետ մեկտեղ Իրանը նպատակամղված է օգտագործելու իր տարանցիկ հնարավորությունները: Օրինակ՝ նա շահագրգռված է, որ Նախիջևանն Ադրբեջանին կապող տրանսպորտային ենթակառուցվածքներն անցնեն իր տարածքով, ուստի և զգուշավորությամբ է մոտենում Ադրբեջանի տարածքով «Հյուսիս–Հարավ» բազմաձև տրանսպորտային միջանցքի ստեղծման գաղափարին: Դրա հետ մեկտեղ ակներև է Հայաստանում «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու կառուցմանը իրանական ընկերությունների մասնակցությունը[2]: Այդկերպ Իրանը միջազգային հանրությանը ցուցադրում է, որ կարևորում է Հայաստանի տրանսպորտային հնարավորությունները և Հայաստանի հետ տրանսպորտային կապվածության ամրապնդումը:

Ապաշրջափակումը կարող է հանգեցնել տարածաշրջանի պետությունների միջև տնտեսական համագործակցության և առևտրային կապերի ընդլայնմանը, ինչից Իրանը, անշուշտ, կշահի, քանի որ Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ու տնտեսական կապերի վերականգնումը կնվազեցնի պատերազմի վերսկսման հավանականությունը: Հետևաբար Իրանին ձեռնտու է Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ու տնտեսական կապերի շուտափույթ վերականգնումը: Ապաշրջափակումն իր տնտեսական շահերին չհակադրելու տրամաբանությամբ Իրանը ձգտում է Հարավային Կովկասի տնտեսական ու քաղաքական տեսլականը համաձայնեցնելու Ռուսաստանի և Թուրքիայի հետ: Դրանով պայմանավորված՝ Իրանն ստացել է դիտորդի կարգավիճակ ԵԱՏՄ-ում[3] և հայտարարել է «3+3» ձևաչափով Հարավային Կովկասի երկրների միջև տարաձայնությունները հարթելու անհրաժեշտության մասին[4]: Այդկերպ Իրանը ձգտում է նաև տնտեսական համագործակցությամբ շահագրգռելու Ռուսաստանին: Երկու պետությունների միջև նույնիսկ կնքվել է համընդգրկուն ռազմավարական գործընկերության պայմանագիր[5]: Այդ պայմանագիրը երկկողմ համագործակցությունը բարձրացնում է միանգամայն նոր մակարդակի և այլ նպատակների հետ մեկտեղ ուղղված է համադասելու Ռուսաստանի և Իրանի

[2] Տես «Տնտեսական կապերի առումով Հայաստանի ու Իրանի միջև կա չօգտագործված հսկայական ներուժ. Ալիռեզա Նազիֆ»: «Արմենպրես», 7 նոյեմբերի 2024 թ. (https://armenpress.am/hy/article/1204262):

[3] Տես «Иран стал наблюдателем в Евразийском экономическом союзе». Евразийская экономическая комиссия, 26.12.2024 (https://eec.eaeunion.org/news/speech/iran-stal-nablyudatelem-v-evraziyskom-ekonomicheskom-soyuze/):

[4] Տես «Посол Ирана назвал формат «3+3» полезнейшим для решения вопросов Южного Кавказа». “Factor”, 27.03.2024 (https://factor.am/ru/53128.html):

[5] Տես «Договор о всеобъемлющем стратегическом партнёрстве между Российской Федерацией и Исламской Республикой Иран», 17 января 2025 г. (http://www.kremlin.ru/supplement/6258):

քայլերը Հարավային Կովկասում: Կարելի է պնդել, որ Ռուսաստանն ու Իրանը նպատակ ունեն համատեղ ջանքերով ուժեղացնել իրենց տնտեսական և քաղաքական դիրքերը Հարավային Կովկասում, հատկապես՝ ԵԱՏՄ-ին Իրանի հնարավոր անդամակցության դեպքում:

***Թուրքիա և Ադրբեջան:*** Երկու պետություններն էլ հանդես են գալիս փոխադարձ տրանսպորտային և էներգետիկ կապի զարգացման օգտին: Թուրքիան նպատակադրվել է դառնալու խոշոր տրանսպորտային և էներգետիկ հանգույց[6]: Դրան հասնելու քայլերից մեկն այն է, որ Թուրքիան, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը և ակտիվացնելով դիվանագիտական կապերը, ձգտում է իր տնտեսական շահերը համաձայնեցնելու ազդեցիկ միջազգային դերակատարների հետ: Ընդսմին վերջին տարիներին Հարավային Կովկասում նրա տնտեսական ու քաղաքական ազդեցության մեծացումը ուղղակիորեն բխում է հենց այդ նախաձեռնությունից: Այս առումով տրանսպորտային և էներգետիկ հանգույց դառնալու Թուրքիայի ձգտումից են բխում Հայաստանի ու Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղեբացման գործին Թուրքիայի ակտիվ մասնակցությունը և Հայաստանի տարածքում տրանսպորտային միջանցքի ստեղծումը:

Մյուս կողմից՝ վերջին տարիներին նշանակալիորեն ակտիվացել է Հարավային Կովկասում Թուրքիայի և Ռուսաստանի քաղաքական համագործակցությունը, որն ամրապնդվում է խոշոր տնտեսական նախագծերի իրագործմամբ: Դրանում էական դեր են խաղացել էներգետիկ կապերը (նշենք, օրինակ, «Թուրքական հոսք» գազամուղի գործարկումը և Akkuyu ԱԷԿ-ի կառուցման նախագիծը[7]): Թուրքիան և Ռուսաստանը ընդլայնում են իրենց համագործակցությունը նաև ռազմատեխնիկական ոլորտում: Ռուսաստանն այդկերպ ցանկանում է Թուրքիայից ստանալ երաշխիքներ, որ իր դեմ հնարավոր ռազմական գործողությունների և դեպի Եվրոպա առևտրային ուղիների արգելափակման դեպքում Թուրքիան չի միանա այդ նախաձեռնություններին:

Ի հավելումն դրա՝ 2022 թ. փետրվարին Ռուսաստանի և Ադրբեջանի միջև կնքվել է երկկողմ դաշնակցային փոխգործության ռազմավարական պայմանագիր[8]: Սա միանշանակ կերպով ամրապնդում է երկկողմ համագործակցությունը քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ առևտրատնտեսական

[6] Տես *K. Elgendy.* Turkey’s energy hub ambitions have new momentum after Assad’s fall. “Chatham House” 17 December 2024 (https://www.chathamhouse.org/2024/12/turkeys-energy-hub-ambitions-have-new-momentum-after-assads-fall):

[7] Տես *С. Тарвердян.* Лавров обсудил в Анкаре реализацию проекта АЭС «Аккую»: «Есть серьезный задел для новых проектов в атомной энергетике». «Мир 24», 24.02.2025 (https://mir24.tv/news/16626349/lavrov-obsudil-v-ankare-realizaciyu-proekta-aes-akkuyu:-est-sereznyj-zadel-dlya-novyh-proektov-v-atomnoj-energetike):

[8] Տես «Декларация о союзническом взаимодействии между Российской Федерацией и Азербайджанской Республикой», 22 февраля 2022 г. (http://kremlin.ru/supplement/5777):

հարաբերությունների խորացումը Ադրբեջանն օգտագործում է տրանսպորտային ապաշրջափակման հարցում Հայաստանի նկատմամբ քաղաքական ճնշումներ գործադրելու համար: Ադրբեջանը նաև չի թաքցնում, որ կշարունակի տարածաշրջանում վարել տնտեսական զավթողագործական քաղաքականություն նաև Հայաստանի հետ տրանսպորտային ուղեբացումից ու սահմանների բացումից հետո՝ այդպիսով նպատակ ունենալով զգալի կերպով նվազեցնել Հայաստանի տնտեսական առաջընթացի հնարավորությունները և միջտարածաշրջանային բեռնափոխադրումներում նրա տրանսպորտային դերի մեծացումը:

***Վրաստան:*** Հայաստանի և Ադրբեջանի ուղեբացման շնորհիվ Հարավային Կովկասում կբացվի ևս մեկ միջտարածաշրջանային տրանսպորտային երթուղի՝ Հայաստանի տարածքով: Սա միանշանակ կերպով կբազմազանեցնի տարածաշրջանում տրանսպորտային երթուղիները, ինչը կնպաստի տարածաշրջանով բեռնափոխադրումների աշխարհագրության ընդլայնմանը: Այլ խոսքով՝ բեռնափոխադրումների մի մասը, որն այժմ կատարվում է Վրաստանի տարածքով, կտեղափոխվի Հայաստանի տարածք: Մյուս կողմից՝ եթե հաշվի առնենք ԱՄՆ–Վրաստան և ԵՄ–Վրաստան հարաբերությունների վերջին վատթարացումը, կարելի է պնդել, որ Վրաստանը փորձելու է վերականգնել ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ նախկին հարաբերությունները և դրանով պահպանել իր տարածաշրջանային դերը:

Վրաստանի շահերից չի բխում նաև այն հանգամանքը, որ հակառակ կանխատեսումների՝ Բաքու- Թբիլիսի- Կարս երկաթգիծը միջտարածաշրջանային բեռնափոխադրումներում չունի այն դերը, որն սպասվում էր, ուստի նա փորձելու է ակտիվացնել Թուրքիայի և Ադրբեջանի հետ համագործակցությունը տրանսպորտային ոլորտում:

### Հայաստանի դիրքորոշումը տրանսպորտային ապաշրջափակման գործում

Հայաստանի ղեկավարությունը տրամադրված է հասնելու Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղեբացման: Ընդսմին Հայաստանի ղեկավարությունը դա դիտում է միայն Հայաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանման պայմանով: Մյուս կողմից՝ Հայաստանը տրանսպորտային ապաշրջափակման հարցը դիտում է որպես Հայաստան–Ադրբեջան «Խաղաղության պայմանագրի» անբաժանելի մասի: Ընդ որում, Հայաստանի ղեկավարությունը ձգտում է «Խաղաղության պայմանագիրը» կնքելու այնպիսի հաստատուն միջազգային անվտանգային երաշխիքների պայմաններում, որոնք կվերաբերեն նաև սահմանների և տրանսպորտային ապաշրջափակման, բեռնափոխադրումների և քաղաքացիների տեղաշարժի անվտանգության ապահովմանը: Այդ երաշխիքները Հայաստանի ղեկավարությունն ակնկալում է ստանալ ազդեցիկ միջազգային դերակատարներից, առաջին հերթին՝ ԱՄՆ-ից և ԵՄ-ից: Ընդսմին այդ երաշխիքները հատկապես անհրաժեշտ են հայ-ադրբեջանական փոխադարձ

անվստահության մթնոլորտում հարաբերությունների կարգավորման սկզբնական փուլերում:

Ըստ այդմ Հայաստանի ղեկավարությունն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

1. միջազգային հանրությանը համոզել, որ տրանսպորտային ապաշրջափակումը հնարավոր է միայն Հայաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանմամբ,
2. հասնել տրանսպորտային ապաշրջափակման անհրաժեշտության միջազգային կարևորմանը,
3. միջազգային հանրությանը հիմնավոր կերպով ներկայացնել, որ Հարավային Կովկասում տրանսպորտային ապաշրջափակումը տարածաշրջանում խաղաղություն հաստատելու անհրաժեշտ պայման է և միջազգային տրանսպորտային երթուղիներին Հարավային Կովկասի ինտեգրման կարևոր գործոն:

Նշված նպատակներին հասնելու համար ՀՀ ղեկավարությունը մտադիր է ձեռք բերելու Արևմտյան գործընկերների քաղաքական աջակցությունը: Դրան կարող է նպաստել ԵՄ-ին ՀՀ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագիծը[9]: Այս քայլով ՀՀ Կառավարությունն ամրագրում է ԵՄ-ին հերևողական ինտեգրման իր մտադրությունը, թեև միջնաժամկետ հեռանկարում ԵՄ-ին ՀՀ անդամակցությունը իրատեսական չէ: Ընդսմին կարևոր նշանակություն ունի Հայաստան–ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի լիարժեք իրացումը: Միևնույն ժամանակ, եթե այդ համաձայնագիրը ամբողջությամբ չիրագործվի, ապա դա կհանգեցնի Հայաստան–ԵՄ հարաբերությունների վատթարացման քաղաքական ռիսկերի մեծացման:

Ինչ վերաբերում է Հայաստան–ԱՄՆ հարաբերություններին, ապա Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև ստորագրվել է Ռազմավարական գործընկերության կանոնադրությունը[10]: Իհարկե, դա ավելի բարձր մակարդակի է տեղափոխում երկկողմ հարաբերությունները, սակայն դրա առավելագույն դրական տնտեսական էֆեկտը կլինի տարածաշրջանային ապաշրջափակման դեպքում:

Դրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ Թրամփի արտաքին քաղաքականությունն իրագործվում է «Ամերիկան դարձնել կրկին հզոր» կարգախոսով: Այդ քաղաքականության շրջանակներում կարևոր միջազգային տրանսպորտային հանգույցների նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակով ԱՄՆ-ը ձգտում է այդպիսի հանգույցները զերծ պահելու հատկապես

[9] Տես «Կառավարությունը հավանություն տվեց ԵՄ-ին ՀՀ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագծին»: «Ազատություն Ռադիոկայան», 09.01.2025 (https://www.azatutyun.am/a/33269403.html):

[10] Տես «Վաշինգտոնում կայացել է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև Ռազմավարական գործընկերության կանոնադրության ստորագրումը», 14 հունվարի 2025 թ. (https://www.mfa.am/hy/press-releases/2025/01/14/ARM-US-Charter/13032):

Չինաստանի վերահսկողությունից և նույնիսկ օգտագործումից: Եթե այդ քաղաքականությունը շարունակվի, ապա ԱՄՆ-ի ուշադրության դաշտում կհայտնվեն նաև Հարավային Կովկաս–Կենտրոնական Ասիա–Չինաստան և հակառակ ուղղությամբ տրանսպորտային երթուղիները, որոնց շրջանակում է նաև Հայաստան–Ադրբեջան տրանսպորտային կապը: Սա նախապայմաններ կստեղծի Հայաստան- ԱՄՆ երկխոսության շրջանակների ընդլայնման համար: Այնուամենայնիվ, Հարավային Կովկասում տրանսպորտային ապաշրջափակման հարցում ԱՄՆ-ի ակտիվությունն ու միջնորդությունը հիմնականում կախված կլինեն ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև ձեռք բերված հարավկովկասյան պայմանավորվածություններից:

## Եզրակացություն

Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղեբացումը նշանակալի ազդեցություն է ունենալու Հարավային Կովկասի տնտեսական համայնապատկերի և միջազգային տրանսպորտային բեռնափոխադրումներում տարածաշրջանի դերի վրա: Տրանսպորտային ապաշրջափակման իրագործումը առաջին հերթին կապված է տարածաշրջանում անմիջականորեն ներգրավված ուժային կենտրոնների դիրքորոշման հետ:

Ըստ այդմ տրանսպորտային ապաշրջափակման համար նպատակահարմար է ստանալ ուժային կենտրոնների քաղաքական աջակցությունը, որը պետք է արտացոլվի ոչ թե քաղաքական հայտարարություններով, այլ Հայաստանի, մի կողմից, և Թուրքիայի ու Ադրբեջանի, մյուս կողմից, հարաբերությունների կարգավորման գործում միջնորդության հարցում քաղաքական վճռականությամբ: Դրան հասնելու համար նպատակահարմար է այդ երկրների հետ հարաբերությունների կարգավորման հարցում ապավինել ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջնորդական ջանքերին: Ավելին. անվտանգային ոլորտում այդ ուժային կենտրոնների հետ Հայաստանի համագործակցության ընդլայնումն ստեղծելու է նախադրյալներ մեր և հարևան երկու պետությունների միջև հարաբերությունների կարգավորման հարցում ԱՄՆ-ի և ԵՄ-ի դերի ամրապնդման համար:

ՀՀ Կառավարությունն ամեն կերպ ձգտում է միջազգային հարթակներում հիմնավորելու տրանսպորտային ապաշրջափակման կարևորությունը պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պահպանմամբ՝ որպես հետագայում տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղության պայմանի: Այս առումով, Հայաստանի ղեկավարությունը կարևորում է հատկապես ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջնորդությունը տրանսպորտային ապաշրջափակման հարցում:

Ռուսաստանն ընդհանուր առմամբ կողմ է Հարավային Կովկասի տրանսպորտային ապաշրջափակմանը: Միևնույն ժամանակ, Իրանը հանդես է գալիս Հարավային Կովկասի երկրների սահմանների անփոփոխության օգտին: Թուրքիան և Ադրբեջանը նպատակ ունեն ամեն գնով հասնել ՀՀ տարածքով տրանսպորտային միջանցքի բացմանը՝ այդ թվում Հայաստանի

ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը վնասելու հաշվին: Վրաստանը դիտարկում է տարածաշրջանի տրանսպորտային ապաշրջափակման հնարավորությունը՝ փորձելով այդ դեպքում էլ պահպանել իր տարածաշրջանային դերը:

## ПОЗИЦИИ ГОСУДАРСТВ ЮЖНОГО КАВКАЗА И НЕПОСРЕДСТВЕННО ВОВЛЕЧЕННЫХ ТАМ ЦЕНТРОВ СИЛЫ В ВОПРОСЕ ТРАНСПОРТНОГО ДЕБЛОКИРОВАНИЯ РЕГИОНА

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Транспортное деблокирование между Арменией и Азербайджаном существенным образом скажется на экономической обстановке на Южном Кавказе и роли региона в международных транспортных грузоперевозках. Решение данной проблемы во многом определяется позицией центров силы, непосредственно вовлеченных в региональные процессы. При этом политическая поддержка центров силы должна быть выражена не посредством заявлений, а их политической волей и решимостью в вопросе посредничества в регулировании отношений между Арменией, с одной стороны, и Турцией и Азербайджаном, с другой. В этом плане представляется целесообразным опираться на посреднические усилия США и ЕС. Вместе с тем расширение сотрудничества Армении с этими центрами силы создаст предпосылки для укрепления региональной архитектуры безопасности путем обеспечения нормализации отношений между РА и двумя соседними государствами.

Правительство РА предпринимает усилия по обоснованию на международных площадках важности транспортного деблокирования с сохранением территориальной целостности и суверенитета государств как условия установления долгосрочного мира в регионе.

Россия как центр силы, традиционно имеющий жизненно важные интересы на Южном Кавказе, в целом выступает за транспортное деблокирование региона. Иран также выступает за реализацию этой инициативы при условии сохранения существующих государственных границ в регионе. Между тем Турция и Азербайджан стремятся любой ценой добиться открытия транспортного коридора по территории Армении, в том числе – за счет нарушения ее суверенитета и территориальной целостности. Грузия рассматривает возможность транспортной разблокировки региона, пытаясь и в этом случае сохранить свою роль в регионе.

# STANCES OF THE SOUTH CAUCASUS STATES AND THE CENTERS OF POWER BEING DIRECTLY INVOLVED THERE ON THE ISSUE OF UNBLOCKING TRANSPORT LINKS OF THE REGION

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, Strategic Gaming and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

Unblocking transport links between Armenia and Azerbaijan will significantly affect the economic situation in the South Caucasus and the role of the region in international freight transportation. The solution to this problem is largely determined by the stance of the centers of power, which are directly involved in regional processes. At the same time, political support for the centers of power should be expressed not via statements, but by their political will and resoluteness in the matter of mediation in regulating relations between Armenia, on the one hand, and Turkey and Azerbaijan, on the other. In this regard, it seems appropriate to rely on the mediation efforts of the United States and the EU. At the same time, expanding cooperation between Armenia and those centers of power will create prerequisites for strengthening the regional security architecture by ensuring the normalization of relations between the Republic of Armenia and two neighboring states.

The Government of the Republic of Armenia is initiating efforts to substantiate on international platforms the importance of unblocking transport links while preserving the territorial integrity and sovereignty of states as a condition for establishing long-term peace in the region.

Russia, as a center of power that traditionally has vital interests in the South Caucasus, generally advocates unblocking transport links of the region. Iran also stands for the implementation of this initiative, subject to the preservation of existing state borders in the region. Meanwhile, Turkey and Azerbaijan strive at any cost to achieve the opening of a transport corridor via the territory of Armenia, including at the expense of violating its sovereignty and territorial integrity. Georgia is considering the possibility of unblocking transport links in the region, trying in this case as well to maintain its role there.

DOI: 10.61760/18290108-dhh.25.1-43

# «ՀՅՈՒՍԻՍ–ՀԱՐԱՎ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ*

*Մ. Հ. ԴԵԹԼՈՖՖ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*
*ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ՏՌՎԿ գիտնական-վերլուծաբան,*
*ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ*



## Ներածություն

Տրանսպորտային միջանցքների հայեցակարգը կարևոր դեր է խաղում տնտեսության զարգացման գործում, քանի որ յուրաքանչյուր պետության ազգային տնտեսության զարգացման կարևոր խթաններից մեկը լոգիստիկ համակարգն է: Տրանսպորտային միջանցքը, ամենալայն իմաստով, սահմանվում է որպես տրանսպորտային երթուղիների նախանշված ցանց, որը ներառում է ավտոճանապարհներ, երկաթուղի, ներքին փոխաբեռնման կետեր և (կամ) սահմանային անցակետեր: Միջանցքը սովորաբար ստեղծվում է տարանցիկ առևտուրը և բեռնափոխադրումները հեշտացնելու նպատակով, որպեսզի մաքսային ծառայությունը և այլ վերահսկող մարմիններ կարողանան արդյունավետ կերպով կատարել իրենց վերահսկողական գործառույթները տարբեր շահագրգիռ դերակատարների նկատմամբ[1]:

Տրանսպորտային միջանցքները հատկապես կարևոր են դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների համար, ինչպիսին Հայաստանն է: 2019 թ. դեկտեմբերի 5-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ «Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների գործողությունների՝ 2014–2024 թթ. տասնամյակի համար Վիեննայի ծրագրի» իրագործման բարձր մակարդակի միջնաժամկետ վերանայման վերաբերյալ 74/15 բանաձևով առաջարկվում էր, որ նման պետությունները առևտրի և տարանցիկ բեռնափոխադրումների բարելավման նպատակով դիտարկեն միջանցքային մոտեցումը[2]: Այս համատեքստում միջազգային տրանսպորտային միջանցքներին ինտեգրումը Հա-

* Հոդվածն ստացվել է 03.03.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 07.05.2025:

[1] Տես “Report on best practices for effective transit transport corridor development and management”. UN-OHRLLS, 2020, P. 13 (https://www.un.org/ohrlls/sites/www.un.org.ohrlls/files/lldcs_publications/corridor-report-_-final-_un-ohrlls_28may2020.pdf):

[2] Տես “Political Declaration of the High-Level Midterm Review on the Implementation of the Vienna Programme of Action for Landlocked Developing Countries for the Decade 2014–2024”. United Nations General Assembly, Resolutions of the 74th Session, No. A/RES/74/15, 5 December 2019 (https://digitallibrary.un.org/record/3838936?ln=ru&v=pdf):

յաստանին հնարավորություն կտա խթանելու իր տնտեսական զարգացումը և կապվելու միջազգային շուկաների հետ, ինչը կարող է էապես մեծացնել առևտրի ծավալները, ներդրումները և տնտեսական աճը: Այսպիսով՝ Հայաստանի տնտեսական անվտանգության համար էական է տնտեսության կայունության ապահովումը շնորհիվ միջազգային տարանցիկ հնարավորությունների օգտագործման:

Ուստի սույն հոդվածում մենք կուսումնասիրենք «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը (ՄՏՄ)՝ ներկայացնելով դրա տարածաշրջանային նշանակությունը, զարգացման նախագծերի առանձնահատկությունները և այդ նախագծերին պետությունների, մասնավորապես՝ Հայաստանի, մասնակցությունն ու ինտեգրման հնարավորությունները՝ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից:

## «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը՝ որպես բազմատեսակ փոխադրումների եվրասիական առանցք

21-րդ դարում տրանսպորտային միջանցքները դարձել են ոչ միայն տարանցիկ փոխադրումների օբյեկտ, այլև աշխարհաքաղաքական մրցակցության առանցք: Այս համատեքստում «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքն առանձնանում է իր աշխարհատնտեսական նշանակությամբ՝ լինելով Եվրասիայի տարանցիկ փոխադրումների բազմաֆունկցիոնալ առանցք:

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն Սանկտ Պետերբուրգից մինչև Մումբայի (Բոմբեյ) նավահանգիստ ուղևորների և բեռների փոխադրման բազմատեսակ (մուլտիմոդալ) երթուղի է՝ 7200 կմ ընդհանուր երկարությամբ, որը ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային և գետային երթուղիներ: Այն ստեղծվել է Հնդկաստանից, Իրանից և Պարսից ծոցի այլ երկրներից դեպի Ռուսաստանի տարածք (Կասպից ծովով) ու հետագայում Հյուսիսային և Արևմտյան Եվրոպա տարանցիկ բեռնափոխադրումներ կատարելու համար: Համաձայն մինչև 2030 թ. Ռուսաստանի Դաշնության տրանսպորտային և երկաթուղային տրանսպորտի զարգացման ռազմավարությունների, «Ռուսաստանի Դաշնության տրանսպորտային համակարգի զարգացում» դաշնային նպատակային ծրագրի՝ այս ՄՏՄ զարգացումը Ռուսաստանի Դաշնության տրանսպորտային քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է: «Սույն նախագծի իրավական հիմքը «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի մասին միջկառավարական համաձայնագիրն է, որն ստորագրել են Ռուսաստանը, Հնդկաստանը և Իրանը 2000 թ. սեպտեմբերի 12-ին Սանկտ Պետերբուրգում կայացած Տրանսպորտի հարցերով 2-րդ միջազգային եվրասիական համաժողովի ընթացքում: Համաձայնագրի դեպոզիտարը Իրանն է: Առ 2002 թ. մայիս Համաձայնագիրը վավերացրել էին բոլոր մասնակիցները, և այն մտել է ուժի մեջ»[3]:

[3] Տես «Международный транспортный коридор «Север - Юг» (справка)», 01.11.2016 (https://www.mid.ru/ru/foreign_policy/economic_diplomacy/1537456/):

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն Եվրասիայի տրանսպորտային համակարգի առանցքային տարրն է, որի նպատակն է ստեղծել այլընտրանք Սուեզի ջրանցքին՝ կրճատելով Ռուսաստանից Հնդկաստան ապրանքների փոխադրման երթուղին, ինչն առաջացրել է շահագրգիռ պետությունների մեծ հետաքրքրությունը և ինչի շնորհիվ հետագայում Համաձայնագրին միացել են Բելառուսը, Ղազախստանը, Օմանը, Տաջիկստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Սիրիան, Բուլղարիան, Ղրղզստանը, Թուրքիան և Ուկրաինան[4]:

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն ունի երեք հիմնական երթուղիներ, որոնք տարբերվում են երկարությամբ, տրանսպորտային փոխադրման եղանակով, հիմնական և օժանդակ ենթակառուցվածքների զարգացման մակարդակով[5].

1. ***«Արևմտյան»*** (ցամաքային) երթուղին անցնում է Կասպից ծովի արևմտյան ափի երկայնքով՝ Ռուսաստանով և Ադրբեջանով, ու միանում է Հարավային Կովկասի երկաթուղային և ճանապարհային ցանցերին (երկաթուղային միացում Ռուսաստանի տարածքով – երկաթուղային սահմանային անցում Աստարա (Ադրբեջան) – Աստարա (Իրան)՝ Իրանի տարածքով հետագա փոխադրումների համար փոխաբեռնումով ավտոմոբիլային տրանսպորտի): Այս դեպքում դիտարկվում է նաև Ադրբեջանի և Հայաստանի տարածքով Ջուլֆայի սահմանային անցակետով Իրան մուտք գործելու սցենարը: Կարող են փոխադրվել նաև բեռներ Վրաստանից և Հայաստանից:

2. ***«Արևելյան»*** (ցամաքային) երթուղին անցնում է Կասպից ծովի արևելյան ափի երկայնքով՝ Ղազախստանով և Թուրքմենստանով (Ռուսաստան – Ղազախստան–Թուրքմենստան–Իրան՝ երկաթուղային միացում դեպի իրանական երկաթուղային ցանց Սարախս (Թուրքմենստան) – Սարախս (Իրան) կամ Ակյայլա (Թուրքմենստան) – Ինչե Բուրուն (Իրան) անցումներով):

3. ***«Անդրկասպյան»*** (ցամաքային և ծովային) երթուղին ընդգրկում է լաստանավային և ֆիդերային բեռնարկղային (կոնտեյներային) փոխադրումներ Կասպից ծովով (բազմատեսակ երթուղի Կասպից ծովով՝ Կասպից ծովի ավազանում Ռուսաստանի (Աստրախան, Օլյա, Մախաչկալա) և Իրանի հյուսիսային նավահանգիստների, ինչպես նաև Իրանի ճանապարհային և երկաթուղային ենթակառուցվածքների օգտագործմամբ):

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ բոլոր նշված երթուղիներն ուղղված են դեպի Իրանի հարավային նավահանգիստներ (Բանդար Աբբաս, Չաբահար)՝ բեռների հետագա առաքմամբ Հնդկաստան կամ Պարսից ծոցի երկրներ: Այն ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային և ջրային տրանսպորտի ենթակառուցվածքներ, Կասպից ծովի և Պարսից ծոցի նավահանգիստներ, ճանապարհային և երկաթուղային անցակետեր, ինչպես նաև միջազգային օդանավակայաններ՝ հնարավորություն տալով ընտրելու առաքման երեք երթուղիներից մեկը:

---

[4] Տես նույն տեղում:

[5] Տես *Evgeny Y. Vinokurov, Arman Ahunbaev, Alexander I. Zaboev.* International North – South Transport Corridor: Boosting Russia's "pivot to the South" and Trans-Eurasian connectivity. "Russian Journal of Economics", 2022, Vol. 8, N 2 (https://rujec.org/article/86617/element/4/424/):

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ արևմտյան երթուղով նախատեսվող այլընտրանքային ուղղություններից մեկը անցնում է Հայաստանի տարածքով[6]: Ըստ այդմ՝ Ռուսաստան – Իրան տրանսպորտային կապը կապահովվի Վրաստանի և Հայաստանի տարածքով, ինչը հնարավորություն կտա ընդլայնելու ««Հյուսիս–Հարավ» ՄՏՄ աշխարհագրությունը և ստեղծելու գործող հիմնական ուղղությունների համար մրցունակ այլընտրանք: Ծրագրի իրագործման տեսանկյունից շատ կարևոր են Հայաստանում «Հյուսիս–Հարավ» տրանսպորտային միջանցքի ավտոմայրուղու, իսկ հեռանկարում նաև Իրան – Հայաստան երկաթգծի կառուցումը, ինչպես նաև Վրաստանի տարանցիկ ճանապարհների արդիականացումը»[7]:

## «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի տարածաշրջանային նշանակությունը

Այսօր «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը համարվում է միջազգային մակարդակով հեռանկարային ու նշանակալի տրանսպորտային և լոգիստիկ նախագծերից մեկը: Դրա նկատմամբ հետաքրքրությունն առաջին հերթին պայմանավորված է այն բանով, որ միջանցքով նախատեսվում է բազմազանեցնել Հյուսիսային Եվրոպան Ասիայի հետ կապող տրանսպորտային երթուղիները և այդպիսով անմիջական մրցակցության մեջ մտնել «ՏՐԱՍԵԿԱ» (*TRACECA, Transport Corridor Europe – Caucasus – Asia*) նախագծի հետ, որի աշխարհաքաղաքական նպատակն է ձևավորել Ռուսաստանը շրջանցող տրանսպորտային ուղիներ[*]:

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ հիմնական առավելությունը այլ երթուղիների նկատմամբ, ներառյալ՝ Սուեզի ջրանցքով անցնող ծովային երթուղին, փոխադրումների համար պահանջվող ժամանակի և տրանսպորտային ծախսերի զգալի կրճատումն է: Այսպես. Սուեզի ջրանցքով անցնող ավանդական ճանապարհով Մումբայից (Հնդկաստան) Սանկտ Պետերբուրգ բեռների փոխադրման ժամկետը 30-ից 45 օր է, իսկ «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ ցամաքային ճանապարհով Մումբայից Ռուսաստան բեռների առաքման տևողությունը կարող է տատանվել 15-ից մինչև 24 օր սահմաններում: Ղազախստանով և Թուրքմենստանով անցնող միջանցքի արևելյան ճյուղով ապրանքների առաքումը պահանջվող ժամանակը նվազեցնում է մինչև 18 օր: Իրանում Աստարա – Ռաշտ երկաթուղային հատվածը շահագործման հանձնելուց

---

[6] Տես «Հյուսիս–Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի երեք զուգահեռ ուղղությունները և Հայաստանը»: «Լույս» հիմնադրամ, 01.09.2023, էջ 4 (https://www.luys.am/img/artpic/small/141b851ab8a1daea1d0a08-ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ.pdf):

[7] Տես *Сергей Жарков.* Коридор «Север – Юг» – проблемы и перспективы. "NC", 23.03.2019 (http://newcaucasus.com/politics/17400-koridor-sever-yug-problemyi-i-perspektivyi.html):

[*] Եվրոպա – Կովկաս – Ասիա այս տրանսպորտային միջանցքը միջազգային տրանսպորտային ծրագիր է, որում ընդգրկված են Եվրոպական Միությունը և Արևելյան Եվրոպայի, Կովկասի ու Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների 13 անդամ պետություններ:

հետո «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ով բեռների առաքման ժամանակը է՛լ ավելի կկրճատվի[8]: Տրանսպորտի ոլորտում խոշոր ենթակառուցվածքային նախագծերի իրագործումը ոչ միայն նվազեցնում է փոխադրումների ճանապարհային ժամանակը և գործառնական ծախսերը, այլև անուղղակի ազդեցությունների միջոցով նպաստում է կայուն զարգացմանը:

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ զարգացումը, բացի առևտրի ծավալների ավելացումից, նպաստում է տարանցիկ ճանապարհի երկայնքով արդյունաբերական համալիրների (պարկերի), հատուկ տնտեսական գոտիների ստեղծմանը, ինչպես նաև ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման ոլորտում համագործակցության զարգացմանը և նոր արտադրական ու լոգիստիկ շղթաների կառուցմանը ԵԱՏՄ անդամ և Պարսից ծոցի ու Հնդկական օվկիանոսի զարգացող խոշոր պետությունների միջև, ներառյալ՝ Իրանը և Հնդկաստանը: Վերջին տարիներին «Հյուսիս–Հարավ» առանցքի երկայնքով տրանսպորտային ուղիների կարևորության մեծացման խթան է Մեծ Եվրասիայի հայեցակարգի իրագործման շրջանակներում ԵԱՏՄ ակտիվ գործակցությունը Իրանի և Հնդկաստանի հետ, ինչպես նաև Թուրքմենստանի[9] և տարածաշրջանի այլ պետությունների ակտիվացումը տարանցիկ և բազմատեսակ միջանցքների զարգացման գործում: 2018 թ. մայիսին ԵԱՏՄ-ն Իրանի հետ ստորագրել է ժամանակավոր համաձայնագիր ազատ առևտրի գոտու ձևավորման վերաբերյալ, իսկ 2023 թ. դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում ստորագրվել է «Ազատ առևտրի համաձայնագիր» Եվրասիական տնտեսական միության ու նրա անդամ պետությունների, մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից[10]: Համաձայնագրում հաշվի է առնվել, թե որքան են ԵԱՏՄ անդամ պետությունների և Իրանի կառավարությունները կարևորում «Հյուսիս–Հարավ» տնտեսական գոտու զարգացումը և հատուկ ուշադրություն է դարձվել տրանսպորտալոգիստիկ լուծումներին և տարանցիկ փոխադրումների հարցերին: Բանակցություններ են տեղի ունենում նաև ԵԱՏՄ-ի և Հնդկաստանի միջև ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագրի կնքման հարցով[11]:

[8] Տես *Владимир Чушкин.* Развитие Международного транспортного коридора «Север – Юг». Фонд стратегической культуры, 18.03.2023 (https://www.fondsk.ru/news/2023/03/18/razvitie-mezhdunarodnogo-transportnogo-koridora-sever-yug.html):

[9] Տես «РФ, Казахстан. Иран и Туркмения договорились развивать восточный маршрут МТК Север – Юг». «ТАСС», 19.07.2024 (https://tass.ru/ekonomika/21405565):

[10] Տես «ԵԱՏՄ-ն և Իրանը ստեղծում են ազատ առևտրի լիաձևաչափ գոտի»: Եվրասիական տնտեսական հանձնաժողով, 25.12.2023 (https://eec.eaeunion.org/hy/news/eaes-i-iran-sozdayut-polnoformatnuyu-zonu-svobodnoy-torgovli/):

[11] Տես «ԵԱՏՄ-ն շարունակում է երկխոսությունը Հնդկաստանի հետ ազատ առևտրի գոտու ձևավորման շուրջ»: Եվրասիական տնտեսական հանձնաժողով, 22.09.2023 (https://eec.eaeunion.org/hy/news/eaes-prodolzhaet-dialog-po-formirovaniyu-zony-svobodnoy-torgovli-s-indiey/):

2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից, ՌԴ-ի դեմ միջազգային պատժամիջոցների կիրառումից հետո, ինչպես նաև սևծովյան տրանսպորտային ուղիներով բեռների տեղափոխման բարդացման պայմաններում Ռուսաստանի Դաշնությունում ու ԵԱՏՄ անդամ այլ պետություններում ապրանքների առաքման ավանդական տրանսպորտային և լոգիստիկ շղթաների համար ծագեցին լուրջ մարտահրավերներ: Զգալիորեն դժվարացավ փոխադրումների արևմտյան ուղղության օգտագործումը եվրոպական երկրների հետ ցամաքային միջազգային ավտոմոբիլային անցակետերով, ինչպես նաև Բալթյան ավազանի ծովային նավահանգիստներով, որոնք միասին ապահովում էին արտաքին տնտեսական հարաբերությունները Եվրոպայի, Հյուսիսային ու Լատինական Ամերիկայի և Ասիայի պետությունների միջև, ինչի պատճառով բեռնափոխադրողները և տրանսպորտային լոգիստիկայի բիզնեսի ներկայացուցիչները կայուն առևտրատնտեսական կապեր ապահովելու համար սկսեցին որոնել բեռների արտահանման ու ներմուծման նոր՝ այլընտրանքային, ուղիներ:

Ներկայումս «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ դերը նկատելիորեն աճում է ԵԱՏՄ մի շարք պետությունների արտաքին առևտրի վերակողմնորոշման ու «նոր լոգիստիկայի» ձևավորման համատեքստում, և այն հաջողությամբ գործում է մի շարք հատվածներում, ինչպիսիք են Ռուսաստան – Ադրբեջան, Ղազախստան – Թուրքմենստան – Իրան, ինչպես նաև այդ պետությունների ներքին հաղորդակցություններում:

Ստորև ներկայացնենք «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ աշխարհատնտեսական նշանակությունն ըստ առանցքային շահագրգիռ պետությունների շահերի:

**Հնդկաստանի** տնտեսության համընդհանրացման շրջանակում «Հյուսիս – Հարավ» ՄՏՄ-ն դիտվում է որպես դեպի Եվրասիական տարածաշրջան տանող նոր լոգիստիկ ուղի, որը հնարավորություն է տալիս ծովային երթուղիների համեմատությամբ մինչև 40 %-ով կրճատելու փոխադրման ժամանակը, ինչպես նաև խթանելու արտահանումը դեպի Ռուսաստան, Կենտրոնական Ասիա և Եվրոպա: «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն Հնդկաստանի համար միջոց է նաև նվազեցնելու կախվածությունը Սուեզի ջրանցքից՝ հնարավորություն ընձեռելով մրցակցելու նաև Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության հետ և ամրապնդելու իր դերն Ասիայում և Եվրասիայում:

**Իրանը,** լինելով տարանցիկ երկիր, կարևոր դեր է ստանձնում «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ում, որը հնարավորություն է զարգացնելու Չաբահար և Բանդար Աբբաս նավահանգիստները, ստանալու տարանցիկ վճարներ, արևմտյան պատժամիջոցների պայմաններում ռազմավարական գործիք է տնտեսական շրջափակումը թուլացնելու համար՝ միևնույն ժամանակ դառնալով Հարավային Ասիան և Հյուսիսային Եվրոպան կապող օղակ: «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ին Իրանի ակտիվ ինտեգրումը ԵԱՏՄ-ի, Հնդկաստանի և Չինաստանի հետ մերձեցման տրամաբանական քաղաքական շարունակությունն է:

**Ռուսաստանի** համար «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն ռազմավարական

առևտրային ուղի է դեպի Հնդկաստան, որը չի ենթարկվել արևմտյան պատժամիջոցների: Միջանցքը հնարավորություն է տալիս վերակազմավորելու արտահանման ուղղությունները, բազմազանեցնելու տնտեսական կապերը՝ ամրապնդելով կապն Ասիայի հետ: Ռուսաստանի և Համընդհանուր Հարավի *(Global South)* պետությունների միջև, մասնավորապես՝ Հնդկաստանի հետ, արտաքին տնտեսական հարաբերությունների արագ սերտացմամբ նախատեսվում է զարգացնել տրանսպորտային ենթակառուցվածքը և կազմակերպել բեռների առաքման նոր ուղիներ: Այս առումով հատկապես կարևորվում է «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ զարգացումը: Միջանցքի ստեղծման նախաձեռնությունն ունի երկար պատմություն, սակայն միջազգային քաղաքական մրցակցության սրումը և վերջին տարիներին սահմանված պատժամիջոցները փաստարկներ են ավելացնում Ռուսաստանի անվտանգային շահերի տեսանկյունից երթուղուն վերաբերող նախագծերի իրագործման արագացման և նորերի գործարկման օգտին:

**Ադրբեջանը** «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն դիտում է որպես տարանցիկ վճարների ստացման և ենթակառուցվածքների զարգացման հնարավորություն՝ դրանով փորձելով պահպանել տարածաշրջանային լոգիստիկ մրցակցությունում իր դիրքը և ձգտելով ամեն գնով դառնալու «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ նախագծի առանցքն ու ճարտարապետը:

**Վրաստանը**՝ որպես Սև ծով ելք ունեցող պետություն, որոշ իրավիճակներում կարող է օգտագործվել որպես ուղիղ տրանսպորտային միջանցք կամ փոխադրման տարանցիկ պետություն, քանի որ նա ունի ռազմավարական տեղադիրք, որը Կովկասն ու Ասիան կապում է Եվրոպայի հետ: Վրաստանը, զարգացնելով լոգիստիկ ենթակառուցվածքները, հնարավորություն է ստանում ավելացնելու Փոթի և Բաթումի նավահանգիստների բեռնափոխադրումների ծավալները և մեծացնելու ստանալիք տարանցիկ վճարները: Վրաստանի բյուջեի մուտքերի հիմնական մասն ապահովվում է տարանցման համար գանձված գումարների հաշվին: 2022 թ. առաջին եռամսյակում Վրաստանի տարածքով ապրանքների տեղափոխման համար գանձված գումարը կազմել է 23,2 միլիոն լարի, որը հետագայում աճել է տարանցիկ ճանապարհներից օգտվելու համար վճարը 2022 թ. հունիսի 20-ից 75 տոկոսով մեծացնելու հաշվին՝ 200 լարիից հասնելով 350-ի[12]: Այսպիսով՝ Վրաստանը շահում է որպես կայուն տարանցիկ միջավայր:

**Հայաստանի** մասնակցությունը «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ին կարող է որոշ չափով չեզոքացնել Թուրքիայի և Ադրբեջանի ձեռնարկած ուղեփակման (շրջափակման) ազդեցությունը: Որպես «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ այլընտրանքային երթուղի՝ ՀՀ-ում կառուցվող «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղին ձգվելու է Իրանի սահմանից մինչև Վրաստանի սահմանը՝ ապահովելով Հայաստանի տարանցիկ կարգավիճակը: «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ին ինտե-

[12] Տես «Վրաստանը 75 %-ով ավելացնում է բեռնատարների տարանցման վճարը. ինչպես դա կազդի հայաստանցի արտահանողի վրա: “Factor”, 15.06.2022 (https://factor.am/523029.html):

գրումը Հայաստանի համար տարանցիկ վճարների ստացման և ենթակառուցվածքների զարգացման հնարավորություն է:

Այսպիսով՝ «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն դրանում ներգրավված պետությունների համար աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական հնարավորություն է՝ դառնալու ռազմավարական միջանցքի բաղադրիչ:

## «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի զարգացման նախագծերը և ՀՀ մասնակցությունը դրանց

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ բոլոր երեք երթուղիներում ենթակառուցվածքային խոչընդոտները վերացնելու նպատակով մինչև 2030 թ. պետք է իրագործվեն կամ նախատեսվում է, որ իրագործվեն, միջազգային նշանակությամբ տրանսպորտային ենթակառուցվածքի կառուցման, վերակառուցման և արդիականացման 102 ներդրումային նախագծեր՝ 38,2 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ, որի ամենամեծ ծավալն իրացվելու է Ռուսաստանում (52 նախագիծ, ներդրումային նախագծերի ընդհանուր արժողության 34,6 %-ը (13,21 մլրդ)) և Իրանում (11 նախագիծ, ներդրումային նախագծերի ընդհանուր արժողության 33,7 %-ը (12,87 մլրդ))[13]:

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ բոլոր երթուղիների արագ գործարկման տեսանկյունից կարևոր քայլ է նախագծերի դասակարգումը 3 խմբի՝ ըստ դրանց իրագործման առաջնահերթության (գծապատկեր 1)[14]:




Գծապատկեր 1. «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ ենթակառուցվածքի զարգացման ներդրումային նախագծերի աշխարհագրությունը և բաշխումն ըստ դրանց իրագործման առաջնահերթության (մլրդ դոլար)[15]

[13] Տես *Е. Винокуров, А. Ахунбаев, А. Забоев, Н. Усманов.* Международный транспортный коридор «Север – Юг»: инвестиционные решения и мягкая инфраструктура. Доклады и рабочие документы 22/2. Алматы, Москва, 2022, с. 34, 37 (https://eabr.org/upload/iblock/a2b/EDB_2022_Report-2_INSTC_rus.pdf):

[14] Տես նույն տեղում, էջ 37:

[15] Տես «Исследование ЕАБР: Роль международного транспортного коридора «Север – Юг» существенно возрастает в условиях новой логистики». Евразийский банк развития, 26 октября 2022 (https://eabr.org/press/releases/issledovanie-eabr-rol-mezhdunarodnogo-transportnogo-koridora-sever-yug-sushchestvenno-vozrastaet-v-u/):

Հայաստանում և Վրաստանում ևս իրագործվում են մի շարք ներդրումային նախագծեր՝ նպատակաուղղված Ռուսաստանին և Հայաստանին կապող «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու զարգացմանը, ինչը ներառում է ՀՀ «Հյուսիս–Հարավ» նոր արագանցանելի* ավտոմոբիլային մայրուղու հատվածների կառուցումը, ինչպես նաև Ռազմավիրական ճանապարհի ու Վերին Լարսի միջազգային ճանապարհային անցակետի արդիականացումը: Ավանդաբար Հայաստանի դեպքում «Հյուսիս–Հարավ» մայրուղին զուգորդվում է «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ի հետ, հատկապես եթե հաշվի առնվի Հայաստանի մասնակցությունը «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ համաձայնագրին, թեև այն աշխարհագրորեն անջատված է միջանցքի արևմտյան երթուղուց: Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) վերլուծական փաստաթղթերում ևս նշվում է, որ ՀՀ տարածքում «Հյուսիս–Հարավ» ավտոճանապարհային երթուղու կառուցումը պաշտոնապես «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ զարգացման նախագծերից է: «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ զարգացման ներդրումային նախագծերի ցանկի Հայաստանի Հանրապետության ենթաբաժնում ներառված են թվով 5 ծրագրեր, որոնցից չորսը՝ ըստ առաջնահերթության առաջին խմբում (Քաջարան–Ագարակ ավտոճանապարհի կառուցում մինչև Իրանի հետ սահմանը, Գյումրի–Բավրա ճանապարհահատվածի կառուցում, Քաջարանի և Բարգուշատի թունելների կառուցում՝ Սիսիան–Քաջարան ավտոճանապարհի հատվածում), իսկ մեկը՝ երկրորդ (Երասխ–Սադարակ–Ջուլֆա–Օրդուբադ–Մեղրի–Հորադիզ երկաթուղու հայկական հատվածի կառուցում):

Վրաստանը չի ընդգրկվում «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ում որպես դրա պաշտոնական մասնակից, սակայն միջանցքի զարգացման ներդրումային նախագծերում ևս ներառված է: «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ զարգացման ներդրումային նախագծերի ցանկի Վրաստանի ենթաբաժնում մեկ ծրագիր է՝ Ռազմավիրական մայրուղու Քվեշեթի–Կոբի հատվածի կառուցումը, որն ըստ առաջնահերթության առաջին խմբում է: 22,7 կմ երկարությամբ այդ հատվածում պետք է լինեն վեց կամուրջ և հինգ թունել, ինչի շնորհիվ հնարավոր կլինի այստեղ տեղափոխել բեռնահոսքերը Խաչի լեռնանցքից, որով երթևեկությունը տարեկան միջինը 100 օր արգելափակվում է ձյան տեղումների և ձնահոսքի սպառնալիքի պատճառով: Նշված ծրագրի իրագործման շնորհիվ նախատեսվում է 2025 թ. Դարյալի–Վերին Լարս անցակետերի թողունակությունը 2021 թ. համեմատությամբ մեծացնել 6,5 անգամ, ինչպես նաև կտրուկ կերպով կրճատել տրանսպորտային միջոցների պարապուրդը, մեծացնել երթևեկության անվտանգությունը, կրճատել Բելառուսի ու Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի միջև ապրանքների փոխադրման ժամանակը:

* Գործածվող «արագընթաց մայրուղի» նշանակում է, որ արագ է ընթանում մայրուղին, ուստի գործածել ենք «արագանցանելի» տերմինը: – *Խմբ.:*

### «Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքին Հայաստանի ինտեգրման կարևորությունը ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից

Հայաստանի Հանրապետության՝ որպես դեպի ծով ելք չունեցող պետության համար կենսականորեն կարևոր է ինտեգրված լինել տարածաշրջանային նախագծերին՝ ընդհուպ մինչև դրանք նախաձեռնելու աստիճան: Միջազգային տրանսպորտային միջանցքներին ինտեգրվելու ուղիների որոնումը Հայաստանի համար առնաիրատապ մարտահրավերն է, քանի որ տրանսպորտային հաղորդակցությունների բազմազանեցման շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել պետության տրանսպորտային և տնտեսական անվտանգության մակարդակը և, հետևաբար, ունենալ դրական ազդեցություն ազգային անվտանգության համակարգի գործունեության վրա: Ըստ ԵԱԶԲ-ի հետազոտության՝ Հայաստանը կարող է դառնալ «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ կարևոր տարանցիկ հանգույց, ինչը հնարավորություն կտա էապես մեծացնելու արտաքին շուկաների հետ ՀՀ տրանսպորտային հաղորդակցությունը:

Հայաստանի տրանսպորտային ծախսերը աշխարհում առավել բարձրներից են, ինչը հիմնականում պայմանավորված է հարևան երկու պետությունների հետ վատ հարաբերություններով (Թուրքիայի և Ադրբեջանի ձեռնարկած ուղեփակումը) և դեպի ծով ելքի բացակայությամբ, ինչը դժվարացնում է արտաքին առևտուրը և սահմանափակում Հայաստանի տնտեսական զարգացումը: Հայաստանի միջազգային մրցունակության վրա ազդում են ինչպես տրանսպորտային ծառայությունների բարձր արժեքը, այնպես էլ փոխադրման տևողության անկանխատեսելիությունը (Լարսի անցակետի հաճախակի խափանումները):

«Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ն իսկն այն տարածաշրջանային ծրագրերից է, որին մասնակցելու և որից օգտվելու հնարավորություն ունի նաև Հայաստանի Հանրապետությունը: Սակայն այս միջանցքի ընձեռած հնարավորություններից լիարժեք կերպով օգտվելու համար Հայաստանին անհրաժեշտ են համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք առայժմ գոյություն չունեն: Մինչդեռ տարածաշրջանի մյուս պետություններն ակտիվորեն զարգացնում են իրենց տրանսպորտային ենթակառուցվածքները՝ դրանք հարմարեցնելով «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ պահանջներին, մասնավորապես՝ այս ուղղությամբ հետևողական ջանքեր է գործադրում Ադրբեջանը, որը ձգտում է, մի կողմից, դառնալու Հարավային Կովկասում գլխավոր տրանսպորտային հանգույցը, մյուս կողմից՝ ամեն կերպ խորացնելու Հայաստանի շրջափակումը, իսկ Վրաստանը ձգտում է ամրապնդելու իր տարանցիկ դերը ինչպես Հյուսիս–Հարավ՝ ՌԴ-ից դեպի Հայաստան, Թուրքիա, Իրան, այնպես էլ Արևելք–Արևմուտք ուղղություններով:

Հայաստանի տարածքով տրանսպորտային միջանցքի գործարկումը ռազմավարական նշանակություն ունի նաև Իրանի և Հնդկաստանի համար: Իրանը կկարողանա բազմազանեցնել դեպի Ռուսաստան և Եվրոպա բեռ-

ների փոխադրման ուղիները, քանի որ ներկայումս Ռուսաստանի հետ Իրանի հիմնական ապրանքաշրջանառությունը կատարվում է Ադրբեջանի տարածքով, իսկ Եվրոպայի հետ՝ Թուրքիայով: Հնդկաստանը, իր հերթին, կարող է ամրապնդել դիրքերը «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ նախագծում՝ ստանալով դյուրանցիկ ուղիներ դեպի Վրաստան, Սև ծովի նավահանգիստներ և ԵԱՏՄ շուկա: Այսպես. Հնդկաստանից ապրանքները կարող են տեղափոխվել Իրան, այնուհետև՝ Հայաստան, Վրաստան, որտեղից էլ՝ Ռուսաստան (նավահանգիստներով կամ Վերին Լարս անցակետով): Դա Հայաստանի համար կստեղծի համաձայնագրի մասնակից մյուս (Ռուսաստան, Իրան, Հնդկաստան, Օման, Ղազախստան, Բելառուս և այլն) պետությունների հետ համագործակցության հնարավորություններ՝ ենթակառուցվածքների զարգացման, միջազգային փոխադրումների, սահմանների հատման ընթացակարգերի պարզեցման և այլ առումներով:

Հայաստանը կարող է որպես «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ արևմտյան երթուղու այլընտրանքային ուղղություն միանալ միջանցքին իր համանուն նախագծով՝ «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղով, և այդպիսով բազմազանեցնել ՄՏՄ երթուղիները: Ինչպես արդեն նշվել է, միջանցքի արևմտյան երթուղին նախատեսում է ուղիղ երկաթուղային միացում Ռուսաստանի տարածքով – երկաթուղային սահմանային անցում Աստարա (Ադրբեջան) – Աստարա (Իրան)՝ Իրանի տարածքով փոխադրումների համար հետագա վերաբեռնումով ավտոմոբիլային տրանսպորտին: Երկաթուղային տրանսպորտն առավելություն ունի միայն որոշ բեռների փոխադրումների դեպքում (հանքաքար, շինանյութ և այլն), սակայն պատրաստի արտադրանքի և գյուղատնտեսական մթերքների տրանսպորտային ապահովումը նպատակահարմար է ձեռնարկել բեռնարկղերով, և եթե Հայաստանի «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղին լինի որակյալ և արագանցանելի, ապա հնարավոր է կազմակերպել բազմատեսակ փոխադրումներ, այսինքն՝ բեռնարկղերը երկաթուղուց տեղափոխվում են բեռնատարների վրա և դրանցով Հայաստանի «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղով ու Վրաստանի տարանցիկ ճանապարհով հասնում մինչև Սև ծով:

Տվյալ դեպքում Հայաստանը կարող է լինել թեև ոչ առաջնային, բայց շղթայի մի մաս, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ նա ունենա համապատասխան ճանապարհներ և ենթակառուցվածքներ: Այդպիսով՝ հայաստանյան երթուղին կդառնա Ադրբեջանով անցնող երթուղու այլընտրանքային տարբերակը, քանի որ բեռնափոխադրումներ կատարող տնտեսավարողները երթուղին ընտրելիս հաշվի են առնում ոչ միայն քաղաքական հանգամանքները, այլև լոգիստիկ տեսանկյունից այլ հանգամանքներ՝ բեռնափոխադրումների ժամկետները, ծախսերը, սահմանային անցակետերը և մաքսային ընթացակարգերն ու հսկողությունը, ավելորդ ձգձգումները և այլն: Քանի որ ավտոմոբիլային տրանսպորտն ավելի ճկուն է, քան երկաթուղայինը, ուստի հնարավոր է այդ տեսանկյունից ունենալ որոշակի առավելություններ, ինչի համար նախ անհրաժեշտ է հնարավորինս արագ ավարտին հասցնել հայաստանյան «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղին և ապահովել բեռնափո-

խադրումների համար անհրաժեշտ ենթակառուցվածքները: Այն ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղի է, որն անմիջականորեն առնչվում է նաև Հայաստանի անվտանգության հետ:

Միայն «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու վերջնական կառուցումից հետո հնարավոր կլինի Հայաստանը միացնել միջազգային այլ ճանապարհային ցանցերին, մասնավորապես՝ «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ին: Ռազմավարական նշանակություն ունեցող «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու շինարարությամբ նաև ստեղծվում են աշխատատեղեր, և դրա կառուցման շնորհիվ Հայաստանը կզարգացնի տնտեսությունը և կմեծացնի իր աշխարհաքաղաքական նշանակությունը, ինչը կնպաստի ազգային ու միջազգային անվտանգության ամրապնդմանը: Հետևաբար ՀՀ տնտեսությունը զարգացնելու համար «Հյուսիս–Հարավ» տրանսպորտային միջանցքի ստեղծումը ազգային առաջնահերթություն է և բխում է ազգային անվտանգության շահերից:

### Եզրակացություն

«Հյուսիս–Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը կարևոր դեր է խաղում տարածաշրջանում՝ ձեռք բերելով ռազմավարական, աշխարհաքաղաքական ու տնտեսական նշանակություն: Ժամանակակից հակամարտությունների և համընդհանուր փոփոխությունների պայմաններում «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ նախագծի նկատմամբ միջազգային հետաքրքրությունն ավելի է մեծացել, քանի որ արևմտյան պատժամիջոցների հետևանքով տրանսպորտային հաղորդակցության ավանդական ուղղություններով բեռնափոխադրումները խաթարվել են կամ դարձել ռիսկային և ծախսատար: Այս իրավիճակում Հարավային Կովկասի պետություններն ակտիվ քայլեր են ձեռնարկում «Հյուսիս–Հարավ» նախագծին մասնակցելու և առավելագույն օգուտ քաղելու համար՝ այդ նպատակով զգալիորեն բարելավելով իրենց տրանսպորտային ենթակառուցվածքները, ինչպես նաև իրագործելով դրանց հետագա ընդարձակման և արդիականացման լայնամասշտաբ ծրագրեր:

Տարածաշրջանում ՀՀ տրանսպորտային մեկուսացումը պետության գլխավոր անվտանգային և տնտեսական մարտահրավերներից մեկն է, հետևաբար տրանսպորտային շրջափակման հաղթահարումը Հայաստանի համար ոչ միայն ունի տնտեսական նշանակություն, այլև անմիջականորեն կապված է ՀՀ անվտանգության հետ: «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ ծրագրից Հայաստանի դուրս մնալը կարող է ավելի խորացնել տարածաշրջանային մեկուսացումը, հետևաբար նաև նվազեցնել տնտեսական գրավչությունը, ինչն էլ կհանգեցնի տնտեսական և անվտանգային սպառնալիքների աճման: Մինչդեռ «Հյուսիս–Հարավ» ՄՏՄ-ում Հայաստանի ներգրավումը կարող է էական խթան դառնալ ինչպես պետության տնտեսության աճման, այնպես էլ տարածաշրջանային նշանակության ամրապնդման համար: Ուստի տարածաշրջանային մեկուսացումից խուսափելու համար հարկավոր է արագացված տեմպերով ավարտին հասցնել «Հյուսիս–Հարավ» ավտոճանապարհի շինարարությունը՝ դրա շուտափույթ իրագործումը դարձնելով ազգային օրակարգի կարևոր խնդիրներից մեկը:

# ГЕОЭКОНОМИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ МЕЖДУНАРОДНОГО ТРАНСПОРТНОГО КОРИДОРА «СЕВЕР–ЮГ» С ТОЧКИ ЗРЕНИЯ БЕЗОПАСНОСТНЫХ ИНТЕРЕСОВ РА

*М. А. ДЕТЛОФФ, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик ЦРСИ ИНСИ НИУО МО РА, доцент кафедры экономики и менеджмента Научно-образовательного международного центра НАН РА*

РЕЗЮМЕ

Международный транспортный коридор (МТК) «Север–Юг» играет важную роль в регионе Южного Кавказа, приобретая стратегическое, геополитическое и экономическое значение. На фоне конфликтов и глобальных изменений в мировой безопасностной архитектуре возрастает международный интерес и к проекту МТК «Север – Юг», поскольку грузоперевозки по традиционным направлениям транспортного сообщения нарушены или связаны с существенными рисками в результате налагаемых западными государствами санкций. В подобной ситуации государства Южного Кавказа предпринимают активные шаги по вовлечению в проект «Север – Юг» и извлечению из этого максимальной выгоды, существенно улучшая свою транспортную инфраструктуру, а также реализуя широкомасштабные программы по ее дальнейшему расширению и модернизации.

Транспортная изоляция РА в регионе является одним из главных вызовов безопасности и экономике государства, поэтому преодоление транспортной блокады не только представляет для Армении большое экономическое значение, но и напрямую связано с ее безопасностью. Неучастие Армении в проекте «Север – Юг» может еще больше усугубить ее региональную изоляцию, а следовательно, снизить экономическую привлекательность, что приведет к росту экономических и безопасностных угроз. Поэтому во избежание региональной изоляции необходимо скорейшим образом завершить строительство автомагистрали «Север–Юг», проходящей по территории РА, скорейшая реализация которой является одной из важнейших задач национальной безопасности.

# GEOECONOMIC SIGNIFICANCE OF THE INTERNATIONAL NORTH – SOUTH TRANSPORT CORRIDOR FROM THE VIEWPOINT OF THE RA SECURITY INTERESTS

*M. H. DETLOFF, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, CRSS, INSS, NDRU, MOD, RA, Associate Professor, Chair, Economics and Management, International Scientific Educational Center, NAS, RA*

SUMMARY

The International North – South Transport Corridor (INSTC) plays an important role in the South Caucasus region, acquiring strategic, geopolitical and economic significance. Against the background of conflicts and global changes in the global security architecture, international interest in the INSTC project is also increasing, since traditional cargo transport routes are disrupted or subject to significant risks as a result of sanctions imposed by Western states. In suchlike situation, the states of the South Caucasus are taking active steps to engage in the “North – South” project and accrue maximum benefits from it significantly improving their transport infrastructure, as well as implementing large-scale programs for its further expansion and modernization.

The transport isolation of the RA in the region is one of the main challenges to the security and economy of the state, therefore overcoming the transport blockade is not only of great economic importance for Armenia, but is also directly related to its security. Armenia's non-participation in the “North – South” project may further aggravate its regional isolation, and therefore reduce its economic attractiveness, leading to an increase in economic and security threats. Therefore, in order to avoid regional isolation, it is necessary to quickly complete the construction of the “North – South” highway passing via the territory of the Republic of Armenia, the speedy implementation of which is one of the most important tasks of national security.

# ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Հունաստանի Հանրապետություն կատարած այցի ժամանակ Հայաստանի ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ *Էդվարդ Ասրյանը* հանդիպել է Հունաստանի ազգային պաշտպանության գլխավոր շտաբի պետ գեներալ *Դիմիտրիոս Խուպիսի* հետ. կողմերը քննարկել են պաշտպանության ոլորտում Հայաստան–Հունաստան համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր

Հունաստան, 2025 թ. փետրվարի 27



ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ *Էդվարդ Ասրյանը* ընդունել է Հայաստան–Կանզաս համագործակցության պատվիրակությանը. կողմերը քննարկել են պաշտպանության ոլորտում Հայաստան–ԱՄՆ համագործակցությանը վերաբերող հարցեր

Երևան, 2025 թ. հունվարի 22




ՆԱՏՕ-ի «Պաշտպանական կրթության զարգացման ծրագրի» խմբի այցը ՀՀ ՊՆ ՊԱՀՀ. քննարկվել են ռազմական կրթության ոլորտում համագործակցության հեռանկարային ծրագրեր

Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2025 թ. փետրվարի 26




Դրվագ ԱՄՆ-ի Ոչ կանոնավոր պատերազմի կենտրոնի՝ համապարփակ պաշտպանության և ոչ կանոնավոր պատերազմի հարցերով փորձագետ *Մեթյու Հեյդելի* ՀՀ ՊՆ ՊԱՀՀ կատարած այցից

Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2025 թ. փետրվարի 13

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ
# ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ




Դրվագ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում տեղի ունեցած «Պետության ռազմական անվտանգություն» վերապատրաստման դասընթացի իններորդ հոսքի ավարտական արարողությունից

Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2025 թ. հունվարի 22



Դրվագ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում ՀՀ ԶՈՒ-ի օպերատիվ օղակի սպայական կազմի «Զորամիավորումների կառավարում» վերապատրաստման յոթերորդ հոսքի դասընթացի մեկնարկի արարողությունից

Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2025 թ. հունվարի 7



Դրվագ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ ղեկավար կազմի վերապատրաստում» դասընթացի 2025 թվականի առաջին հոսքի մեկնարկի հանդիսավոր արարողությունից

Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2025 թ. մարտի 3



«ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ ղեկավար կազմի վերապատրաստում» դասընթացի 2025 թվականի առաջին հոսքի ունկնդիրների խմբային ավարտական լուսանկարը ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ գեներալ-մայոր *Ա. Բաղդադյանի* հետ

Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2025 թ. մարտի 14

DOI: 10.61760/18290108-stk.25.1-57

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ[*]

*Ա. Ս. ՍԱՅԻՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,*
*ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ՏՌՎԿ գիտնական-վերլուծաբան,*
*ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող*



**Ներածություն**

Սույն հոդվածի նպատակն է Սիրիական ճգնաժամի համատեքստում Թուրքիայի քրդական քաղաքականության փոխակերպումների վերլուծությունը ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից, ինչն անհրաժեշտ է նաև նրա տարածաշրջանային ու ներքաղաքական զարգացումները հասկանալու համար: Ըստ այդմ քննարկվել են հետևյալ խնդիրները. Թուրքիայում և Սիրիայում Քրդական հարցի կերպափոխումները մինչև «Արաբական գարունը» և դրանից հետո, Թուրքիայի ձեռնարկումները Սիրիայում Քաղաքացիական պատերազմի շրջանում և Ասադի իշխանության տապալումից հետո:

2024 թ. նոյեմբերի 27-ին Թուրքիայի Նախագահ Ռեջեփ Թայիփ էրդողանի հովանավորությունը վայելող Սիրիայի ազատ բանակի, ինչպես նաև իսլամիստական խմբավորումների ձեռնարկած հարձակումը և Սիրիայում իշխանության զավթումն ուժեղացրել են Մերձավոր Արևելքում Թուրքիայի ռազմաքաղաքական ազդեցությունը: Այն անմիջական ֆիզիկական անվտանգության սպառնալիք է նաև Սիրիայի քրդական ինքնավարության՝ Ռոժավայի համար: Սիրիայի նկատմամբ էրդողանի վերահսկողության փաստացի հաստատումը 1920 թ. հռչակված Ազգային ուխտի[**] իրագործումն է, և ռազմական ճանապարհով Քրդական հարցի լուծումը նպատակաուղղված է Հյուսիսային Իրաքի և Հյուսիսային Սիրիայի նկատմամբ վերահսկողության հաստատմանը:

---

[*] Հոդվածն ստացվել է 28.02.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 12.05.2025:

[**] *Ազգային ուխտ*, կամ *Անկախության հռչակագիր (Misak-ı Millî).* 1920 թ. հունվարի 28-ին Ստամբուլում ընդունել է օսմանյան խորհրդարանը, որի մեծամասնությունը կազմում էին Մուսթաֆա Քեմալի շարժման հետևորդները: Բաղկացած է 6 կետից: Նախատեսվում էր թուրքական պետության տարածքի մեջ անվերապահորեն ներառել Հալեպի և Մոսուլի վիլայեթները (հոդվ. 1): Ինչ վերաբերում է արաբական երկրներին (հոդվ. 1), Կարսի, Արդահանի ու Բաթումի սանջակներին (հոդվ. 2) և Արևմտյան Թրակիային (հոդվ. 3), ապա դրանց նկատմամբ տարածքային նկրտումները շղարշվում էին տեղի մահմեդական բնակչության շրջանում անցկացվելիք այսպես կոչված հանրաքվեներով՝ այն վստահությամբ, որ նա անպայման կքվեարկի Օսմանյան պետության կազմում լինելու օգտին:

Հարկ է նշել, որ քրդական խնդիրը թուրքական քաղաքական օրակարգում գրավում է առաջնային դիրքեր և ժամանակի ընթացքում ավելի է սրվում: Սույն հոդվածում տրվում են քրդական խնդրի ծագման պատճառները, ինչպես նաև Սիրիական ճգնաժամում տեղի քրդերի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունը, որն ունի ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական բնույթ, և առաջին հերթին, ուղղված է նրանց ազատագրական շարժման դեմ: Նպատակ ունենալով Սիրիայում տապալել Բաշար Ասադի կառավարությունը և իշխանության բերել իր հովանավորյալ ուժին՝ էրդողանը, միևնույն ժամանակ, ծրագրում է զավթել Սիրիական Քրդստանը և վերջ տալ նրա ազգային-ազատագրական շարժմանը:

## Քրդական խնդիրը Թուրքիայում և Սիրիայում մինչև «Արաբական գարունը»

Թուրքիայում քրդերի ազատագրական շարժման նոր փուլն սկսվել է 1978 թ., երբ Աբդուլլահ Օջալանն ստեղծեց Քրդստանի բանվորական կուսակցությունը (ՔԲԿ): 1984 թ. շարժումը վերածվում է ապստամբության, որը շարունակվում է մինչև օրս և խլել է հազարավոր մարդկանց կյանքեր: Կուսակցության ստեղծումից կարճ ժամանակ անց Ա. Օջալանը, խուսափելով Թուրքիայում ձերբակալությունից, անցնում է Սիրիա, որտեղից էլ ղեկավարում էր ապստամբությունը: Ու թեև Սիրիայի այն ժամանակվա ղեկավար Հաֆեզ Ասադը սիրիական քրդերի նկատմամբ վարում էր այն նույն քաղաքականությունը[1], որն իր քրդերի նկատմամբ վարում էր Թուրքիան, սակայն որոշ քաղաքական նկատառումներով (Սառը պատերազմի հակառակորդ ճամբարներում գտնվելը, թուրք-իսրայելական ջերմ հարաբերությունները) մերժում է Օջալանին հանձնելու Անկարայի պահանջը, և մինչև «Արաբական գարունը» (2011 թ.) քրդական խնդիրը հիմնականում մնում էր որպես ներթուրքական ոլորտ:

Գիտակցելով, որ քրդական խնդիրը լիովին կառավարելի է և նախաձեռնությունն իրենց ձեռքում է[2], թուրքական իշխանությունները բազմիցս խախտել են զինադադարի վերաբերյալ քրդերի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները և նախընտրական քարոզարշավների ժամանակ ահաբեկչության դեմ պայքարի կոչերի շնորհիվ շահել թուրք բնակչության քվեների մեծ մասը: Դրությունը փոխվեց Պարսից ծոցի 1990–1991 թթ. պատերազմից հետո, երբ Իրաքի հյուսիսում ստեղծվեց քրդական ինքնավարություն, որի գոյությունը լուրջ սպառնալիք էր թուրքական պետության համար: Սակայն Անկարան չէր կարող ռազմական ճանապարհով ոչնչացնել այդ ինքնավարությունը, քանի որ այն գտնվում էր ԱՄՆ-ի պաշտպանության ներքո: Ուստի էրդողանին հաջողվեց իրագործել Թուրքիայի համար ամենա-

[1] Տես «Курды от независимости Сирии до партии Баас». “ANHA”, 05.09.2022 (https://hawarnews.com/ru/166240446021725):

[2] Տես *Ofra Bengio.* Erdogan, the Kurds and Turkish Election: What Next? 6 June 2023 (https://www.inss.org.il/publication/turkey-kurds/):

բարենպաստ տարբերակը՝ ինքնավարության ղեկավար դարձնել իր դաշնակից Նեչիրվան Բարզանիին, ինչի շնորհիվ թուրքական իշխանություններն ինքնավարությունից առայժմ վտանգ չեն սպասում:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ տարածաշրջանում սկսեց մեծանալ Թուրքիայի դերը, Հ. Ասադն ստիպված էր տեղի տալ և 1998 թ. երկրից արտաքսել Օջալանին, որին կարճ ժամանակ անց ձերբակալեցին թուրքական հատուկ ծառայությունները[3]: Օջալանի ձերբակալումից հետո քրդական շարժումը Թուրքիայում միաժամանակ անկում ապրեց: Բայց տարիներ շարունակ Սիրիայում Ա. Օջալանի գտնվելը անհետևանք չմնաց. Սիրիայի քրդերի մեծ մասը դարձավ ՔԲԿ հետևորդ, և բնական էր, որ սիրիական քաղաքացիական պատերազմի ժամանակ ստեղծված քրդական ինքնավարությունում իշխանությունն անցավ ՔԲԿ հիմնած «Սիրիայի ժողովրդավարական ուժեր» *(SDS)* դաշինքին[4], որտեղ գլխավոր կուսակցությունը «ժողովրդավարական միություն» կուսակցությունն է *(PYD)*[5]: Այս իրողությունը Թուրքիայի համար սպառնալիք էր, քանի որ, ի տարբերություն Իրաքյան քրդական ինքնավարությունից, Ռոժավայից Թուրքիա էին ներթափանցում ազգային-ազատագրական ձախ գաղափարախոսություններ (մարքսիզմ-լենինիզմ):

### Սիրիական ճգնաժամը և Թուրքիայի քրդական քաղաքականության փոխակերպումները 2011–2023 թթ.

Այդ էր պատճառը, որ երբ սկսվեց «Արաբական գարունը» և Սիրիայի քրդերը ստեղծեցին դե ֆակտո ինքնավարություն, թուրքական իշխանությունները նրա նկատմամբ ընդունեցին կոշտ դիրքորոշում: Պետք է նշել, որ քրդական այս նոր սպառնալիքը և Սիրիայում սկիզբ առած քաղաքացիական պատերազմը Էրդողանի համար ստեղծում են *ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական հնարավորություններ*՝ լուծելու թե՛ քրդական խնդիրը, թե՛ Սիրիայում տարածելու իր ազդեցությունը, իսկ հնարավորության դեպքում՝ Ազգային ուխտը կյանքի կոչելու և իր վարած քաղաքականության շրջանակներում դե ֆակտո զավթելու այն: Բացի այդ, սիրիական, լիբիական և իրաքյան քաղաքականությունը Էրդողանի համար հրաշալի հնարավորություն էր լռեցնելու իր դեմ ծավալվող քաղաքական, ռազմական և քաղաքացիական ընդդիմադիր շարժումները և հաստատելու իր անձնապաշտական իշխանությունը:

Այդուհանդերձ մինչև 2016 թ. Ռոժավան գրավելու նպատակով նա նախընտրում էր Սիրիայի քրդերի դեմ ռազմական գործողությունները վարել

[3] Տես *Дмитрий Пирожков.* Операция "Длинные руки". «Коммерсантъ», 23.02.1999 (https://www.kommersant.ru/doc/15199):

[4] Տես «Սիրիայի ժողովրդավարական ուժեր» դաշինքի մաս կազմող Սիրիայի ինքնապաշտպանական ուժերի պաշտոնական կայքէջը (https://sdf-press.com/en):

[5] Տես «ժողովրդավարական միություն» կուսակցության պաշտոնական կայքէջը (https://pydrojava.org/english/):

իր հովանավորյալ տարբեր իսլամիստական խմբավորումների՝ Իսլամական պետության[6], Հայաթ Թահրիր ալ Շամի և Սիրիայի ազատ բանակի ուժերով: Թուրքական բանակն այդ ժամանակահատվածում աջակցում էր նրանց օդային և հրետանային հարվածներով: Դա ակնհայտորեն երևաց 2014 թ. Քոբանիի համար մղվող մարտերում, երբ թուրքական տանկերն ու ինքնագնաց հրետանային կայանքներն իրենց կրակով իբր խոցում էին իսլամիստների ուժերը, թեև մեծ մասամբ ոչնչացվում էին քրդերի մարտական դիրքերը: Այս ամենով հանդերձ՝ Էրդողանն այս փուլում չկարողացավ հասնել իր նպատակին, քանի որ ԱՄՆ-ը Իսլամական պետության ու սիրիական կառավարության դեմ պայքարում աջակցում էր քրդերին և չթույլատրեց, որ քրդերը պարտություն կրեն:

Սակայն սիրիական հակամարտության մեջ ՌԴ ներգրավումը 2015 թ. աշնանը Էրդողանին ստիպեց արդեն անմիջականորեն մասնակցել դրան: Մոսկվայի ներգրավվածությունն ի դերև էր հանում նրա բոլոր ծրագրերը: Այդ նպատակով նա սկսեց երկիրը գաղափարապես նախապատրաստել պատերազմի: Եվ պետք է նշել, որ սկզբնական շրջանում դա հաջողվեց: Նորօսմանականության գաղափարներով խանդավառված թուրքական հասարակությունը 2015 թ. տեղի ունեցած ԹԱՄԺ-ի ընտրություններում ապահովեց Էրդողանի գլխավորած ԱԶԿ-ին պատգամավորական տեղերի համարյա կեսը[7], ինչպես նաև սատարեց նրան թե՛ Սիրիա և Իրաք ներխուժման և այդ երկրներում քրդերի դեմ ռազմական գործողությունների, թե՛ 2016 թ. ռազմական հեղաշրջումը ճնշելու ժամանակ: Եվ միայն բանակն իրեն ենթարկելուց հետո Ռ. Էրդողանը 2016 թ. օգոստոսի 24-ին հրամայեց սկսել Սիրիայի քրդերի և Իսլամական պետություն կազմակերպության դեմ օպերացիան, որն ստացավ «Եփրատի վահան» անվանումը և տևեց մինչև 2017 թ. մարտի վերջը: Թուրքական զորքերը գրավեցին Սիրիայի հյուսիսում գտնվող Ալ Բաբ, Ջարաբլուս և այլ քաղաքներ ու քրդական ինքնավարությունը բաժանեցին երկու մասի:

Զարգացնելով հաջողությունը՝ Էրդողանը հրամայում է 2018 թ. հունվարի 20-ին սկսել «Ձիթենու ճյուղ» անվանումով նոր օպերացիա, որը տևում է մինչև մարտի 24-ը: Թուրքական բանակն այդ ընթացքում գրավում է քրդական ինքնավարության Աֆրին կանտոնը, որտեղից սկսում են վտարել քուրդ բնակչությանը և նրա տեղը բնակեցնել թյուրքերի և ընդդիմադիր արաբների, ինչի պատճառով քրդերի թիվը 96 %-ից իջել է 25 %[8]-ի:

---

[6] Տես *Mordechai Kedar.* Turkey’s Relationship with ISIS Proves It Is Deserting Its European Allies. “BESA”, 11 October 2020 (https://besacenter.org/turkey-isis-relationship/):

[7] Տես *Ильшат Саетов.* Окончательные итоги парламентских выборов обнародованы в Турции. «РИА Новости», 12.11.2015 (https://ria.ru/20151112/1319198207.html):

[8] Տես *Ахмед Самир*. Курды и арабы должны действовать немедленно, чтобы разрушить турецкий проект поселения. “ANHA”, 26.05.2022 (https://hawarnews.com/ru/165354288020627):

2019 թ. հոկտեմբերին սկսվեց «Խաղաղության ակունք» օպերացիան, որի ժամանակ թուրքական զորքերը և սիրիական ընդդիմության ուժերը գրավեցին Ռաս էլ Այն ու Թել Աբյադ քաղաքները և կտրեցին ռազմավարական նշանակություն ունեցող Մ-4 մայրուղին: ԱՄՆ-ի Նախագահ Դ. Թրամպը դուրս բերեց ամերիկյան զորքերն այդ շրջաններից: Մնալով միայնակ և անկարող լինելով դիմադրելու թուրքական զորքերին՝ քրդերն ստիպված էին համաձայնվել ՌԴ-ի առաջարկությանը և Ասադի զորքերին հանձնել Մանբիջ, Քոբանի, Էտ Տաբկա և Էր Ռաքքա քաղաքները: Օպերացիան դադարեցվեց նոյեմբերի 22-ին, երբ Վ. Պուտինը և Ռ. Էրդողանը Սոչիում եկան համաձայնության, որ քրդական ուժերը թուրք-սիրիական սահմանից հետ էին քաշվում 10 կմ-ով, և այդ տարածքները, բացի Կամիշլի քաղաքից, հսկվում էին ռուս-թուրքական համատեղ պարեկներով[9]:

Վերլուծելով «Խաղաղության ակունք» օպերացիան՝ գալիս ենք այն եզրահանգման, որ Էրդողանը հերթական անգամ չկարողացավ լիովին հասնել իր նպատակներին՝ բախարգելիչ գոտին ոչ թե 30, այլ 10 կմ էր, և այն ստիպված էր վերահսկել ռուսաստանցիների հետ: Բացի այդ, տվյալ շրջաններում նորից տեղաբաշխվեցին սիրիական կառավարական զորքերը և, որ ամենակարևորն է, քրդական ուժերը չջախջախվեցին, իսկ իր քրդաբնակ շրջաններում տեղի էին ունենում հակակառավարական ելույթներ: Սիրիայի քրդերի նկատմամբ վարած այս քաղաքականությունը չէր կարող չազդել Թուրքիայի ներքաղաքական իրավիճակի վրա, ինչն էլ արտացոլվեց 2023 և 2024 թթ. ընտրությունների արդյունքներում:

## Թուրքիայի քրդական քաղաքականությունը 2023–2024 թթ.

2019 թ. կնքված զինադադարը հիմնականում պահպանվեց մինչև 2024 թ.: Հակառակ Էրդողանի ծրագրի՝ հակամարտությունը ձգձգվեց, ինչը բացասաբար ազդեց երկրի ներքաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և նրա վարկանիշի վրա՝ արտացոլվելով 2023 թ. ընտրություններում[10], որտեղ ձախ կողմնորոշում ունեցող կուսակցություններն ստացան ավելի շատ ձայներ, քան 2018 թ. ընտրություններում: Էրդողանն իր դաշինքի հետ կրկին պարտություն կրեց 2024 թ. մարտի 31-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններում[11]: Այս ընտրություններում քրդերի ներկայացվածությունն ավելի մեծացավ: Էրդողանը դիմեց բռնաճնշումների, սակայն ի զորու չեղավ պայքարելու ընդհանուր գործընթացի դեմ: Իսկ պատճառներից ամենագլխավորն այն է, որ քրդերի բնական աճն ավելի մեծ է, քան թուրքերինը, և մոտավոր հաշվարկներով 2100 թ. Թուրքիայի բնակչության կեսը կազմելու են քրդ-

[9] Տես *Кирилл Кривошеев.* Мир на смену «Источника мира». Коммерсантъ, 22.10.2019 (https://www.kommersant.ru/doc/4134236):

[10] Տես “Grand National Assembly of Türkiye” (https://data.ipu.org/parliament/TR/TR-LC01/election/TR-LC01-E20230514/):

[11] Տես “31 Mart 2024 Yerel Seçimleri / Belediye Başkanlıkları Türkiye Geneli” (https://secim.hurriyet.com.tr/31-mart-2024-yerel-secimleri/secim-sonuclari/):

րը[12]: Մյուս պատճառը քրդերի ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրացումն է, և դրանում շատ մեծ է Ռոժավայի դերը:

Այսինքն՝ 2024 թ. ամռանը Էրդողանի համար Քրդական հարցը մտել էր փակուղի, և պետք էր փոխել կոշտ և անզիջումային քաղաքականությունը ու գնալ բանակցությունների: 2024 թ. հոկտեմբերի սկզբին Էրդողանը և նրա քաղաքական դաշնակից Դ. Բահչելին ԹԱՄԺ-ում քրդամետ պատգամավորներին հաշտության և համագործակցության առաջարկություն արեցին՝ խոստանալով, որ ցմահ դատապարտված Օջալանին հնարավորություն կտրվի տեսակապով ելույթ ունենալու Դեմկուսի խմբակցության նիստում:

Ըստ Բահչելիի՝ դա շատ կարևոր է Թուրքիայի 85 միլիոն քաղաքացիների միասնության և հավասարության համար: Իր հերթին, Էրդողանը նույնպես այդ իրադարձությունը շատ կարևոր համարեց Թուրքիայի բոլոր քաղաքացիների միասնության և հավասարության համար[13]: Հասկանալի է, որ այս երկու փորձառու քաղաքական գործիչների քայլերը համաձայնեցված էին: Դա է ապացուցում նաև այն, որ մի քանի օր անց երկուսն էլ Դեմկուսի հասցեին հնչեցրեցին սպառնալիքներ, եթե չընդունվի առաջարկությունը: Էրդողանը Դեմկուսի պատգամավորներին «հիշեցրեց» 2014 թ. «Քոբանիի դասը» և կոչ արեց դադարեցնելու ահաբեկչական գործունեությունն ու վերադառնալու «մաքուր քաղաքականություն»: Իսկ Բահչելին ավելացրեց, որ իրենց այս խաղաղասիրական քայլը չպետք է շփոթել թուլության հետ և նշեց, որ Օջալանին կթույլատրվի ելույթ ունենալ ԹԱՄԺ-ում Դեմկուսի խմբակցության նիստում, եթե նա ՔԲԿ-ին կոչ անի դադարեցնելու պատերազմը և ինքնալուծարվելու[14]:

Քրդերին զինադադարի և հաշտության առաջարկության այս փուլը վստահված էր Դ. Բահչելիին, քանի որ նախորդ փուլը՝ 2012–2015 թթ., որը վարում էր Էրդողանը, վերջացավ անհաջողությամբ՝ պայմանավորված ինչպես ներքաղաքական, այնպես էլ սիրիական իրադարձություններով, երբ քրդերը մերժել էին նրա առաջարկությունները: Զախողվելով այդ նախաձեռնությունում՝ Էրդողանը Սիրիայի քրդերի դեմ ձեռնարկել էր երեք օպերացիա, ինչը վերջնականապես խզել էր կապը իր և քրդերի միջև: Եվ հիմա, ըստ Էրդողանի և Բահչելիի, վերջինս նոր բանակցություններում ավելի ընդունելի գործիչ կլիներ քրդերի համար: Բացի այդ, բանակցությունների այս փուլի ղեկավարումը փոխանցելով Բահչելիին՝ նա քրդերի հետ հաշտեցման գործընթացին մասնակից էր դարձնում նաև թուրք ազգայնականներին, որոնք ի սկզբանե դեմ էին դրան և ցանկանում էին լուծել Քրդական հարցը միայն

[12] Տես *А. А. Филиппова.* Демографические аспекты курдского вопроса в Турции. «Казанский вестник молодых ученых», 2020, т. 4, № 1 (https:// cyberleninka.ru/ article/n/demograficheskie-aspekty-kurdskogo-voprosa-v-turtsii/viewer):

[13] Տես *Руслан Баширли.* Сильный Эрдоган обращает конец в начало. “Haqqin.az”, 12 октября 2024 (https://haqqin.az/news/329914):

[14] Տես *Руслан Баширли.* Очевидное – невероятное: Оджалан выходит из тюрьмы и … направляется в парламент Турции. “Haqqin.az”, 23 октября 2024 (https:// haqqin.az/news/330956):

ուժային մեթոդներով: Մեղմվում էր նաև այդ բանակցությունների նկատմամբ ժողովրդա-հանրապետական կուսակցության դիրքորոշումը:

Այս բանակցությունները կարևոր էին Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականության տեսակետից: Դրանով փորձ էր արվում վերահսկելի դարձնելու քրդերին և կանխելու նրանց համագործակցությունն ինչպես Իրանի, այնպես էլ՝ ԱՄՆ-ի և Իսրայելի հետ՝ պայմանավորված թուրք-իսրայելական լարված հարաբերություններով: Կարևոր էին նաև տնտեսական բաղադրիչը, քանի որ դա հնարավորություն կտար իրագործելու Մերձավոր Արևելքում մեծ տնտեսական ծրագրեր և կամրապնդեր Թուրքիայի ազդեցությունը նաև Միջին Արևելքում ու Հյուսիսային Աֆրիկայում[15]:

### Սիրիայում Բաշար Ասադի վարչակազմի տապալումը. նոր հնարավորություններ և մարտահրավերներ Թուրքիայի քրդական քաղաքականության համար

Սակայն տեսնելով, որ քրդերը ձախողեցին այս բանակցությունները, թուրքական իշխանություններն սկսեցին այն օգտագործել ժամանակ շահելու և Սիրիայի քրդական ինքնավարության հարցը ռազմական ճանապարհով փակելու նպատակով, առավել ևս, որ նոյեմբերի 5-ին Աստանայում տեղի ունեցած ՌԴ–Իրան–Թուրքիա եռակողմ բանակցությունների ժամանակ Մոսկվան վերջնագրի տեսքով էրդողանից պահանջել էր դուրս բերել իր բոլոր զորքերը Սիրիայից և մերժել էր նրա ու Ասադի հանդիպումը[16]: Հայտնվելով փակուղու առջև՝ էրդողանը հրահանգում է բանակին և հատուկ ծառայություններին սիրիական ընդդիմության ուժերին զաղտնի նախապատրաստել Ասադի զորքերի վրա հարձակման, ինչը հնարավոր էր դարձել ուկրաինական ճգնաժամի և Իսրայել–Իրան հակամարտության ներկա փուլում, երբ երկրի քրդաբնակ տարածքներում Ասադի իշխանության ազդեցությունը չեզոքացված էր, և Ռոժավան դարձել էր փաստացի անկախ պետական կազմավորում: Օգտվելով Ռուսաստանի ուշադրության շեղումից և Իսրայելի հետ Իրանի ու «Հիզբոլլահի» հակամարտության մեջ ներքաշումից ու վերջինիս թուլացումից, ինչպես նաև ԱՄՆ-ում 2024 թ. նոյեմբերին տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո իշխանության փոփոխությունից՝ էրդողանը հրահանգեց սիրիական ընդդիմադիր ուժերին անցնել հարձակման, որն էլ դեկտեմբերի 8-ին ավարտվեց Բաշար Ասադի իշխանության տապալմամբ:

Այս հաղթանակը էրդողանին հնարավորություն է ընձեռում նշված խմբավորումների և իր դաշնակից նոր սիրիական կառավարական ուժերի հետ պարտության մատնելու քրդերին և վերջնականապես ոչնչացնելու Ռոժա-

[15] Տես *Özge Genç.* The Kurdish Issue Revisited: Türkiye’s Complex Road to Peace. “Middle East Council on Global Affairs”, November 2024 (https://mecouncil.org/wp-content/uploads/2024/11/MECGA_Policy-Note_The-Kurdish-Issue-Revisited_Final-1.pdf):

[16] Տես *Ömer Özkizilcik.* What does Turkey gain from the rebel offensive in Syria? “Atlantic Council”, 5 December 2024 (https://www.atlanticcouncil.org/blogs/menasource/syria-turkey-rebel-offensive/):

վան: Ըստ Էրդողանի՝ ԱՄՆ-ի նոր վարչակազմը, ազդվելով Անկարայի կայծակնային հաջողությունից, Սիրիայից ամերիկյան զորքերի դուրսբերման պայմանները կքննարկի իր հետ[17], սակայն նրա այս ծրագիրը չի արժանացել ԱՄՆ-ի հավանությանը, քանի որ վերջինս քրդերի դաշնակիցն է: Էրդողանի համար դրությունը բարդանում է նաև այն հանգամանքով, որ քրդերի դաշնակիցն է նաև Իսրայելը: Հասկանալով այս ամենը՝ Էրդողանը, օգտվելով այն հանգամանքից, որ Իսրայելն զբաղված է Իրանի ու ՀԱՄԱՍ կազմակերպության հետ հակամարտությամբ, իսկ ԱՄՆ-ի նորընտիր Նախագահ Դ. Թրամպը՝ ռուս-ուկրաինական զինված հակամարտության կարգավորման հարցերով և Չինաստանի հետ խորացող բազմաոլորտային մրցակցությամբ, աշխատում է հնարավորինս արագ բռնազավթել Ռոժավան՝ առայժմ որևէ հակազդեցություն չստանալով որևէ երկրից կամ միջազգային կազմակերպությունից[18]:

Մենակ մնալով թուրքական ռազմական մեքենայի և ահաբեկչական խմբավորումների դեմ՝ Ա. Օջալանը փետրվարի 27-ին ստիպված էր իր կուսակիցներին կոչ անել դադարեցնելու զինված պայքարը, իսկ ՔԲԿ-ն՝ ինքնալուծարվելու[19]: Դրանից հետո Սիրիական Քրդստանի ղեկավարությունը Մազլում Քոբանիի գլխավորությամբ կատարեց, մեր կարծիքով, միակ ճիշտ քայլը՝ սույն թվականի մարտի 10-ին Սիրիայի անցումային շրջանի Նախագահ Ահմեդ ալ Շարաայի (Աբու Մուհամմադ Ջուլանի) հետ կնքելով ինքնավարության հաստատությունները սիրիական պետական հաստատություններին ինտեգրելու պայմանագիր: Եթե այս համաձայնագիրը կյանքի կոչվի, ապա Էրդողանը կզրկվի Սիրիայում թուրքական զորքեր պահելու ամենակարևոր հիմնավորումից և ստիպված կլինի դուրս բերել զորքերը Սիրիայի ամբողջ տարածքից, և սիրիական քրդերի խնդիրը կշարունակի թուրքական իշխանությունների համար մնալ չլուծված:

## Եզրակացություն

1984 թ. թուրքերը չեն կարողանում ճնշել քրդական ապստամբությունը, և քրդերի ազգային ինքնագիտակցության աճման հետ այն շարունակվելու է: Իսկ եթե հաշվի առնենք այն փաստը, որ Թուրքիայում քրդերի բնական աճը թուրքերից ավելի մեծ է, և տարբեր ուժային կենտրոններ օգտագործելու են նրանց Թուրքիայի հետ իրենց հարաբերություններում, ապա քրդական խնդիրը ժամանակի հետ ավելի է սրվելու:

2024 թ. նոյեմբերի 27-ին սիրիական ընդդիմության ձեռնարկած հար-

[17] Տես նույն տեղում:

[18] Տես «Трамп – это ворота к войне для Эрдогана». “ANF News”, 14 ноября 2024 (https://anfrussian.com/Аналитика/-60788):

[19] Տես «Абдулла Оджалан призвал турецких курдов сложить оружие. Он с конца 1990-х отбывает пожизненный срок – и больше 40 лет остается символом борьбы курдов за независимость». “Meduza”, 28 февраля 2025 (https://meduza.io/feature/2025/02/28/abdulla-odzhalan-prizval-turetskih-kurdov-slozhit-oruzhie):

ծակումը Էրդողանի միակ տրամաբանական ելքն էր թե՛ սիրիական, թե՛ քրդական փակուղուց, քանի որ Սիրիական հաղթանակը Թուրքիային ընձեռում է Ռոժավան ուժով գրավելու և Քրդական շարժումը ճնշելու նոր հնարավորություններ: Սակայն դրա հետ մեկտեղ այն կրում է նաև նոր մարտահրավերներ՝ պայմանավորված ինչպես հնարավոր սիրիական քաղաքացիական պատերազմում ներգրավվածությամբ, այնպես էլ Քրդական հարցի կապակցությամբ ԱՄՆ-ի և Իսրայելի հետ լարված հարաբերություններով:

Քիչ է հավանականությունը, որ Էրդողանը ինքնակամ դուրս կբերի թուրքական զորքերը Սիրիայից և Իրաքից, որովհետև դա կխանգեցնի քրդական պետության ստեղծմանը, ինչին կհետևի Թուրքիայի քրդաբնակ շրջաններում անկախական շարժման աճումը:

Քաղաքական իրավիճակի հետագա վատթարացման դեպքում ավելի է սրվելու Քրդական հարցը երկրի ներսում, և ցանկացած քաղաքական ուժ, գալով իշխանության, ստիպված է լինելու քրդերի հանդեպ կիրառել նույն քաղաքականությունը, որը կիրառում է Էրդողանը և որին քննադատում են իրենք:

Էրդողանի և նրա դաշնակից քաղաքական ուժերի խաղաղասիրական կոչերն ու առաջարկությունները մարտավարական հնարք են, և դրանք չեն արտացոլում քրդերի հանդեպ թուրքական իշխանությունների վարած իրական քաղաքականությունը: Օգտվելով ռուս-ուկրաինական և արաբա-իսրայելական հակամարտություններում համաշխարհային և տարածաշրջանային ուժային կենտրոնների ներգրավվածությունից՝ Էրդողանն աշխատելու է նվաճել Ռոժավան և ճնշել քրդական շարժումը:

Սիրիայի քրդական ինքնավարությունը, ս. թ. մարտի 10-ին Սիրիայի անցումային շրջանի կառավարության հետ կնքելով ինտեգրման պայմանագիր, լուծեց երեք կարևոր խնդիր. ա) ստեղծեց նախադրյալներ Քրդական հարցում թուրք-սիրիական հակաքրդական դաշինքի քայքայման համար, բ) ի չիք դարձրեց Սիրիայում թուրքական զորքերի գտնվելու համար Էրդողանի ամենակարևոր հիմնավորումը, գ) ապահովեց Թուրքիայի համար Քրդական հարցի՝ որպես նրա հիմնական խնդիրներից մեկի շարունակականությունը:

2024 թ. նոյեմբերի 27-ին Թուրքիայի աջակցությամբ սիրիական ընդդիմության ձեռնարկած հարձակումը և Սիրիայի նկատմամբ Անկարայի փաստացի վերահսկողության հաստատումը հիմնովին փոխեցին Մերձավոր Արևելքում ուժերի հաշվեկշիռը: Սիրիայում ՌԴ և Իրանի ծախողումը կարող է բացասաբար ազդել ՀՀ անվտանգային միջավայրի վրա և ամրապնդել Ադրբեջանի դիրքերը: Իրավիճակը Հայաստանի համար ավելի է բարդանալու, եթե ԱՄՆ-ը և Իսրայելը Ադրբեջանի գաղտնի աջակցությամբ հարվածներ հասցնեն Իրանին: Իրադարձությունների զարգացման նման սցենարն իրական սպառնալիք է ստեղծում Սյունիքի համար:

# ТРАНСФОРМАЦИИ КУРДСКОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ В КОНТЕКСТЕ СИРИЙСКОГО КРИЗИСА

*А. С. САИЯН, кандидат исторических наук, учёный-аналитик ЦРСИ ИНСИ НИУО МО РА, научный сотрудник Института истории НАН РА*

РЕЗЮМЕ

В 2011 г. в результате «Арабской весны» в Сирии была создана самопровозглашенная курдская автономия Рожава, в которой основной руководящей партией является созданная РПК Партия демократического союза, что вызвало трансформацию курдской политики Турции. Турция стала более активно вовлекаться в Сирийский конфликт. Однако до 2016 г. Эрдоган избегал вмешательства напрямую, а использовал против курдов спонсируемые им исламистские организации. Но в 2015 г. в Сирийский конфликт вмешалась Москва, и Турция с 2016 по 2019 гг. осуществила три вторжения в Сирию, захватив некоторые районы Северной Сирии и разделив Рожаву на две части.

Тем не менее Эрдогану не удалось решить свою главную задачу – уничтожить Рожаву, на территорию которой вступили войска сирийского правительства и России, а в результате выборов 2023–2024 гг. присутствие РПК в турецком парламенте и местных органах власти возросло. Тогда Эрдоган прибегнул к насилию под надуманными предлогами, сажая курдских депутатов и мэров, что вызвало еще большие осложнения как внутри страны, так и в отношениях с западными странами и международными организациями.

В связи с этим Эрдоган, чтобы выиграть время, притворился, что идет на уступки. На самом же деле спонсируемые им исламистские организации при поддержке турецкой армии 27 ноября начали наступление в Сирии и 8 декабря заняли всю территорию страны, за исключением Рожавы.

В настоящее время приход к власти в Сирии протурецких сил дает возможность Эрдогану совместными действиями турецких и сирийских сил захватить курдскую автономию и подавить курдское освободительное движение. Поскольку США и Израиль выступают против уничтожения Рожавы, то Эрдоган пытается воспользоваться вовлеченностью США в углубляющиеся экономические войны с Китаем и урегулирование Украинского конфликта и Израиля – в конфликт с Ираном и группировкой ХАМАС и как можно быстрее захватить Рожаву, пока ведущие государства и международные организации не оказывают существенного противодействия.

# TRANSFORMATIONS OF TURKEY'S KURDISH POLICY IN THE CONTEXT OF SYRIAN CRISIS

*A. S. SAYIYAN, PhD in Historical Sciences, Research Fellow, CRSS, INSS, NDRU, MOD, RA, Research Fellow, Institute of History, NAS, RA*

SUMMARY

In 2011, the Arab Spring in Syria entailed on the creation of the self-proclaimed Kurdish autonomy of Rojava, in which the main ruling party is the PKK-established Democratic Union Party, which caused a transformation of Turkey's Kurdish policy. Turkey's involvement in the Syrian conflict grew more and more active. However, until 2016, Erdogan avoided direct intervention, nevertheless using Islamist organizations sponsored by him against the Kurds. Anyhow, in 2015, Moscow intervened in the Syrian conflict, and Turkey carried out three invasions of Syria from 2016 to 2019, occupying territories of Northern Syria and dividing Rojava into two parts.

Nonetheless, Erdogan failed to achieve his main goal of destroying Rojava, whose territory was invaded by the Syrian government and Russian troops, in addition, the PKK presence in the Turkish parliament, as well as local authorities increased on account of the 2023-2024 election results. Erdogan then resorted to violence under far-fetched pretexts, imprisoning Kurdish MPs and mayors, this causing even greater complications both domestically and in relations with Western countries and international organizations.

In this regard, in order to gain time Erdogan pretended to make concessions. As a matter of fact, the Islamist organizations sponsored by him, launched a Turkish army-supported offensive in Syria on November 27 and occupied the entire territory of the country, excluding Rojava, on December 8.

At this point, the coming to power of pro-Turkish forces in Syria gives Erdogan the opportunity to seize the Kurdish autonomy and suppress the Kurdish liberation movement through joint actions of Turkish and Syrian forces. Since the US and Israel are against the destruction of Rojava, Erdogan is trying to take advantage of the US involvement in the deepening economic warfare with China and the settlement of the Ukrainian conflict, and as of Israel – in the conflict with Iran and the Hamas group, and to seize Rojava as quickly as possible, while leading states and international organizations do not put up significant resistance.

DOI: 10.61760/18290108-pra.25.1-68

# ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈԲԲԻԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ*

*Հ. Ա. ՓԱՇԱՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ՏՌՎԿ գիտնական-վերլուծաբան*



Վերլուծելով վերջին տարիներին Հայաստանի ու Ադրբեջանի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականությունները՝ հետազոտողները հիմնականում կենտրոնանում են դրանց փոխակերպման աշխարհաքաղաքական (ՌԴ – Արևմուտք հակամարտություն) և տնտեսական (էներգառեսուրսներ ու տարանցիկ ուղիներ) կողմերի վրա: Այս համատեքստում հաճախ բավարար ուշադրության չի արժանանում քաղաքականության սուբյեկտներից մեկի՝ տվյալ դեպքում Ռուսաստանում ադրբեջանական լոբբիի ազդեցությունը: Ուստի Հարավային Կովկասում ռուսաստանյան դիվանագիտության փոխակերպումներն ու Հայաստանի նկատմամբ քաղաքականությունը լիարժեք կերպով հասկանալու համար կարևոր նշանակություն ունեն այդ լոբբիի գործունեության վերլուծությունն ու գնահատումը:

Սույն հոդվածում նպատակ ենք դրել ռուսաստանյան, հայկական, ադրբեջանական և արևմտյան բաց աղբյուրներում եղած տեղեկույթի ուսումնասիրությամբ ու փաստերի առադրմամբ ներկայացնել ՌԴ-ում ադրբեջանական լոբբիի ձևավորման ու գործունեության առանձնահատկությունները, գործունեության մեթոդներն ու միջոցները, հակահայկական թեզերն ու դրանց փոխակերպումները՝ 2020 թ. պատերազմից առաջ ու հետո, ազդեցությունը հայ-ռուսաստանյան հարաբերությունների վրա:

**Ռուսաստանում ադրբեջանական լոբբիի ձևավորման ու գործունեության առանձնահատկությունները:** Ի տարբերություն ԱՄՆ-ից և արևմտյան այլ պետություններից՝ Ռուսաստանը չունի ձևավորված լոբբինգային կառույցների սահմանակարգված համակարգ, թեև այդ ուղղությամբ արդեն ձեռնարկվել են որոշակի քայլեր[1]: Բնականաբար այս հանգամանքը դժվարացնում է խնդրի համակողմանի ուսումնասիրությունը և¢տեղեկույթի ձեռքբերման, և¢որոշումների կայացման վրա ազդեցության մեթոդների ու միջոցների պարզման առումով:

---

* Հոդվածն ստացվել է 21.02.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 14.04.2025:

[1] Տես *В. Субочев.* Лоббизм в России: природа, специфика, проблемы правового регулирования. «Право и управление. XXI век», 2014, № 2(31) (http://pravo.mgimo.ru/sites/default/files/pdf/03_subochevv.pdf):

Սակայն դա չի նշանակում, որ տարբեր խմբեր ու շրջաններ չեն ձեռնարկում քայլեր իրենց շահերն առաջ մղելու ուղղությամբ: Խոսքը վերաբերում է նաև ադրբեջանական լոբբինգային կառույցներին, որոնց թիվն զգալիորեն աճում է ԽՍՀՄ փլուզումից հետո[2]: ՌԴ-ում գործող հայտնի կառույցներից են 1999 թ. հիմնադրված «Ռուսաստանի ադրբեջանցիների ազգային մշակութային դաշնային ինքնավարությունը» («ՌԱԱՄԴԻ»)[3], «Ադրբեջանի քաղաքացիական ասամբլեան»՝ ներառելով «Դոլգ», «Օջագ», «Բակինեց», «Արազ» ՀԿ-ները, որոնք սերտորեն կապված էին Ռուսաստանում Ադրհ դեսպանության հետ[4]:

Ադրբեջանական լոբբիստական կառույցների ձևավորման ու գործունեության առանձնահատկություններից է դրանում պաշտոնական Բաքվի առանցքային դերը: Այսպես. 2001 թ. մարտի 5-ին Հ. Ալիևի ջանքերով Մոսկվայում հիսուն ադրբեջանական ՀԿ-ների ներգրավմամբ ստեղծվեց «Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես» (ՀԱԿ) կազմակերպությունը, որի ղեկավար կազմում ընդգրկվեցին «ադրբեջանական» ծագումով հայտնի գործիչներ, գիտնականներ, մտավորականության և գործարար շրջանների ներկայացուցիչներ[5]: Սակայն նրա փաստացի ղեկավարը Ադրհ ՆԳՆ ներկայացուցիչ գեներալ Վիդադի Ոզաևն էր[6], իսկ վերահսկողությունը վերապահված էր ազգային անվտանգության նախարարության առաջին վարչությանը[7], որի աշխատողները պաշտոնապես գրանցված էին որպես ֆինանսիստներ[8]: Կոնգրեսն իրագործում էր բազմաթիվ նախագծեր, այդ թվում՝ ՌԴ ադրբեջանցիներին միավորելու, յուրային երկրի մասին «ճշմարտությունը» տարածելու[9], Ղարաբաղյան խնդիրն իրենց տեսլականով կարգավորելու ուղղությամբ[10]: Այնուհետև՝ 2001 թ. նոյեմբերին, Հ. Ալիևի նախաձեռնությամբ

---

[2] Տես *А. Анненкова, О. Султанов, Н. Тюрюканов.* Сила азербайджанской диаспоры в России, 12.03.2014 (https://zakon-poryadok.mirtesen.ru/blog/43691081425/Sila-azerbaydzhanskoy-diasporyi-v-Rossii):

[3] Տես «Федеральная национально-культурная автономия азербайджанцев России», 09.04.2021 (https://fnkaa.ru/fnka-azerros/istoriya/):

[4] Տես *Р. Мустафаева.* Россия - Азербайджан: роль диаспор в развитии культурно-гуманитарного сотрудничества (https://cyberleninka.ru/article/n/rossiya-azerbaydzhan-rol-diaspor-v-razvitii-kulturno-gumanitarnogo-sotrudnichestva/viewer):

[5] Տես «Всероссийский азербайджанский конгресс», 19 октября 2004 г. (http://kremlin.ru/supplement/2058):

[6] Տես *Ա. Անենկովա, Օ. Սուլտանով, Ն. Տյուրյուկանով,* Նշ. աշխ.:

[7] Տես *Игорь Михайлин.* Азербайджанское лобби в РФ, 03.12.2013 (https://igor-mikhaylin.livejournal.com/1470689.html?ysclid=m4v11wahhq851134557):

[8] Տես «Уроки Азии в Москве», 14 сентября 2002 г. (https://stringer-news.com/publication.mhtml?Part=39&PubID=1423):

[9] Տես “Moscow hosts 3rd All-Russian Azerbaijani Congress”. “AZERTAG”, 25.11.2011 (https://azertag.az/en/xeber/moscow_hosts_3rd_all_russian_azerbaijani_congress-283473):

[10] Տես «Всероссийский азербайджанский конгресс - это мост дружбы между народами Азербайджана и России». “AZERTAG”, 20.10.2004 (https://azertag.az/ru/xeber/vserossiiskii_azerbaidzhanskii_kongress___eto_most_druzhby_mezhdu_narodami azerbaidzhana_i_rossii-636006):

Բաքվում կայացավ աշխարհի ադրբեջանցիների առաջին համագումարը[11], որին հետևեց հաջորդ կարևոր հաստատութենական քայլը՝ 2002 թ. հուլիսի 5-ին ԱդրՀ նախագահի հրամանագրով ձևավորվեց արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքի պետական կոմիտեն: Այդպիսով՝ «աշխարհի տարբեր երկրներում ապրող ադրբեջանցիների կազմակերպված սփյուռքի ձևավորումը և լոբբինգի ստեղծումը դարձան ԱդրՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը»[12]:

Բացի այդ, Հ. Ալիևը, դեռ խորհրդային շրջանից տիրապետելով ռուսաստանյան վերնախավի հետ արդյունավետ կերպով աշխատելու նրբություններին, նախագահի գրասենյակին կից ստեղծեց հատուկ հիմնադրամ, որի միջոցներն ուղղվում էին «առանձնահատուկ աշխատանք» կատարելուն: Դրանք նախատեսում էին «շփումներ» ՌԴ կառավարության և քաղաքական գործիչների հետ[*], Ադրբեջանի մասին ռուսաստանյան լրատվամիջոցներում հայտնված անցանկալի տեղեկատվության արգելափակում, փիար արշավների անցկացում և այլն[13]: Հեյդար Ալիևը գաղտնի կերպով մշակված այս ծրագիրն անվանում էր «21-րդ դարի ամենակարևոր խնդիրը», որի իրական նպատակը ՌԴ բոլոր կառույցների քաղաքականության վրա արդյունավետ ազդեցություն գործելն էր[14]:

Իլհամ Ալիևի կառավարման տարիներին այս ուղղությամբ ձեռնարկվող քայլերը շարունակվեցին, և ադրբեջանական լոբբիի գործունեությունը վերջնականապես ստացավ «պետական պատվերի» ձև, այն է՝ գլխավորապես քարոզվում էին և կյանքի կոչվում թեզեր, որոնք առաջ էր քաշում պաշտոնական Բաքուն: Դրանց ֆինանսական կողմը հուսալիորեն ապահովելու համար 2007 թ. Հեյդար Ալիևի հիմնադրամի ՌԴ մասնաճյուղի ղեկավար նշանակվեց նրա թոռը՝ Լեյլա Ալիևան, որը 2008 թ. դարձավ նաև ՌԴ ադրբեջանական երիտասարդական կազմակերպության նախագահ[15]:

**ՌԴ-ում ադրբեջանական լոբբիի հակահայկական գործունեության հիմնական մեթոդներն ու միջոցները:** Ռուսաստանում ադրբեջանական

---

[11] Տես *Ռ. Մուստաֆաև,* Նշ. աշխ.:

[12] Տես «Государственный Комитет по работе с диаспорой Азербайджанской Республики» կայքէջը (https://diasporamap.com/ru/content/1):

[*] Ամերիկյան հետազոտող Էնտոնի Նոունզը, առանձնացնելով հաջող լոբբինգի վեց առանցքային բաղադրիչ, նշում է, որ լոբբիստներն ավելի շատ հենվում են օրենսդիրների և գործադիր մարմնի ներկայացուցիչների հետ անձնական հանդիպումների վրա, ինչը տպավորիչ է և մեծացնում է հնարավորությունները, քանի որ, երբ քաղաքականություն մշակողները տեղեկատվություն են ցանկանում, նրանք հակված են դիմելու իրենց ծանոթներին (տես *A. Nownes.* Total Lobbying: What Lobbyists Want (and How They Try to Get it). N.Y., 2006, PP. 90 - 100):

[13] Տես *Ա. Անենկովա, Օ. Սուլտանով, Ն. Տյուրյուկանով,* Նշ. աշխ.:

[14] Տես *Իգոր Միխայլին,* Նշ. աշխ.:

[15] Տես «Հեյդար Ալիև» հիմնադրամի պաշտոնական կայքէջը (https://heydar-aliyev-foundation.org/ru/content/index/143/):

լոբբիի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա կիրառել է լոբբինգի տարբեր մեթոդներ ու միջոցներ*:

**Էթնիկական լոբբինգ.** ինչպես նշվեց, դեռ 2000-ական թվականներին աշխարհի տարբեր երկրներում ապրող ադրբեջանցիների կազմակերպված սփյուռքի ձևավորումը և լոբբինգի ստեղծումը դարձան ԱդրՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Որպես արդյունք՝ բազմաթիվ կազմակերպություններ ստեղծվեցին նաև ՌԴ-ում, դրանցից առավել հայտնի են «Ադրբեջանի քաղաքացիական ասամբլեան», ՌԱԱՄԴԻ-ն , ՀԱԿ-ը, «Ռուսաստանի ադրբեջանցիների լիգան», «ՌԴ ադրբեջանական երիտասարդական կազմակերպությունը» և այլն**: Ռուսաստանում առկա ադրբեջանական շուրջ 260 (ըստ մեկ այլ աղբյուրի՝ 62)[16] հասարակական կազմակերպությունները[17] մեկ սփյուռքյան կառույցում միավորելու նպատակով 2019 թ. ապրիլի 27-ին Մոսկվայում տեղի ունեցած ադրբեջանցիների համաժողովում «Աշխարհի ադրբեջանցիների միության» և «Համաշխարհային ադրբեջանական մշակութային հիմնադրամի» նախագահ Ֆիզուլի Մամեդովը միաձայն ընտրվեց «Ռուսաստանի ադրբեջանցիների միության» նախագահ[18]:

Ռուսաստանյան հասարակության մեջ իրենց ազգային սփյուռքի դերն ու սոցիալ-քաղաքական նշանակությունը ամրապնդելու նպատակով Ռուսաստանում գործող ադրբեջանական կառույցներն իրագործում են բազմաթիվ նախագծեր՝ գործնական կապեր հաստատելով ռուսաստանյան տարբեր կազմակերպությունների հետ***: ՌԴ ադրբեջանական սփյուռքը, որը համարվում է թվաքանակով ամենամեծը (տարբեր տվյալներով՝ 3-3,5 միլիոն) ու ֆինանսապես ամենակարողունակը (ՌԴ հարյուր ամենահարուստ մարդկանց թվում կան ծագումով մի քանի ադրբեջանցիներ)[19], զբաղվում է նաև հա-

---

* Կախված կիրառվող միջոցներից ու մեթոդներից՝ քաղաքականության մեջ լոբբինգը ձեռք է բերում համապատասխան անվանում, օրինակ՝ պետական կառույցների լոբբինգ, բիզնես ընկերությունների լոբբինգ, էթնիկ խմբերի, ուղեղային կենտրոնների, նավթագազային և այլն (հանգամանորեն տես *Է. Նոււնզ,* Նշ. աշխ., էջ 12–16):

** Սփյուռքի հետ աշխատանքի կոմիտեի կայքում վերջին՝ 2018 թ. տեղեկատվության համաձայն, ՌԴ-ում գործող կառույցների թիվը հասնում է 62-ի (տես «Государственный Комитет по работе с диаспорой Азербайджанской Республики» կայքէջը (http://diasporamap.com/az/country/188)):

16 Տես նույն տեղում:

17 Տվյալ շրջանում նրանց միջև առկա հակասությունների մասին ավելի հանգամանորեն տես *Азер Мурадбейли*. Как Физули Мамедов азербайджанскую диаспору из подвалов привёл в пятизвёздочные отели, 30 июля 2019 г. (https://minval.az/news/ 123908980):

18 Տես «Физули Мамедов – новый лидер диаспоры в России», 30.05.2019 (https://ednews.net/ru/news/society/369466-fizuli-mamedov-noviy-lider-diaspori-v-rossii):

*** Օրինակ ՀԱԿ-ը համագործակցության պայմանագրեր էր ստորագրել Ռուսաստանի ժողովուրդների ասամբլեայի և ՌԴ Պետդումայի ազգությունների հանձնաժողովի հետ (տես «Всероссийский азербайджанский конгресс», 19 октября 2004 г. (http://kremlin.ru/supplement/2058)):

19 Տես *С. Разинов.* Чье лобби влиятельнее в России? 20.10.2020 (https://aftershock.news/?q=node/914399&full):

մայնքների կազմակերպման, ֆինանսավորման, նոր կառույցների հիմնադրման, համայնքի «առաջնորդների առաջքաշման»*, երիտասարդ կադրերի պատրաստման, քարոզչության հարցերով[20]: Օրինակ՝ ըստ «Ռոդնոյ Նովոկուզնեցկ» կայքի՝ Պետդումայի պատգամավոր Դ. Ի. Սավելևը ՌԴ խորհրդարանում ներկայացնում է ոչ թե իր ընտրողների, այլ Ադրբեջանի շահերը՝ փորձելով Ռուսաստանում ոչ միայն ապահովել ադրբեջանական բիզնեսի համար նպաստավոր պայմաններ, այլև տարածել «հայերի գրաված Լեռնային Ղարաբաղի անհապաղ ազատագրման մասին» թուրք-ադրբեջանական քարոզչական թեզը[21]:

**Տեղեկատվական լոբբինգ.** Ադրբեջանական լոբբինգի հաճախ կիրառվող մեթոդներից է կեղծ «քննարկումներ» ձևավորող, ձեռնածուական գնահատականներ տարածող, Ադրբեջանի քարոզչության դրույթներն առաջ մղող փորձագետների և բլոգերների հավաքագրումը: Հասարակական կարծիքի վրա ազդելու, հատկապես երկու պետությունների ընդհանուր շահերը շեշտելու, հակահայկական հոդվածներ պատվիրելու, Ադրբեջանը «դրական կերպարի» լույսով ներկայացնելու համար 2000-ական թվականներից սկսած Ռուսաստանում կազմակերպում են տարբեր բնույթի միջոցառումներ ու ռազմավարական «մեդիա արշավներ»[22]: Օրինակ՝ «Արդարություն Խոջալուի համար» միջազգային լայնածավալ տեղեկատվական-քարոզչական արշավը նախաձեռնել է Հեյդար Ալիևի հիմնադրամի ՌԴ ներկայացուցչությունը՝ նախագահ Լեյլա Ալիևայի անմիջական ջանքերով և ռուսաստանցիների ներգրավմամբ[23]: Նրան է վերագրվում նաև Մոսկվայում «Բաքու» ամսագրի հիմնումը[24], իսկ «ՌԱՍՄԴԻ»-ին՝ «Ազեր-Մեդիա» հրատարակչության և «ԱԶԵՌՌՈՍ» մեդիա հոլդինգի ստեղծումը, որի շրջանակներում լույս էին տեսնում «Ես քաղաքացի եմ» թերթն ու «Լրաբեր. XXI դար» ամսագիրը[25] և

* Որպես օրինակ կարելի է նշել Սանկտ Պետերբուրգի երկու նախանգապետների (Բեգլով և Պոլտավչենկո) արմատներով Բաքվից լինելը և թուրք-ադրբեջանական բիզնեսի հետ նրանց սերտ առնչությունները: Դա հնարավորություն է տվել 10 տարվա ընթացքում հյուսիսային մայրաքաղաքում իրագործելու շուրջ 50 միլիարդ ռուբլու շինարարական ծրագրեր (Արևմտյան արագընթաց մայրուղի, Լախտակենտրոն, Պուլկովո օդանավակայան և այլն) (տես «Агенты влияния: кто и как лоббирует интересы Азербайджана в России», 19 ноября 2021 г. (https://realtribune.ru/agenty-vliyaniya-kto-i-kak-lobbiruet-interesy-azerbajdzhana-v-rossii/)):

[20] Տես «Государственный Комитет по работе с диаспорой Азербайджанской Республики» կայքէջը (https://diasporamap.com/ru/content/1):

[21] Տես «“Лоббинг” в спину собственной стране», 15 июня 2016 г. (https://arevelkcenter.com/analytics-in-russian/lobbing-v-spinu-sobstvennoj-strane):

[22] Տես *Ա. Սիմավորյան,* Ադրբեջանական լոբբինգը ՌԴ-ում, 2023 (https://hal.science/hal-04352426/document):

[23] Տես *Е. Кришталев.* Справедливость для Ходжалы. «Независимая газета», 26 февраля 2010 г. (http://www.ng.ru/ideas/2010-02-26/7_hojala.html):

[24] Տես «Հեյդար Ալիև» հիմնադրամի պաշտոնական կայքէջը (https://heydar-aliyev-foundation.org/ru/ content/index/143/):

[25] Տես «Из истории». «Федеральная национально-культурная автономия азербайджанцев России», 20.09.2015 (https://fnkaa.ru/fnka-azerros/istoriya/):

Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսի հովանու ներքո էլ երկրից դուրս ադրբեջաներենով հեռարձակվող առաջին հեռուստառադիոընկերության հիմնումը[26]: Հատկանշական է այս գործում, բացի ադրբեջանցիներից, ռուսաստանցի փորձագետների, լրագրողների, հասարակական գործիչների և այլ ոլորտների ներկայացուցիչների ներգրավումը, ընդսմին դրանց թիվն ու ազդեցությունը աստիճանաբար աճում են[27]:

**Բիզնես լոբբինգ.** գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ ադրբեջանական ծագում ունեցող գործարարները սերտ հարաբերություններ ունեն ՌԴ պետական համակարգի տարբեր օղակների ներկայացուցիչների հետ, ինչը կարևոր միջոց է լոբբինգի համար: Տարեցտարի ավելացվող պատժամիջոցների ենթարկվող ՌԴ-ում, որի տնտեսությունը առանց այդ էլ բավական մեծ չափով կախված է հումքային ռեսուրսներից, զգալիորեն մեծացել է ադրբեջանական նավթագազային լոբբիի ազդեցությունը, քանի որ հենց այս ոլորտում նա ունի բավական ուժեղ դիրքեր: Դրա շնորհիվ վերջին տարիներին ադրբեջանական լոբբիստները ակտիվորեն մասնակցում են Ռուսաստանի կառավարման բարձր օղակներում Ադրբեջանի օգտին տարվող քարոզչությանը, որտեղ ստեղծել են ամուր կապեր, ներդրել իրենց մարդկանց, միլիոնավոր դոլարներ են ծախսում տարբեր պետական ու համայնքային կառույցներում ներդրումներ կատարելու վրա: Օրինակ՝ փաստերը վկայում են, որ ադրբեջանցի միլիարդատեր Գոդ Նիսանովը կապեր ունի Ռուսաստանի ու Ադրբեջանի իշխանական շրջանների հետ*:

Ռուսաստանի քաղաքական և տնտեսական վերնախավի ներկայացուցիչների հետ կապված են Ադրբեջանից տեղափոխված մի շարք այլ գործարարներ, որոնցից են Ռուսաստանի գլխավոր նավթային մագնատ ու ՌԴ խոշորագույն նավթային ընկերության՝ «Լուկոյլ»-ի հիմնադիր ու գլխավոր

---

[26] Տես *L. Garayeva.* The Role of the Diaspora in Strengthening the Azerbaijani-Russian Relations. “Metafizika”, 2022, Vol. 5, Issue 3, Serial 19 (http://metafizikajurnali.az/storage/images/site/files/Metafizika-19/Metafizika.Vol.5%2CNo.3%2CSerial.19%2Cpp.139-155.pdf):

[27] Տես «Агенты влияния: кто и как лоббирует интересы Азербайджана в России», 19 ноября 2021 (https://realtribune.ru/agenty-vliyaniya-kto-i-kak-lobbiruet-interesy-azerbajdzhana-v-rossii/): 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանի համար և՛ փիար, և՛ ֆինանսական տեսանկյունից կարևոր դարձավ այսպես կոչված ազատագրված տարածքների ցուցադրումը: Օրինակ՝ 2024 թ. Ադրբեջան, ներառյալ՝ «ազատագրված տարածքները», այցելել են 538 օտարերկրյա լրագրողներ 54 երկրներից, տարվա ընթացքում 9 երկրների լրագրողների համար կազմակերպվել են մեդիաշրջագայություններ դեպի «ազատագրված տարածքներ» և երկրի այլ շրջաններ (տես “Press release of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan on the results of 2024”, 28 December 2024 (https://www.mfa.gov.az/en/news/no51724)):

* Գ. Նիսանովը և Զ. Իլիևը պետական խորհրդի քարտուղար Ալեքսեյ Դյումինի եղբորը՝ Արտեմ Դյումինին դարձրել են իրենց գործընկեր, Ալեքսեյ Ռոգոզինին՝ Դմիտրի Ռոգոզինի որդուն, նշանակել «Նագատինսկայա» տրանսպորտային հանգույցի գործադիր տնօրեն (տես «Сын Рогозина возглавил проект строительства транспортного узла в Москве», 12 сентября 2019 г. (https://www.rbc.ru/business/12/09/2019/5d7a11129a79471da4d54bbc)):

բաժնետեր Վագիթ Ալեքպերովը, առևտրային ոլորտում հայտնի Արազ Աղալարովը, հիմնականում ոգելից խմիչքների արտադրությամբ զբաղվող Էլման Բայրամովը, շինարարական մագնատ Մեհրաջ Բաբաևը, «Նորտգազի» նախագահ, ՌԴ Դաշնային խորհրդի նախկին անդամ Ֆարհադ Ահմեդովը և ուրիշներ:

**ՌԴ ադրբեջանական լոբբիի հակահայկական թեզերը նախապատերազմյան շրջանում:** ՌԴ-ում ադրբեջանական լոբբիի գործունեության հիմնական թեզերը տարիներ շարունակ կապված էին Ղարաբաղյան հիմնախնդրում Բաքվի տեսակետի տարածմանն ու Հարավային Կովկասում ռուսաստանյան քաղաքականության ծանրության կենտրոնի տեղափոխմանը Երևանից Բաքու: Բացի այդ, ակտիվորեն առաջ էր մղվում Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ ադրբեջանցիների մտերմության, Ռուսաստանի Դաշնության նկատմամբ նրանց անձնուրաց հավատարմության, ինչպես նաև վերջին տարիներին Ադրբեջանի իբր ձեռք բերած ակնառու տնտեսական հաջողությունների դրույթները[28]:

Այդ նպատակով խնդիր էր դրվել բարելավելու ռուս-ադրբեջանական հարաբերությունները, ազդելու ՌԴ հասարակական կարծիքի վրա՝ հասնելով ՌԴ պաշտոնական դիրքորոշման փոփոխությանը, որոնելու քաղաքական գործիչների և գործարարների, որոնք կարող են դառնալ Ադրբեջանի շահերն արտահայտողը[29], ուժային կառույցներ ներմուծելու իրենց գործակալներին, աջակցելու ադրբեջանական սփյուռքին անվտանգության մասնավոր ընկերությունների ակտիվ ցանցեր ստեղծելու գործում, վերահսկելու առանցքային շուկաները, իրենց կողմը գրավելու տարբեր մակարդակի պաշտոնյաների և այդ գործում ակտիվորեն օգտագործելու Ադրբեջանի ու Թուրքիայի հատուկ ծառայությունները[30]: Հենց այս տեսակի լոբբիստներն են առանձնակի կարևորվում, քանի որ ռուսաստանցիների մեծ մասը ադրբեջանցիներից բխող գաղափարներին վերաբերվում է ակնհայտ նախապաշարմունքով, ուստի ՌԴ գործիչների նմանատիպ հայտարարությունները շատ ավելի մեծ ազդեցություն են գործում և վստահություն ներշնչում[31]: Բաքվում հասկանում են, որ նախկինում այլ ոլորտներում աչքի ընկած ռուսաստանցի փորձագետները (և՛ ազգային-հայրենասիրական, և՛ ազատական հոսանքի՝ կախված հանրության հակումներից) ակնհայտորեն շատ ավելի մեծ հաջողությունների կհասնեն իրենց ձեռնտու տրամադրություններ ստեղծելու գործում[32]:

Այսպես. ըստ քաղաքագետ և հասարակական գործիչ Ա. Սևաստյանովի՝

[28] Տես *Я. Амелина.* Азербайджанское лобби в РФ и российские проводники его интересов: идеологический аспект. «Регион и мир», 2010, № 1:

[29] Տես *Ռ. Մուստաֆաև,* Նշ. աշխ.:

[30] Տես «Агенты влияния: кто и как лоббирует интересы Азербайджана в России», 19 ноября 2021 г. (https://realtribune.ru/agenty-vliyaniya-kto-i-kak-lobbiruet-interesy-azerbajdzhana-v-rossii/):

[31] Տես *Յա. Ամելինա,* Նշ. աշխ.:

[32] Տես “Azerbaijani lobby in Russia, Israel, IRI and France”. Ed. by V. Ruzhansky, A. Yevstratov. Yerevan, 2022, PP. 17- 18:

ՀՀ-ի հետ միությունը և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես ծանր բեռ է, ոչինչ չի կարող տալ Ռուսաստանին, ուստի նա կոչ է անում «ուղղելու» ճակատագրական սխալը և Հայաստանից շրջվելու դեպի Ադրբեջան[33]: Իրենց գրքում «ազատական» Ա. Գորյանինն ու «ազգայնական» Սևաստյանովը Ադրբեջանը ներկայացնում են որպես Երկրի վրա մի իսկական դրախտ, իսկ դրա աշխարհիկ մոդելը` որպես օրինակ ամբողջ մահմեդական Արևելքի համար, որը կարող է դառնալ Ռուսաստանի հզոր աջակիցը «սիոնացված Արևմուտքի» դեմ պայքարում[34]: Բաքվի տեղեկատվական արշավի շրջանակներում է հրապարակվել ռուսաստանցի գիտնական Յ. Պոմպեևի «Ղարաբաղյան օրագիրը», որում հեղինակն «արդար» պայքար է մղում Ղարաբաղյան հակամարտության մասին ճշմարտությունը Ռուսաստանի հանրությանը հասցնելու համար[35]: «Քաղաքական լրատվական գործակալության» հեղինակ Իգոր Բոյկովը Ղարաբաղյան խնդրում հայանպաստ կողմնորոշումը համարում է անընդունելի, քանի որ հայերին, միևնույն է, չես կարող դարձնել Ռուսաստանի անկեղծ ընկերներ ու դաշնակիցներ (Հայաստանի կրոնական և մշակութային հակվածությունը դեպի Ռուսաստան առասպել է), բայց դա կարող է Ադրբեջանին մղել Թուրքիայի ազդեցության գոտի[36]: Լրագրող Եվգենի Կրիշտալևը, զուգահեռ տանելով սերբական Կոսովոյի հետ, գրում է. «Ադրբեջանից նույնպես փորձում են պոկել նրա հոգին` Ղարաբաղը»[37]: Ադրբեջանի հետ գործակցության սկանդալային հետքեր ունեցող ռուս «գիտնական» Օլեգ Կուզնեցովի «Ճշմարտություն Ղարաբաղյան հակամարտության «առասպելների» մասին» գիրքը նվիրված է Ս. Տարասովի` Արցախի վերաբերյալ հնչեցրած տեսակետներին հակընդդեմ ադրբեջանական քարոզչական թեզերի տարածմանը[38]: Ավելին. որոշ ռուսաստանյան լրատվամիջոցներ արգելում են իրենց ռեսուրսներում հրապարակել Բաքվի տեսակետին հակասող նյութեր: Դրանցից կարելի է նշել ՏԱՍՍ-ը` հանձին գլխավոր խմբագրի առաջին տեղակալ Միխայիլ Գուսմանի, որը, քողարկվելով ռուսաստանյան լրատվամիջոցի անվան տակ[39], իրականում ադրբեջանական

[33] Տես *А. Севастьянов.* «Русскому об Азербайджане и азербайджанцах: новый взгляд». Речь, произнесенная перед членами клуба «Русский интерес» 18 февраля 2010 г. в связи с выходом книги А. Б. Горянина и А. Н. Севастьянова «Русскому об Азербайджане и азербайджанцах». «АПН», 19.02.2010 (http://www.apn.ru/special/article22413.htm):

[34] Տես *А. Горянин, А. Севастьянов.* Русскому об Азербайджане и азербайджанцах. М., 2009 (https://www.livelib.ru/book/1001564066-russkomu-ob-azerbajdzhane-i-azerbajdzhantsah-aleksandr-sevastyanov):

[35] Տես «В Москве вышла в свет книга «Карабахский дневник»», 19 января 2010 г. (http://1news.az/society/20100119015711332.html):

[36] Տես *И. Бойков.* От Махачкалы до Баку. «АПН», 28.01.2010 (https://www.apn.ru/publications/article22340.htm):

[37] Տես *Ե. Կրիշտալև,* Նշ. աշխ.:

[38] Տես *О. Кузнецов.* Правда о "мифах" Карабахского конфликта. М., 2013:

[39] Տես *Э. Бабаян.* То, что делает ТАСС, - это начало информационной войны

«Վեստի Կավկազա» և «Նեզավիսիմայա գազետա» պարբերականների տեղեկատվական ռեսուրսն է[40]:

**ՌԴ ադրբեջանական լոբբիի հակահայկական թեզերի փոխակերպումները հետպատերազմյան շրջանում:** Հետպատերազմյան շրջանում, այդ թվում՝ Արցախի հայաթափումից հետո, երբ Ադրբեջանի հիմնական նպատակներն իրագործված էին, ադրբեջանական լոբբին հայ-ռուսաստանյան հարաբերությունները պետական քաղաքականությանը համահունչ կերպով խաթարելու համար վերափոխեց իր գործունեության ուղղվածությունը՝ առաջ մղելով նոր քարոզչական թեզեր ու գաղափարներ: Հարկ է շեշտել, որ ՌԴ շահերի փոփոխման պայմաններում նպաստավոր իրավիճակ է ստեղծվել ադրբեջանական լոբբինգի համար:

2021 թ. Պետդումայի մի շարք պատգամավորների հետ այցելելով Շուշի՝ «Ազգային պաշտպանություն» ամսագրի գլխավոր խմբագիր Ի. Կորոտչենկոն «ազդարարեց» Բաքվի երկու մտավախությունները. Ադրբեջանում շատ են երկյուղում Հայաստանի ռևանշից, որում լուրջ ուժեր են ներգրավված նաև Ռուսաստանից, և բոլորը չէ, որ կճանաչեն երկրորդ ղարաբաղյան պատերազմի քաղաքական արդյունքները: Այդ շրջանից սկսած պաշտոնական Բաքուն պարբերաբար առաջ է քաշում «Հայաստանի սպառազինումը սպառնալիք է տարածաշրջանում խաղաղությանն ու անվտանգությանը» թեզը[41], ինչի մասին տարեսկզբին տված հարցազրույցում արդեն վերջնագրի ձևով հայտարարեց Ի. Ալիևը[42]: Քանի որ Հայաստանի զինվելու փաստն ինքնին Ռուսաստանի համար բացասական միտում չունի, հետևաբար նաև վտանգն ընկալելի չէ, ադրբեջանական լոբբին այն համեմում է Արևմուտքի՝ Հարավային Կովկասից Ռուսաստանին դուրս մղելու վտանգով[43]: Հրահանգվելով պաշտոնական Բաքվից՝ Ի. Կորոտչենկոն առաջ մղեց արևմտյան տեխնոլոգիաների հիմքի վրա Հայաստանում ՀՕՊ-ի համակարգերի տեղադրման՝ քաղավիացիայի համար սպառնալիքի թեզը[44]: Ավելի հեռուն գնալով ու, հավանաբար, փորձելով արտահայտել Հայաստանին պաշտոնական Կրեմլի ուղղած ազդակները, բայց նաև տուրք տալով ադրբեջանական լոբբիի քա-

---

против Армении: журналист, 10 сентября 2019 г. (https://infoteka24.ru/2019/09/10/45085/):

[40] Տես “Azerbaijani lobby in Russia, Israel, IRI and France”, P. 2:

[41] Տես «Джейхун Байрамов: Курс на вооружение Армении - угроза региональной безопасности». “AZERTAG”, 27.08.2024 (https://azertag.az/ru/xeber/dzheihun_bairamov_kurs_na_vooruzhenie_armenii_ugroza_regionalnoi_bezopasnosti-3152670):

[42] Տես «Ильхам Алиев дал интервью местным телеканалам», 07. 01. 2025 (https://president.az/ru/articles/view/67871):

[43] Տես *Игорь Кармазин.* Парижут без ножа: Франция пытается вытеснить Россию из Закавказья. Министр Лекорню пообещал Еревану системы ПВО и боеприпасы, 24 октября 2023 г. (https://iz.ru/1593915/igor-karmazin/parizhut-bez-nozha-frantciia-pytaetsia-vytesnit-rossiiu-iz-zakavkazia):

[44] Տես «Военный эксперт раскрыл «Москва-Баку» планы Запада на Южный Кавказ в 2025 году», 17.12.2024 (https://moscow-baku.ru/news/politics/voennyy_ekspert_raskryl_moskva_baku_plany_zapada_na_ yuzhnyy_kavkaz_v_2025_godu/):

բոզչությանը՝ համառուսաստանյան պետական հեռուստատեսության գլխավոր տնօրենի տեղակալ Դ. Կիսելյովը «Շաբաթվա լուրեր» հաղորդման ժամանակ շեշտեց՝ «Հայաստանը շատ զենքեր է ստանում Ֆրանսիայից և բացահայտ կերպով պատրաստվում է պատերազմի»[45]:

Ադրբեջանական լոբբիի գործունեության ներկայիս հիմնական ուղղություններից է Հայաստանի՝ որպես «Ռուսաստանին դավաճանած» երկրի կերպարի ստեղծումը[46]: Այս համատեքստում տարվող քարոզչությամբ՝ Արևմուտքի հետ ՀՀ մերձեցումն ու ՀԱՊԿ-ում հարաբերությունների սառեցումը ներկայացվում են որպես դավաճանական քայլ[47], Ռուսաստանի դեմ արևմտյան ռազմավարության կետերից մեկի իրականացում[48], որն իրողությունների բերումով ընկալելի է ՌԴ տարբեր շրջանների համար, ընդ որում, ՀՀ ու ՀԱՊԿ-ի հարաբերությունները պայմանավորվում են ոչ թե Հայաստանի դեմ արտաքին ագրեսիային այդ կառույցի չարձագանքելու հանգամանքով, այլ ներքաղաքական խնդիրներով[49]:

Պաշտոնական Բաքվից հրահանգավորվելով՝ ադրբեջանական լոբբին ՌԴ-ում հաճախ է քարոզում թեզեր՝ ՀՀ-ին 44-օրյա պատերազմն սկսելու մեջ մեղադրելուց[50] մինչև այն, որ Երևանը ցանկացած սցենարի դեպքում ստիպված կլինի բացել արտատարածքային միջանցք[51]: «Ադրբեջանի համար շարունակում է կենսական նշանակություն ներկայացնել «Զանգեզուրի միջանցքով» ավտոմճանապարհի բացումը», շեշտել է ռուսաստանցի լրագրող Դ. Կիսելյովը՝ հնչեցնելով Ալիևի հիմնավորումներն ու ՀՀ հասցեին բարձրաձայնվող սպառնալիքները և աղավաղելով նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը[52]:

---

[45] Տես Информационная программа «Вести недели», 12.01.2025 (https://smotrim.ru/video/2918619):

[46] Տես «Против Армении в России работает азербайджанское лобби: создают образ «предателя». Видео», 13.09.2023 (https://rusarminfo.ru/2023/09/13/protiv-armenii-v-rossii-rabotaet-azerbajdzhanskoe-lobbi-sozdayut-obraz-predatelya-video/):

[47] Տես «Политолог Марков: Армения намерена предать Россию и переметнуться к ее врагам», 19 ноября 2023 г. (https://argumenti.ru/politics/2025/03/941335):

[48] Տես *А. Корнелюк.* Выход Армении из ОДКБ: глупость или измена? 03.03.2024 (https://www.ritmeurasia.ru/news--2024-03-03--vyhod-armenii-iz-odkb-glupost-ili-izmena-71879); «Армения выполняет некий заказ Европейского Союза - Андрей Клинцевич», 3 февраля 2024 г. (https://www.youtube.com/watch?v=3k7rMLIVuKs):

[49] Տես «По итогам государственного визита в Казахстан и саммита ОДКБ Владимир Путин ответил на вопросы журналистов», 28 ноября 2024 г. (http://www.kremlin.ru/events/president/news/75689):

[50] Տես «Все 44 дня мы шли только вперед!». Интервью Ильхама Алиева главному редактору журнала «Национальная оборона» И. Коротченко, 24 сентября 2021 г. (https://oborona.ru/product/zhurnal-nacionalnaya-oborona/vse-44-dnya-my-shli-tolko-vpered-42610.shtml):

[51] Տես «Игорь Коротченко: Зангезурский коридор будет открыт при любых раскладах». "AZERTAG", 18.09.2023 (https://azertag.az/ru/xeber/igor_korotchenko_zangezurskii_koridor_budet_otkryt_pri_lyubyh_raskladah-2752465):

[52] Տես Информационная программа «Вести недели», 12.01.2025 (https://smotrim.ru/video/2918619):

ՀՀ-ին ներկայացվող ադրբեջանական պահանջներից մեկն էլ կապված է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման նպատակով ստեղծված ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման հետ[53]: Հաշվի առնելով Ռուսաստանում հնչած արձագանքները՝ կարող ենք ենթադրել, որ ռուս- արևմտյան հակասությունների ազդեցությամբ այս հարցում ևս Մոսկվան ունի ընբռնողական վերաբերմունք: Օրինակ՝ 2024 թ. տարեվերջյան ճեպազրույցում Մ. Զախարովան գրեթե նույնությամբ կրկնեց Ադրբեջանի պնդումը, թե ԵԱՀԿ Մինսկի խումբը ենթակա է լուծարման՝ հավելելով, որ «Հայաստանն ու Ադրբեջանը կարող են համատեղ կերպով նախաձեռնել այս կառույցի լուծարումը»[54]: Եթե Ադրբեջանի դեպքում ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման պահանջը պայմանավորված է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման նպատակով միջազգայնորեն ստեղծված միակ հաստատութենական կառույցից ձերբազատվելու ձգտմամբ՝ Արցախի էջը վերջնականապես փակելու նպատակով, ապա նույնաբովանդակ հայտարարությունները հենց ռուսաստանյան շահերի տեսանկյունից՝ թեկուզ հետագայում որպես լծակ օգտագործելու առումով, այնքան էլ հասկանալի չեն[55]:

## Ամփոփում

Այսպիսով՝ հայ-ռուսաստանյան հարաբերությունների և Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի վարած այժմյան քաղաքականության վրա զգալի է ՌԴ ադրբեջանական լոբբիի ազդեցությունը, մի սուբյեկտի, որի ստեղծումն ու գործունեությունը անմիջականորեն կապված են Բաքվի որդեգրած արտաքին քաղաքականության հետ:

2020 թ. Ղարաբաղյան պատերազմին նախորդող տարիներին և հատկապես հետպատերազմական փուլում՝ Արևմուտք–Ռուսաստան աշխարհաքաղաքական առճակատման, տարածաշրջանում Ադրբեջանի դիրքերի ամրապնդման, ՀՀ–ՌԴ հարաբերություններում տեղ գտած խնդիրների առկայության և այլ իրողությունների պայմաններում, ադրբեջանական լոբբինգի և նրա քարոզչական թեզերի կենսագործման համար ստեղծվեց նպաստավոր իրավիճակ: Թերևս վերոնշյալ հանգամանքներով կարելի է բացատրել Հայաստանին ուղղված Ադրբեջանի քարոզչական թեզերի նկատմամբ Ռուսաստանի ընբռնողական վերաբերմունքն ու տարբեր հարցերում զուգամիտվող արտաքին քաղաքականությունը:

---

53 Տես «Алиев призвал распустить Минскую группу ОБСЕ по Нагорному Карабаху». ИА «Красная Весна», 17 февраля 2024 г. (https://rossaprimavera.ru/news/fdc6f593):

54 Տես «Захарова: Баку и Ереван могут совместно инициировать роспуск Минской группы ОБСЕ», 25 декабря 2024 г. (https://tass.ru/politika/22772331):

55 Տես «Лавров: Минская группа ОБСЕ прекратила свою деятельность по инициативе США и Франции», 24 июня 2022 г. (https://tass.ru/politika/15023551):

## ВЛИЯНИЕ АЗЕРБАЙДЖАНСКОГО ЛОББИ В РОССИИ НА АРМЯНО-РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ

*Г. А. ПАШАЯН, кандидат политических наук, доцент, ученый-аналитик ЦРСИ ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

В статье анализируются и представляются особенности формирования и деятельности азербайджанского лобби в Российской Федерации, используемые методы и средства, антиармянские тезисы и их трансформации до и после войны 2020 года, а также влияние лобби на армяно-российские отношения. Показано, что для продвижения собственной повестки дня, начиная с 2000-ых годов, Азербайджан инициировал процесс консолидации азербайджанской диаспоры в Российской Федерации и формирования лоббистских структур с целью использования ее возможностей и финансовых ресурсов. В этих целях Баку использовал также партнерские отношения миллиардеров – выходцев из Азербайджана Вагита Алекперова, Года Нисанова, Зараха Илиева, Араза Агаларова и других.

Благодаря последовательной работе официальному Баку удалось создать инструменты для эффективной работы с российскими политиками, законодателями, экспертами, представителями СМИ. В годы, предшествовавшие Карабахской войне 2020 года, но особенно в послевоенный период, в силу геополитических противоречий между Западом и Россией, усиления позиций Азербайджана в регионе, проблем в армяно-российских отношениях и других реалий, были созданы благоприятные условия для азербайджанского лоббизма и реализации его пропагандистских тезисов. Возможно, вышеизложенные обстоятельства объясняют понимание Россией пропагандистских тезисов Азербайджана, направленных против Армении, и ее конвергентную внешнюю политику по различным вопросам.

## THE IMPACT OF THE AZERBAIJANI LOBBY IN RUSSIA ON THE ARMENIAN-RUSSIAN RELATIONS

*H. A. PASHAYAN, PhD in Political Sciences, Associate Professor, Research Fellow, CRSS, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

The article analyzes and presents the peculiarities of the formation and activities of the Azerbaijani lobby in the Russian Federation, its means and methods employed, the 2020 pre- and postwar anti-Armenian theses and their transformations, as well as its impact on the Armenian-Russian relations. It is demonstrated that in order to advance its own agenda,

starting from the 2000s, Azerbaijan initiated a process of consolidating the Azerbaijani diaspora in the Russian Federation and establishing lobbying structures with a focus on the use of its capabilities and financial resources. For the same purpose Baku has been using partnership relations with billionaires, who came from Azerbaijan. To name a few – Vagit Alekperov, God Nisanov, Zarakh Iliev, Aras Agalarov and a few more.

The official Baku was both consistent and successful in managing to create tools for effective work with Russian politicians, legislators, experts, and media representatives. In the pre-2020 Karabakh war, but more importantly in the post-war period, due to the geopolitical contradictions between the West and Russia, the strengthening of Azerbaijan's positions in the region, problems in the relations between Armenia and Russia, and other realities, favorable conditions were created for Azerbaijani lobbying and the implementation of its propaganda theses. The above circumstances can possibly explain Russia's understanding of Azerbaijani propaganda theses directed at Armenia and its convergent foreign policy on various issues.

DOI: 10.61760/18290108-ska.25.1-81



# ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՋԵՎԱՉԱՓԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

*Մ. Ա. ՇԻՐԻՆՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության պետ***



## Ներածություն

Արդի կապակցված ու համընդհանրացնող աշխարհում անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները դարձել են շատ ավելի բազմապիսի, բազմաոլորտ ու տարաբնույթ, երբ պետությունների միջազգային հարաբերությունների համակարգի որևէ կետում տեղի ունեցած իրադարձություն առաջ է բերում որոշակի փոփոխություններ ամբողջ համակարգում: Դրա հետևանքով միջազգային հարաբերությունների համակարգն այսօր բնութագրվում է աճող անկայունությամբ և բարդությամբ: Նման պայմաններում անվտանգային իրավիճակի կառավարելիությունը պահպանելու համար պետությունը պետք է ունենա, ըստ Էշբիի անհրաժեշտ բազմապիսության օրենքի, ավելի մեծ բազմապիսություն, քան համակարգի բնականոն աշխատանքը խաթարող գործոնների (սպառնալիքների) բազմապիսությունն է[1], ինչի ապահովումը առանձին պետությունների համար ըստ էության անլուծելի խնդիր է: Ուստի պետություններն ստիպված են գործելու ոչ միայն անհատական, այլև դաշինքի ու դաշնադրության ձևաչափերով, այսինքն՝ կոլեկտիվ անվտանգության սկզբունքով:

## 1. Տեսական հիմունքներ

Արևմտյան և ռուսաստանյան իրավաքաղաքական մշակույթների ներկայացուցիչները կոլեկտիվ անվտանգության նկատմամբ ունեն փոքր-ինչ տարբեր մոտեցումներ: Այսպես. ռուսալեզու աղբյուրներում կոլեկտիվ անվտանգությունը սահմանվում է որպես «միջպետական կազմակերպությունների, միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի, կոլեկտիվ մարմինների և ուժերի համախումբ, որը մի քանի պետություններ կամ ամբողջ համաշ-

---

* Հոդվածն ստացվել է 24.02.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 10.03.2025:

** Հեղինակը ներկայումս պաշտոնաթող է:

[1] Տես *W. Ross Ashby.* An Information to Cybernetics. Second Impression. London, 1957, PP. 206–213 (http://pespmc1.vub.ac.be/books/IntroCyb.pdf):

խարհային ընկերակցությունը տարածաշրջանային կամ համընդհանուր մակարդակում ստեղծում են մարդկային քաղաքակրթության դեմ ուղղված տարաբնույթ (տնտեսական, ռազմական, բնապահպանական և այլ) սպառնալիքները կանխելու կամ չեզոքացնելու նպատակով»[2]: Ըստ արևմտյան մոտեցման՝ դա մի համակարգ է, «որի միջոցով պետությունները փորձում են կանխել կամ դադարեցնել պատերազմը: Համաձայն կոլեկտիվ անվտանգության մասին պայմանավորվածության՝ որևէ պետության դեմ ագրեսորը դիտվում է որպես ագրեսոր մյուս բոլոր պետությունների դեմ, որոնք ձեռնարկում են ագրեսորի համատեղ հետմղում»[3]:

Կոլեկտիվ անվտանգության հայեցակարգի հիմքում, ըստ էության, դրված են Իմանուիլ Կանտի առաջ քաշած գաղափարներն ու դրույթները, որոնք ներկայացված են նրա «Դեպի հավիտենական խաղաղություն» հանրահայտ տրակտատում[4]: Մասնավորապես՝ նա գրում է. «Ժողովուրդներին՝ որպես պետությունների, կարելի է դիտել որպես առանձին մարդկանց, որոնք իրենց բնական (այսինքն՝ արտաքին օրենքներից անկախության) վիճակում համատեղ գոյությամբ իսկ խախտում են միմյանց իրավունքը և որոնց յուրաքանչյուր քայլ հանուն իրենց անվտանգության կարող է և պետք է մյուսից պահանջի նրա հետ մտնել մի կառույցի մեջ, որը նման է քաղաքացիականի և որում յուրաքանչյուրին կարող է երաշխավորվել իր իրավունքը: Դա կլինի ժողովուրդների միություն…»[5]: Հաշտության պայմանագիրը, դադարեցնելով միայն տվյալ պատերազմը, լիովին չի վերացնում ապագա պատերազմների բռնկման պատճառները, ուստի չի ստեղծում «խաղաղության վիճակ», այլ պահպանվում է «ռազմական վիճակը», այսինքն՝ մի վիճակ, «երբ միշտ էլ հնարավոր է գտնել նոր պատերազմի առիթ»: Մինչդեռ բանականությունը պատերազմը դատապարտում է որպես իրավական ընթացակարգի և պարտավորեցնում է խաղաղ վիճակի ստեղծում, մի վիճակի, որը, սակայն, «չի կարող ո՛չ հաստատվել, ո՛չ ապահովվել առանց ժողովուրդների միջև պայմանագրի կնքման: Ուստի պետք է գոյություն ունենա հատուկ տեսակի դաշինք, որը կարելի է անվանել խաղաղության դաշինք *(foedus pacificum)* և որը կտարբերվի խաղաղության պայմանագրից *(pactum pacis)*

---

[2] Տես «Система коллективной безопасности» (https://mchs.gov.ru/ministerstvo/o-ministerstve/terminy-mchs-rossii/term/3548):

[3] Տես “Collective security”. “Britannica” (https://www.britannica.com/topic/collective-security):

[4] Տես *Immanuel Kant.* Zum ewigen Frieden: Ein philosophischer Entwurf. Friedrich Nicolovius. Königsberg, 1795: Հայերեն թարգմանությունն է «Դեպի հարատև խաղաղություն»: Սակայն հայտնի է, որ Կանտը գործածել է “ewig” կրոնական գործածությամբ բառը (տես *G. Mainberger.* "Ewiger Friede". Warum ein Beweismittel in Kants philosophischem Entwurf? “Grenzen der kritischen Vernunft”. Basel, 1997, S. 264), ուստի մենք թարգմանել ենք՝ «հավիտենական»:

[5] Նույն տեղում (բերվում է ըստ՝ *И. Кант.* К вечному миру. Электронный ресурс, сс. 11- 12 (https://www.civisbook.ru/files/File/Kant_K_vechnomu_miru.pdf)):

այն բանով, որ վերջինս ձգտում է վերջ տալու միայն մի պատերազմի, այն դեպքում, երբ առաջինը՝ բոլոր պատերազմներին և ընդմիշտ»[6]:

Հիմնվելով բերված դատողությունների վրա՝ կոլեկտիվ անվտանգության տեսաբանները պատերազմների կանխման արդյունավետ միջոց են համարում կոլեկտիվ անվտանգության համակարգը: Նրանք առանձնացնում են այդ համակարգի հետևյալ հիմնական սկզբունքները.

- միջազգային հարաբերություններում ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքի գործադրումից հրաժարվելը, բացի անհրաժեշտ ինքնապաշտպանության դեպքից,
- դաշինքի որևէ անդամի դեմ ագրեսիան որպես բոլոր անդամների դեմ ագրեսիա ճանաչելը,
- պետությունների ներքին գործերին չմիջամտելը,
- միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելը,
- պետությունների ինքնիշխանական հավասարությունը,
- ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը,
- իրենց պարտավորությունները պարտաճանաչ կերպով կատարելու պետությունների պարտականությունը,
- պետությունների համագործակցությունը,
- անվտանգության անբաժանելիությունը (մեկի անվտանգությունը մյուսի հաշվին ապահովելու անթույլատրելիությունը)[7]:

Կոլեկտիվ անվտանգությունը կազմակերպվում է երկու մակարդակով՝ համընդհանուր (ունիվերսալ) և տարածաշրջանային: Համընդհանուր մակարդակի կազմակերպություններն են Ազգերի լիգան (ԱԼ, 1919- 1946) և Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ, 1945- ցայսօր), տարածաշրջանային՝ Հյուսիսատլանտյան դաշինքը (*NATO–OTAN,* 1949- ցայսօր), Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (*ОДКБ,* 2002- ցայսօր), Հարավ-Արևելյան Ասիայի պայմանագրի կազմակերպությունը (*SEATO,* 1955- 1977), Կենտրոնական պայմանագրի կազմակերպությունը (*CENTO,* 1955- 1979), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (*OSCE,* 1973- ցայսօր), Աֆրիկյան Միությունը (ԱՄ, 2002- ցայսօր) և այլն: Իհարկե, միջազգային անվտանգային տարածությունում տարածաշրջանային կազմակերպությունների դերերը համարժեք չեն, դրանցից առանձնակի կարևորություն ունեն ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն և հետխորհրդային տարածությունում գործող ՀԱՊԿ-ը[8]:

---

[6] Տես նույն տեղում, էջ 13- 14:

[7] Տես *Е. Ф. Довгань.* Коллективная безапасность (https://elib.bsu.by/bitstream/123456789/51830/1/КОЛЛЕКТИВНАЯ БЕЗОПАСНОСТЬ.pdf), *Տ. Տ. Քոչարյան,* Կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների առանձնահատկությունները. քաղաքագիտական վերլուծություն ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի օրինակով: «ՀԲ», 2023, հմ. 3 (https://doi.org/10.61760/18290108-hbk23.3-9):

[8] ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի գործունեության վերլուծությունը տես *Տ. Տ. Քոչարյան,* Նշ. աշխ., ՀԱՊԿ-ի վերաբերյալ՝ *Լ. Լ. ՈHլուբաբյան,* Հետխորհրդային տարածքում ինտեգրումային

Սույն հոդվածում մենք կփորձենք հանգամանորեն ուսումնասիրել կոլեկտիվ անվտանգության համընդհանուր մակարդակի կազմակերպությունները, քանի որ տարածաշրջանային կազմակերպությունները գործում են ըստ դրանց սկզբունքների:

## 2. Ազգերի լիգա

Կոլեկտիվ անվտանգության համակարգի ստեղծման գաղափարն իր առաջին մարմնավորումն ստացել է 20-րդ դարի երկրորդ տասնամյակում՝ ահավոր ավերածությունների ու միլիոնավոր զոհերի պատճառ դարձած առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այն հաստատութենացվել է հանձին Ազգերի լիգայի, որի Կանոնադրությունն իրավաբանական ուժ է ստացել 1920 թ. հունվարի 10-ին[9]: Ազգերի լիգան այն առաջին միջկառավարական կազմակերպությունն էր, որը հիմնադրվել էր «միջազգային համագործակցությանն աջակցելու և միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատմանը հասնելու նպատակով»: Նա հաճախ դիտվում է որպես Միավորված ազգերի կազմակերպության «նախակարապետը»[10]: Լիգայի հիմնադիրներն էին առաջին աշխարհամարտում հաղթանակ տարած ԱՄՆ-ը, Բրիտանական Կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, որոնք նաև Լիգայի Խորհրդի մշտական անդամներ էին, իսկ Խորհրդի մյուս 4 անդամներ՝ մինչև Վեհաժողովում անցկացված ընտրությունները, նշանակվել էին Բելգիան, Բրազիլիան, Իսպանիան, Հունաստանը: Խորհրդի անդամների թիվը 1922 թ. հասցվել է 6-ի, 1926 թ.՝ 9-ի[11]:

Լիգայի գործունեությունը ղեկավարում էին Վեհաժողովը (Ասամբլեա), որում ներկայացվում էին բոլոր անդամ պետությունները, և Խորհուրդը, որը բաղկացած էր հինգ մշտական և չորս՝ Վեհաժողովի նշանակած անդամներից, ինչպես նաև դրանց առընթեր Քարտուղարությունը (հոդ. 2), ընդսմին յուրաքանչյուր անդամ պետություն կարող էր Վեհաժողովում ունենալ 3-ից ոչ ավելի ներկայացուցիչներ, որոնք, սակայն, ունեին մեկ ձայն (հոդ. 3.4), իսկ Խորհրդում՝ միայն մեկ ներկայացուցիչ (հոդ. 4.6):

Վեհաժողովի և Խորհրդի որոշումներն ընդունվում էին միաձայնության սկզբունքով, իսկ դրանց ժողովների ընթացակարգերի, այդ թվում՝ հանձնաժողովների նշանակման, հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում էին տվյալ ժողովում ներկայացված անդամ պետությունների ձայների մեծամասնությամբ (հոդ. 5.1, 5.2):

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ԱՄՆ-ը չդարձավ Լիգայի անդամ,

---

գործընթացների պատմության որոշ հարցեր. Հայաստանի ու Ռուսաստանի մասնակցությունը (1991–1994 թթ.): «ՀԲ», 2012, հմ. 4:

[9] Տես «Устав Лиги наций. 10 января 1920 г.». «Документы XX века» (http://doc20vek.ru/node/451):

[10] Տես “The League of Nations”. The United Nations Office at Geneva (https://www.ungeneva.org/en/about/league-of-nations/overview):

[11] Տես «Устав Лиги наций. 10 января 1920 г.», ст. 4.1, 4.2:

քանի որ այդ կազմակերպության ստեղծման գաղափարի եռանդուն ջատագով Վուդրո Վիլսոնի աստղը ԱՄՆ-ում տվյալ ժամանակ արագ մարում էր, իսկ պետության նոր ղեկավարությունը որդեգրել էր միջազգային իրադարձություններից ու զարգացումներից ինքնամեկուսացման քաղաքականություն[12]:

Լիգայի անդամության իրավունքից զրկվել էր նաև Խորհրդային Ռուսաստանը՝ Լիգայի ղեկավարության հակաբոլշևիկյան քաղաքական ուղեգծի հետևանքով: Միայն 1934 թ. ԽՍՀՄ-ը որպես Խորհրդի մշտական անդամ մտավ Լիգա, երբ այնտեղից դուրս եկան Գերմանիան ու Ճապոնիան, սակայն հեռացվեց 1939 թ.՝ խորհրդա-ֆինլանդական պատերազմի պատճառով[13]:

Լիգայի առաջին Վեհաժողովին (1920 թ. նոյեմբերի 15, Ժնև) մասնակցեցին 41 պետության պատվիրակներ, որոնք ներկայացնում էին այն ժամանակ եղած անկախ պետությունների մեծ մասը և Երկրի բնակչության ավելի քան 70 %-ը: Լիգային անդամակցել են ընդամենը 63 պետություններ, որոնցից միաժամանակ՝ առավելագույնս 60: Այդուհանդերձ, Լիգային երբեք չի հաջողվել դառնալ իսկապես արդյունավետ համընդհանուր կազմակերպություն[14]:

Որպես դրա պատճառ կարելի է նշել հետևյալը.

ա) իր առջև դրված նպատակներին՝ ժողովուրդների միջև համագործակցության սերտացում և անվտանգ աշխարհի ձևավորում, Լիգան ձգտում էր հասնելու՝ իր անդամներին համոզելով հրաժարվել պատերազմից և ապահովել միջազգային հարաբերությունների հրապարակայնությունն ու բացությունը: Սակայն այս պահանջը հրամայական չէր, այլ միայն յուրաքանչյուր պետության «բարի կամքի դրսևորում»: Բացասաբար էր ազդում նաև այն հանգամանքը, որ պետությունների մեծ մասը դեռ պատրաստ չէր դրան:

Կարևոր էր համարվում զինաթափումը: «Լիգայի անդամներն ընդունում են, որ խաղաղության պահպանման համար պահանջվում է ազգային սպառազինությունները կրճատել մինչև այն նվազագույնը, որը համատեղելի է ազգային անվտանգության ու ... միջազգային պարտավորությունների կատարման հետ»[15]: Հաջորդ կետով պարզաբանվում էր, որ «Խորհուրդը, հաշվի առնելով յուրաքանչյուր պետության աշխարհագրական դիրքը, նախապատրաստում է այդ սահմանափակումների պլաններ՝ *տարբեր կառավարությունների քննարկման ու որոշման համար* (ընդգծումը մերն է - *Մ. Շ.*)»: Ինչպես տեսնում ենք, որոշում ընդունում էր անդամ պետության կառավարությունը, իսկ Լիգան միայն առաջարկում էր, ապա հանդես էր գալիս պարզապես դիտորդի դերում,

---

[12] Տես “League of Nations”. “Britannica” (https://www.britannica.com/topic/League-of-Nations):

[13] Տես «Вступление СССР в Лигу Наций, 18 сентября 1934». «Президентская библиотека им. Б. Н. Ельцина» (https://www.prlib.ru/history/619549):

[14] Տես “The League of Nations”:

[15] Տես «Устав Лиги наций. 10 января 1920 г.», ст. 8.1:

բ) Լիգան ընդգրկում էր գերազանցապես մայրցամաքային Եվրոպայի պետությունները, մինչդեռ մյուս աշխարհամասերը քիչ էին ներգրավված Լիգայի գործունեության ոլորտում, առավել ևս, որ այդ ժամանակների ամենահեղինակավոր պետությունը՝ ԱՄՆ-ը, չէր անդամակցում Լիգային, իսկ արագ տեմպերով առջևի գիծ դուրս եկող ԽՍՀՄ-ն անդամակցել է միայն շատ կարճ ժամանակով: Բացի այդ, օրինակ, 1930-ական թվականների անհաջողությունները պայմանավորված էին ոչ միայն այն հանգամանքով, որ ագրեսոր պետությունները (Ճապոնիա, Իտալիա, Գերմանիա) վիժեցրին կազմակերպության հեղինակությունը*, այլև Լիգայի առավել ազդեցիկ անդամներ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան Հիտլերին սիրաշահելու իրենց ջանքերում անտեսեցին Լիգան, ինչը, թերևս, հանգեցրեց երկրորդ աշխարհամարտի սանձազերծմանը[16]: Դրան նախորդեցին Լիգայի Խորհրդի անդամներ Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի հրաժարումը անդամակցությունից և ագրեսիաները, համապատասխանաբար, Իսպանիայի, բալկանյան պետությունների և Չինաստանի դեմ:

Չերչիլն այսպես է գնահատել Լիգայի ձախողման պատճառները. «Լիգան անհաջողություն կրեց ոչ թե իր սկզբունքների ու հայեցակարգերի պատճառով, այլ որովհետև այն պետությունները, որոնք նրան ստեղծել էին, հրաժարվեցին այդ սկզբունքներից, քանի որ դրանց կառավարությունները վախեցան իրատեսորեն ընկալել փաստերը և գործել, քանի դեռ կա ժամանակ»[17]: Ազգերի լիգայի ճգնաժամն է՛լ ավելի խորացավ 1930-ական թվականների վերջին, երբ բռնկվեց երկրորդ համաշխարհային պատերազմը:

Ազգերի լիգան դադարեցրեց իր գործունեությունը 1946 թ.՝ իր արխիվն ու ակտիվները հանձնելով նորաստեղծ Միավորված ազգերի կազմակերպությանը: Ըստ էության, Ազգերի լիգայի փորձն անհաջող էր, բայց ուսանելի: Մասնավորապես՝ նրա գոյության ընթացքում ձևավորվեց կոլեկտիվ միջազգային անվտանգության ապահովման մեխանիզմը, որը հիմք դարձավ ՄԱԿ-ի շրջանակներում նման կառույցի մշակման համար:

---

* Թեև պաշտոնական կառուցվածքին, ըստ որի՝ Խորհրդում ներառված էին ամենահզոր պետությունները (բացի ԱՄՆ-ից ու ԽՍՀՄ-ից), Լիգային չհաջողվեց կանխել ռազմական ագրեսիաները: 1931 թ. Ճապոնիան, որը Խորհրդի անդամ էր, դուրս եկավ Լիգայից, ներխուժեց Մանջուրիա և Լիգայի մեկ այլ անդամի՝ Չինաստանի տարածք: Խորհուրդը, չունենալով իր զինված ուժերը, Ճապոնիայի դեմ կիրառեց անպտուղ տնտեսական պատժամիջոցներ (տես “Why Did the League of Nations Ultimately Fail?”. “The Collector” (https://www.thecollector.com/why-did-the-league-of-nations-fail)):

[16] Տես “Failures of the League of Nations in the 1930s”. BBC, Part of History (https://www.bbc.co.uk/bitesize/guides/zbg4t39/revision/9):

[17] *Winston Churchill.* Speech delivered at the University of Zurich, 19 September 1996.

### 3. Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ը կազմավորվել է 1945 թ. հունիսի 26-ին: Սկզբում նրա Կանոնադրությունն ստորագրել են 50 պետություն*, իսկ այսօր արդեն կազմակերպությանն անդամակցում են 193-ը:

«ՄԱԿ-ը զարգանում է տարիների ընթացքում՝ համահունչ արագորեն փոփոխվող Աշխարհին: Սակայն մի բան մնում է անփոփոխ. նա պահպանում է Երկրի վրա այն տեղը, որտեղ աշխարհի բոլոր պետությունները կարող են միասին հավաքվել, քննարկել ընդհանուր պրոբլեմները և գտնել կոլեկտիվ լուծումներ, որոնք օգտակար կլինեն ամբողջ մարդկությանը»[18]:

ՄԱԿ-ի գլխավոր մարմիններն են՝ Գլխավոր ասամբլեան *(General Assembly; Генеральная Ассамблея),* Անվտանգության խորհուրդը *(Security Council; Совет Безопасности),* Տնտեսական և սոցիալական խորհուրդը *(Economic and Social Council; Экономический и Социальный Совет),* Խնամակալության խորհուրդը *(Trusteeship Council; Совет по Опеке),* Միջազգային դատարանը *(International Court of Justice; Международный Суд),* Քարտուղարությունը *(Secretariat; Секретариат)*, որոնք բոլորն էլ ստեղծվել են 1945 թ.՝ համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության *(UN Charter; Устав ООН),* և գտնվում են Նյու Յորքում, բացի Միջազգային դատարանից, որը գործում է Հաագայում: Բացի այդ, ՄԱԿ-ն ունի նաև լրացուցիչ գրասենյակներ Վիեննայում, Ժնևում և Նայրոբիում[19]:

*Գլխավոր ասամբլեան* ՄԱԿ-ի գլխավոր խորհրդակցական, դիրեկտիվ (ցուցումնագրային) և ներկայացուցչական մարմինն է՝ միակը, որում ներկայացված են ՄԱԿ-ի բոլոր անդամները: Յուրաքանչյուր անդամ ունի հինգից ոչ ավելի ներկայացուցչի իրավունք: Տարին մեկ անգամ՝ սեպտեմբերին, բոլոր պետությունների ներկայացուցիչները հավաքվում են Գլխավոր ասամբլեայի դահլիճում ամենամյա նստաշրջանին և ընդհանուր քննարկումներին մասնակցելու համար: Կարևոր հարցերով որոշումները (նոր անդամների ընդունում, խաղաղության ու անվտանգության առնչությամբ հանձնարարականներ, բյուջետական հարցեր) ընդունվում են ձայների 2/3-ով, մնացած հարցերով՝ պարզ մեծամասնությամբ[20]:

*Անվտանգության խորհուրդը* միջազգային խաղաղության և անվտան-

---

* ՄԱԿ-ի հիմնադիր 51 պետություններից մեկը՝ Լեհաստանը, ներկայացված չէր Սան Ֆրանցիսկոյում, քանի որ նրա կառավարության կազմը հայտարարվել էր ուշացումով, սակայն նրա ստորագրության համար տեղ էր թողնվել, քանի որ նա առաջիններից էր, ով ստորագրել էր Միավորված ազգերի հռչակագիրը (տես «Конференция в Сан-Франциско». ООН, «Мир, достоинство и равенство на здоровой планете» (https://www.un.org/ru/about-us/history-of-the-un/san-francisco-conference)):

[18] Տես "United Nations. Peace, dignity and equality on healthy planet". "About us" (https://www.un.org/en/about-us):

[19] Տես նույն տեղում՝ "Main Bodies" («Главные органы») (https://www.un.org/en/about-us/main-bodies):

[20] Տես նույն տեղում:

գության համար գլխավոր պատասխանատուն է: Բաղկացած է 15 անդամից (5 անդամները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Ռուսաստանը, Ֆրանսիան, մշտական են և ունեն վետո դնելու իրավունք, 10 անդամը՝ ոչ մշտական, որոնք ընտրվում են երկու տարի ժամկետով): Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության՝ կազմակերպության անդամները պարտավորվում են կատարել ԱԽ-ի որոշումները: Միջազգային վեճերի բռնկման դեպքում Խորհուրդը կողմերին կոչ է անում դրանք լուծելու խաղաղ ճանապարհով և առաջարկում է կարգավորման եղանակներ կամ պայմաններ, սակայն անհրաժեշտության դեպքում կարող է կիրառել պատժամիջոցներ և անգամ ուժ՝ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը հաստատելու կամ վերականգնելու համար (խաղաղարարական ու խաղաղապահական օպերացիաներ): ԱԽ-ի անդամները հերթով (այբբենական կարգով) նախագահում են Խորհրդում՝ մեկ ամիս ժամկետով[21]:

Համաձայն Կանոնադրության 39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածների՝ ԱԽ-ն, համոզվելով, որ ստեղծված իրավիճակը վտանգում է միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, իրադրության հետագա վատթարացումը կանխելու նպատակով կարող է կիրառել ոչ ռազմական միջոցներ[*], ինչպիսիք են «տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, ռադիո և հաղորդակցության այլ ձևերի լիակատար կամ մասնակի ընդհատումը և դիվանագիտական հարաբերությունների խզումը»: Այն դեպքում, երբ այդ միջոցները կլինեն անբավարար կամ արդեն անբավարար են, «կարող է օդային, ծովային կամ ցամաքային ուժերով նախաձեռնել այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կհամարվեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար»: Ընդսմին մասնագետների կարծիքով՝ այդ միջոցներն արդյունավետ կլինեն, եթե լինեն ոչ միայն օրինական, այլև բարոյական և իրավական տեսակետից «ապացույցներով ու պատշաճ պատճառներով հիմնավորվածության առումով հանրության համար ընկալելի»[22]:

Միջազգային իրավունքի մասնագետների շրջանում առանձնակի թեժությամբ բանավեճերի առիթ է դարձել ՄԱԿ-ի Կանոնադրության պահանջներին ՄԱԿ-ի և ԱԽ-ի ներկայիս գործողությունների ու ձեռնարկումների համապատասխանության հարցը: Նշվում է, որ իրադարձությունների գնահատումը կարող է իր մեջ կրել ԱԽ-ի անդամ պետությունների անհատական շահերի ազդեցության որոշակի տարրեր, ինչը կխաթարի անաչառ գործունեության այն գաղափարը, որը հիմնադիրները դրել էին ՄԱԿ-ի հիմքում[23]:

---

[21] Տես նույն տեղում:

[*] Ներկայումս լայն տարածում է ստացել այդ միջոցների անվանումը որպես «պատժամիջոցներ», թեև ՄԱԿ-ի Կանոնադրությունում նման տերմին չի կիրառվել:

[22] Տես *Eugenia López-Jacoiste.* The UN Collective Security System and its Relationship with Economic Sanctions and Human Rights. “Max Planck Yearbook of United Nations Law”, Vol. 14, 2010, P. 277 (https://www.mpil.de/files/pdf3/mpunyb_07_lopez-jacoiste_14.pdf):

[23] Տես, օրինակ, *Է. Լոպե-Ժակոյստ,* Նշ. աշխ., *Е. Ф. Довгань.* Верховенство права

*Տնտեսական և սոցիալական խորհուրդը* բաղկացած է 54 անդամներից, որոնց երեք տարի ժամկետով ընտրում է Գլխավոր ասամբլեան: Խորհուրդն այն գլխավոր մարմինն է, որն զբաղվում է միջազգային տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական, բնապահպանական և այլ նման հարցերով՝ մշակելով ու Գլխավոր ասամբլեային կամ անդամ պետություններին ներկայացնելով առաջարկություն-հանձնարարականներ այդ հարցերի լուծման վերաբերյալ և կատարելով կայուն զարգացման հարցերի քննարկման կենտրոնական հարթակի դեր[24]:

*Խնամակալության խորհուրդը* կազմված է ՄԱԿ-ի հետևյալ անդամներից՝ 11 խնամարկյալ տարածքներ կառավարող 7 անդամներից, Անվ-ի մշտական անդամ այն պետություններից, որոնք խնամարկյալ տարածքներ չեն կառավարում, ինչպես նաև 3 տարով Գլխավոր ասամբլեայի ընտրած այնքան թվով այլ անդամներից, «որքան անհրաժեշտ են, որպեսզի ... Խորհրդի անդամների ընդհանուր թվում հավասարապես պահպանվի ՄԱԿ-ի խնամարկյալ տարածքներ կառավարող և չկառավարող անդամների համամասնությունը»[25]:

*Միջազգային դատարանը* ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինն է, որը գործում է ըստ ՄԱԿ-ի Կանոնադրությանը «կից ներկայացվող կանոնագրի»՝ հիմնված «Միջազգային արդարադատության մշտական պալատի կանոնագրի վրա և սույն Կանոնադրության անբաժան մասն է կազմում»: Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, ինչպես նաև ՄԱԿ-ի այլ մարմիններ ու գործակալություններ Գլխավոր ասամբլեայից համապատասխան լիազորություն ստանալու դեպքում կարող են հայցել դատարանի խորհրդակցական կարծիքը ցանկացած իրավական հարցի վերաբերյալ[26]: Ընդսմին ՄԱԿ-ի բոլոր անդամները կանոնագրի *ipso facto* (բուն փաստի ուժով, դրանցով իսկ) կողմեր են:

*Քարտուղարությունը* բաղկացած է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարից և ՄԱԿ-ի գործունեության համար անհրաժեշտ աշխատակազմից: Գլխավոր քարտուղարին նշանակում է Գլխավոր ասամբլեան՝ Անվտանգության խորհրդի երաշխավորությամբ (ներկայացմամբ): Գլխավոր քարտուղարն իրավասու է Անվ-ի ուշադրությանը ներկայացնելու ցանկացած հարց, որն իր կարծիքով կարող է վտանգել միջազգային խաղաղությունը: Նա ԳԱ-ին ներկայացնում է կազմակերպության գործունեության մասին ամենամյա զեկուցագրեր-հաշվետվություններ:

Գլխավոր քարտուղարը նշանակում է Քարտուղարության աշխատա-

---

и Совет Безопасности ООН: проблема применения целевых санкций. «Труды факультета международных отношений», научный сборник, Вып. 6. Минск, 2015:

[24] Տես «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն», գլ. X: Ե., 2005, էջ 35–36:

[25] Տես նույն տեղում, հոդ. 86:

[26] Տես նույն տեղում, հոդ. 92, 96, ինչպես նաև «Статут Постоянной Палаты Международного Суда». United Nations Audiovisual Library of International Law (https://legal.un.org/avl/pdf/ha/sicj/sicj_ph_r.pdf):

կազմի անդամներին ըստ ԳԱ-ի հաստատած կանոնների: Տնտեսական և սոցիալական խորհրդին, Խնամակալության խորհրդին և, անհրաժեշտության դեպքում, այլ մարմինների հատկացվում են մշտական աշխատակազմեր, որոնք Քարտուղարության մասերն են: Ընդսմին Կանոնադրության համաձայն՝ աշխատակազմում պետք է ներգրավվեն բանիմաց, բարեխիղճ, աշխատունակ անձինք, որոնք ապահովեն հնարավորինս լայն աշխարհագրական ընդգրկում[27]:

*ՄԱԿ-ի գործունեությունը* գործնականում ընդգրկում է մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտները, քանի որ այդ կազմակերպության տերմինաբանությամբ «անվտանգություն» հասկացությունը ներառում է անվտանգ ու խաղաղ գոյակցության, անվտանգ կայուն զարգացման, առողջության և առողջ կենսակերպի, բնահամակարգերի անվտանգ գոյության, մի խոսքով՝ «առողջ մոլորակի» հասկացությունները: Ըստ այդմ՝ ՄԱԿ-ն իրագործում է բազմաթիվ ծրագրեր, որոնք առնչվում են խաղաղության ու մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության, բնապահպանության և այլ բնագավառների: Դրանք խմբավորված են չորս գլխավոր նպատակային ուղղություններում՝ մոլորակի վրա *խաղաղության և անվտանգության պահպանում,* երկրների ու ժողովուրդների միջև *բարեկամական հարաբերությունների ամրապնդում,* միջազգային պրոբլեմների լուծման ու մարդու իրավունքների հարգման, աղքատ մարդկանց կենսապայմանների բարելավման, սովի և հիվանդությունների դեմ պայքարի, անգրագիտության վերացման ուղղությամբ *համագործակցության սերտացում* և պետությունների գործողությունների *փոխհամաձայնեցվածություն:* Այդ նպատակներին հասնելու ուղղությամբ համագործակցում են ավելի քան 30 առընթեր կազմակերպություններ, որոնք ձևավորում են ՄԱԿ-ի համակարգը[28]:

Ի տարբերություն Ազգերի լիգայից՝ ՄԱԿ-ն ունի իր զինված կազմավորումները, բացի այդ, մանդատ է տալիս որևէ պետության (պետությունների) կամ կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կազմակերպության՝ խաղաղարարական կամ խաղաղապահական առաքելություն իրականացնելու համար այն տեղերում, որտեղ ծագել է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող հակամարտային իրադրություն:

### 4. Երկու կազմակերպությունների համեմատական վերլուծություն

Ե՛վ Ազգերի լիգան, և՛ Միավորված ազգերի կազմակերպությունը կոնկրետ պատմական շրջանների արգասիքներ են, ստեղծված իրենց աշխարհաքաղաքական միջավայրին համապատասխան, և արտացոլում են մարդկության քաղաքական ու իրավական զարգացածության՝ տվյալ պահին բնորոշ մակարդակը: Ընդսմին ՄԱԿ-ի ստեղծման ժամանակ զգալի չափով հաշվի է առնվել ԱԼ-ի փորձը՝ և՛ դրական, և՛ բացասական: Ըստ

[27] Տես «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն», գլ. XV:

[28] Տես «Все самое интересное об Организации Объединенных Наций». ООН (https://www.un.org/ru/aboutun/booklet/):

այդմ տվյալ կազմակերպություններին բնորոշ են և՛ տարբերություններ, և՛ ընդհանրություններ:

Այսպես. եթե ԱԼ-ն ստեղծվել էր առաջին համաշխարհային պատերազմի արյունահեղ մարտերի և ավերածությունների դադարումից հետո, ապա ՄԱԿ-ը ձևավորվում էր երկրորդ աշխարհամարտի ոչ պակաս (անգամ՝ ավելի) արյունահեղ ու ավերիչ իրադարձությունների ընթացքում: Երկուսի հիմքում էլ դրված էր մարդասպանությանը վերջ տալու ձգտումը՝ խարսխված արդարության գաղափարի վրա, որը բնորոշ էր այն ժամանակ տիրող իդեալիստական աշխարհայացքին: Այդ իդեալիզմն էր պատճառը, որ տվյալ գաղափարը գործնականում չդարձավ հաստատուն հիմք նրանց արդյունավետ գործունեության համար[29]: Սակայն շնորհիվ այն բանի, որ ՄԱԿ-ի առջև, խաղաղության և անվտանգության ապահովումից բացի, դրված էին նաև մարդու իրավունքների պահպանման, մարդկության սոցիալ-տնտեսական զարգացման, բնապահպանության և մի շարք այլ համամոլորակային խնդիրներ, որոնց լուծումը խարսխվում էր նաև համընդհանրության, արդյունավետության, սկզբունքայնության, խաղաղասիրության սկզբունքների վրա, նա հաջողությամբ գոյատևեց մինչև այսօր, և միայն վերջին երկու-երեք տասնամյակներում միջազգային քննարկումների առարկա դարձավ նրա վերափոխման ու կատարելագործման հարցը[30]:

ՄԱԿ-ի ավելի մեծ գոյունակությանը նպաստում է նաև նրա ավելի հետևողական, տրամաբանական ու ճկուն կազմակերպվածքը: Այսպես. ԱԼ-ն ուներ Վեհաժողով, Խորհուրդ, Քարտուղարություն, և նախատեսվում էր ստեղծել նաև Միջազգային դատարանի Մշտական պալատ[31], մինչդեռ ՄԱԿ-ի ղեկավար մարմիններն են Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը, Միջազգային դատարանը և Քարտուղարությունը: Անգամ Ազգերի լիգայի Կանոնադրությունը, որը բաղկացած է ներածականից և 26 հոդվածներից, աչքի է ընկնում կառուցվածքային անհետևողականությամբ, մինչդեռ ՄԱԿ-ի Կանոնադրությունը, բաղկացած լինելով 19 գլուխներում խմբավորված 111 հոդվածներից, խստորեն համակարգված է. ներածականում ընդհանուր տեսքով նշվում են նպատակներն ու խնդիրները, որոնք հետո մանրամասնվում են առանձին հոդվածներում[32]:

[29] Տես *Ռ. Ա. Ռոմաշով, Ն. Ն. Կիրիլովսկայա,* Նշ. աշխ.:

[30] Տես, օրինակ, «Пушков заявил о необходимости трансформации ООН для мирового равновесия». «ТАСС», 24.10.2023 (https://tass.ru/politika/19100299); *Anil Anand.* It's Time to Reform the United Nations Security Council. Australian Institute of International Affairs, 11.08.2022 (https://www.internationalaffairs.org.au/australian outlook/its-time-to-reform-the-united-nations-security-council/):

[31] Տես «Устав Лиги наций. 10 января 1920 г.», ст. 2 и 14:

[32] Այս մասին հանգամանորեն տես *А. Е. Игнатович, А. Б. Беляева.* Сравнительный анализ уставов Лиги Наций и ООН, 2015 (http://e.biblio.bru.by/bitstream/handle/1212121212/3082/13.pdf):

Խոսելով երկու կազմակերպություններին բնորոշ ընդհանրությունների մասին՝ ասենք, որ հաճախ նշվում է[33].

- · հզոր պետությունների շահերի գերակայությունն ընդհանուր շահերի նկատմամբ,
- · արևմտամետ կողմնորոշումը,
- · ֆինանսական կախումը որոշակի տարածաշրջաններից կամ առանձին պետություններից (ԱԼ-ի դեպքում՝ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի մուծումներից, ՄԱԿ-ի դեպքում՝ ԱՄՆ-ի):

ԱԼ-ի թույլ կողմերն այն են, որ՝

- – կազմակերպությունում չընդգրկվեցին այդ ժամանակվա հզոր տերություններն՝ ԱՄՆ-ը (երբեք) և ԽՍՀՄ-ը (մասնակցեց ընդամենը 5 տարի), իսկ Գերմանիան ու Ճապոնիան շուտով դուրս եկան կազմից, մինչդեռ բոլոր գերտերությունները մասնակցեցին ՄԱԿ-ի ստեղծմանը և սկզբից ևեթ դարձան դրա անդամ,
- – Լիգայի ամենաhեղինակավոր պետությունները՝ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ագրեսորներին սաստելու փոխարեն ընտրեցին նրանց խաղաղեցնելու եղանակը[34],
- – Լիգան չստեղծեց իր զինված կազմավորումները, մինչդեռ ՄԱԿ-ն ունի խաղաղապահների կազմավորում,
- – Լիգայի Վեհաժողովում և Խորհրդում կարևոր որոշումներն ընդունվում էին միաձայնության սկզբունքով, ինչն ըստ էության ձախողում էր մեծ թվով որոշումների ընդունումը, մինչդեռ ՄԱԿ-ում և Անվ-ում՝ ձայների պարզ մեծամասնությամբ կամ 2/3-ով, ընդսմին Անվ-ի մշտական անդամներն ունեն վետոյի իրավունք: Դա հնարավորություն է տալիս որոշ չափով չեզոքացնելու հզոր պետությունների թելադրանքի հնարավորությունը[*],
- – եթե Լիգայի դեպքում Կանոնադրության համաձայն Վեհաժողովն ու Խորհուրդը կարող էին միայն որևէ բան (առաջին հերթին՝ ռազմական ուժի կրճատում) առաջարկել պետություններին, ապա ՄԱԿ-ի Անվ-ն ունի պարտադրանքի իրավունք՝ պատժելով (անգամ՝ զինված ուժով) «անհնազանդին», ինչպես նաև Գլխավոր ասամբլեային ներկայացնելու ՄԱԿ-ի կազմից նրան հեռացնելու հանձնարարական[**],

---

[33] Տես “Comparison of UN with the League of Nations-UPSC World History Notes”. Edukemy, 25.11.2023 (https://edukemy.com/blog/comparison-of-un-with-the-league-of-nations-upsc-world-history-notes/):

[34] Տես “Failures of the League of Nations in the 1930s”. BBC, Part of History:

[*] Վերջին շրջանում ավելի ու ավելի հաճախ է խոսվում այն մասին, որ հիմնադիր պետությունները վետոյի իրավունքն օգտագործում են ոչ թե ի շահ միջազգային հանրության, այլ իրենց շահերն առաջ մղելու նպատակով:

[**] Զարմանալի է, որ խոսելով ԱԼ-ի և ՄԱԿ-ի անդամության դադարեցման մասին՝ մասնագետները միայն նշում են, որ ԱԼ-ի անդամը կարող էր կամավոր կերպով դադարեցնել իր անդամությունը, սակայն չեն արձանագրում, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունում նման կետ չկա:

– Ազգերի լիգան ուներ աշխարհագրական ընդգրկման սահմանափակ գոտի, ինչը նվազեցնում էր նրա ազդեցության տիրույթը և արդյունավետությունը, մինչդեռ Միավորված ազգերի կազմակերպության կազմում են աշխարհի բոլոր տարածաշրջանների պետությունները, բացի Պաղեստինից և Սուրբ Աթոռից (Վատիկան), որոնք թեև ՄԱԿ-ի անդամներ չեն, սակայն հրավիրվել են մասնակցելու Գլխավոր ասամբլեայի նիստերին դիտորդի կարգավիճակով և պահպանում են մշտական դիտորդի իրենց ներկայացուցչությունները ՄԱԿ-ի ժնևյան բաժանմունքում[35]: Բացի այդ, ՄԱԿ-ը հենվում է նաև տարածաշրջանային անվտանգության կազմակերպությունների տարածուն ցանցի վրա:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ՄԱԿ-ն ունի ԱԼ-ի նկատմամբ զգալի առավելություններ, թեև ինքն էլ զերծ չէ թուլություններից: Օրինակ՝ պրակտիկան ցույց է տալիս, որ աշխարհի առաջատար պետությունների միջև հարաբերությունների սրման ժամանակ ԱԽ-ի մշտական անդամները հաճախ տարբեր կերպ են մեկնաբանում ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթները և վետոյի իրավունքը կիրառում են ոչ թե Կանոնադրության նորմերի հաշվառմամբ, այլ ձևավորվող հակամարտային դիրքորոշումների և առճակատումային հարաբերությունների հիման վրա: Մասնավորապես՝ դա վերաբերում է զինաթափման, այսպես կոչվող մարդասիրական ներխուժման, կանխիչ գործողությունների, զինված ուժերի կիրառման կանոնակարգման և մի շարք այլ հարցերի:

ՄԱԿ-ի ներկայացված թուլությունները, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհակարգի ու միջազգային անվտանգային համակարգի փոփոխությունները հանգեցրել են նաև ՄԱԿ-ի կոլեկտիվ անվտանգության համակարգի փոփոխման անհրաժեշտության պրոբլեմի ակտիվ քննարկումների:

**Ամփոփում**

Անընդհատ փոփոխվող արդի աշխարհակարգում ոչ մի պետություն չի կարող բավարար չափով միայնակ ապահովել իր անվտանգությունը: Սույն պրոբլեմի լուծման առավել արդյունավետ միջոցներից է (հատկապես՝ փոքր պետությունների դեպքում) կոլեկտիվ անվտանգության համակարգը, որի ձևավորման հիմքում դրված է Կանտի «հավիտենական խաղաղության» գաղափարը:

Կոլեկտիվ անվտանգության հիմնարար սկզբունքներից են՝ մեկի դեմ ագրեսիան որպես բոլորի դեմ ագրեսիա դիտելը և համատեղ ուժերով վերացնելը (հետ մղելը), անվտանգության անբաժանելիությունը և այլն: Կոլեկտիվ անվտանգության առաջին կազմակերպությունը եղել է Ազգերի լիգան (1920 – 1946 թթ.): Սակայն այդ փորձը հաջող չի եղել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, մասնավորապես՝ այն հանգամանքի բերումով, որ դրա հիմնադիր պետությունների ղեկավարները չեն կարողացել փոխել իրենց քաղաքական մտածելակերպը՝ անհատական շահերը վեր դասելով կոլեկտիվ շահերից: Դեռ երկրորդ աշխարհամարտի ընթացքում ձևավորվել

[35] Տես «Государства, не являющиеся членами». Отделение ООН в Женеве (https://www.ungeneva.org/ru/blue-book/missions/non-member-states):

է կոլեկտիվ անվտանգության նոր կազմակերպության ստեղծման գաղափարը, որը մարմնավորվել է Միավորված ազգերի կազմակերպության ձևով: Դրա ստեղծման ժամանակ հաշվի են առնվել Լիգայի թերությունները ու թուլությունները, ինչի շնորհիվ ՄԱԿ-ը գործում է մինչ օրս:

Ի տարբերություն Լիգայից, որի հիմնական նպատակը պատերազմների բռնկման կանխումն էր, ՄԱԿ-ի գլխավոր նպատակը մարդկության խաղաղ ու անվտանգ սոցիալ-տնտեսական, մշակութային կայուն զարգացումն է աշխարհի մոլորակի վրա: Սակայն ՄԱԿ-ը ևս զերծ չէ թերություններից, որոնք առանձնակի ցայտունությամբ դրսևորվում են Հայաստանի առնչությամբ, երբ ի խախտումն ՄԱԿ-ի Կանոնադրության հիմնական դրույթների, ըստ էության, հավասարեցվում են ագրեսորն ու նրա զոհը, երբ ժողովուրդների ինքնորոշման հիմնարար սկզբունքը դառնում է մեծ տերությունների քաղաքական խաղերի առարկա:

## БЕЗОПАСНОСТНАЯ ПОЛИТОЛОГИЯ

# ФОРМАТ КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ НА ПРИМЕРЕ ЛИГИ НАЦИЙ И ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

*М. А. ШИРИНЯН, генерал-майор, начальник Управления вооружения и технического обеспечения МО РА*

РЕЗЮМЕ

В постоянно меняющемся современном миропорядке ни одно государство не может в достаточной степени обеспечить свою безопасность в одиночку. Одним из наиболее эффективных средств решения данной проблемы (в особенности в случае малых государств) является система коллективной безопасности, в основе формирования которой заложена идея «вечного мира» Канта.

В числе фундаментальных принципов коллективной безопасности – рассмотрение агрессии против кого-то как агрессии против всех и устранение (парирование) ее совместными усилиями, неделимость безопасности и т. д. Первой организацией коллективной безопасности была Лига Наций (1920–1946 гг.). Однако этот опыт не увенчался успехом в силу ряда объективных и субъективных причин, в частности, из-за того, что главы государств – ее основателей не смогли изменить свое политическое мышление, ставя собственные интересы выше коллективных. Еще в ходе Второй мировой войны оформилась идея создания новой организации коллективной безопасности, воплотившаяся в виде Организации Объединенных Наций. При ее создании были учтены недостатки и слабости Лиги, благодаря чему ООН существует до наших дней.

В отличие от Лиги, главной целью которой было предотвращение развязывания войн, главной целью ООН является социально-эконо-

мическое, культурное устойчивое развитие человечества в условиях мира и безопасности на здоровой планете. Однако ООН также не лишена недостатков, которые особенно ярко проявляются в отношении Армении, когда в нарушение основных положений Устава ООН агрессор и его жертва по сути приравниваются, когда фундаментальный принцип самоопределения народов становится предметом политических игр великих держав.

**SECURITY POLITICAL SCIENCE**

## COLLECTIVE SECURITY FORMAT ON THE EXAMPLE OF THE LEAGUE OF NATIONS AND THE UNITED NATIONS: A COMPARATIVE ANALYSIS

*M. A. SHIRINYAN, Major General, Head, Armament and Technical Support Department, MOD, RA*

SUMMARY

In the ever-changing modern world order, not one state can sufficiently ensure its security on its own. One of the most effective means of solving this problem (especially in the case of small states) is a system of collective security, the formation of which is based on the idea of Kant's "perpetual peace".

Among the fundamental principles of collective security there are the consideration of aggression against someone as aggression against everyone, and elimination (parrying) of it through joint efforts, the indivisibility of security, etc. The first collective security organization was the League of Nations (1920 – 1946). However, this experience was not crowned with success due to a number of objective and subjective reasons, in particular, due to the fact that the heads of states – its founders – were unable to change their political thinking, putting their own interests above collective ones. Even during the WW2, the idea of creating a new collective security organization took shape, which embodied in the form of the United Nations. When creating it, the shortcomings and weaknesses of the League were taken into account, thanks to which the UN exists to this day.

Unlike the League, whose main goal was to prevent the outbreak of wars, the main goal of the UN is the socio-economic, cultural sustainable development of humanity in conditions of peace and security on a healthy planet. However, the UN is not also without drawbacks, which are especially pronounced in relation to Armenia, when, in violation of the basic provisions of the UN Charter, the aggressor and its victim are essentially equated, when the fundamental principle of self-determination of nations becomes the subject of political games of the great powers.

DOI: 10.61760/18290108-grh.25.1-96

# ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՄ*

*Վ. Պ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմահումանիտար գիտությունների հետազոտությունների կենտրոնի գիտական վերլուծաբան, սոցիոլոգ*



**Ներածություն**

Ռազմահումանիտար, այդ թվում` ռազմասոցիոլոգիական, ռազմահոգեբանական, ռազմաքաղաքագիտական, ռազմաիրավագիտական հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը հատկապես աճել է ներկայումս, երբ մեր պետությունը ձեռնամուխ է եղել ռազմաքաղաքական լարված իրավիճակում ՀՀ Զինված ուժերի արագ և արդյունավետ բարեփոխումների[1]: Դրանք պետք է ուղղված լինեն ոչ միայն նախորդ իրադարձությունների բացասական հետևանքների հաղթահարմանը, այլև ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական և ռազմասոցիալական իրողություններին համարժեք արձագանքման ունակ բանակի և ընդհանրապես ազգային անվտանգության համակարգի ձևավորմանը:

Տարբեր երկրների փորձը ցույց է տվել, որ ռազմական բարեփոխումների ընթացքում հանդիպող դժվարությունները ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական, իրավական և ֆինանսատնտեսական բնույթի են: Շատ կարևոր է նաև, որ այդ բարեփոխումներն առավելագույնս իրագործվեն գիտական հենքի վրա` կառավարման ժամանակակից գիտական մեթոդների ու տեխնոլոգիաների օգտագործմամբ: ԶՈՒ-ի բարեփոխումներին և ընդհանրապես կառավարման գործընթացների արդյունավետ կազմակերպմանը մեծապես կարող են օժանդակել ռազմասոցիոլոգիական հետազոտությունները (ՌՍՀ), որոնք վաղուց արդեն ներառվել են առաջատար պետությունների ԶՈՒ-երի բարեփոխումների, պետական կառավարման համակարգերի կատարելագործմանն ուղղված գործընթացների գիտական ապահովման զինանոցում:

* Հոդվածն ստացվել է 07.10.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 13.03.2025:

[1] Տես «ՀՀ ԶՈՒ բարեփոխումների հայեցակարգն ընդգրկում է բազմաթիվ ուղղություններ. ՊՆ նախարար»: «News.am», 15.01.2025 (https://news.am/arm/news/861708.html):

Հիրավի, ԶՈՒ-ի նման բարդ սոցիալական համակարգի արդյունավետ բարեփոխումների իրականացման ու գիտական կառավարման համար անհրաժեշտ է հասարակությունում և ԶՈՒ-ում (այդ թվում՝ դրա տարբեր ենթահամակարգերում) կատարել առկա ռազմասոցիալական գործընթացների գիտական վերլուծություն, խնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված գործնական առաջարկությունների մշակում:

ՀՀ ԶՈՒ-ում առկա տարբեր ռազմասոցիալական գործընթացների գիտական, մասնավորապես՝ ռազմասոցիոլոգիական, ուսումնասիրությունների անհրաժեշտության գիտակցումը նոր չէ: Այդ մասին վերջին երեսուն տարիների ընթացքում քանիցս ահազանգել են տարբեր մասնագետներ: Մասնավորապես՝ ռազմական սոցիոլոգիայի (ՌՍ) առարկայական դաշտի կարևոր ոլորտներից մեկի՝ անձնակազմի հետ աշխատանքի համակարգի մաս կազմող դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ընթացքում առաջացող խնդիրների գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը դեռ 90-ականների կեսերին մատնանշել է գնդապետ Գ. Հարությունյանը. «դաստիարակչական աշխատանքի ոլորտը անընդհատ ստեղծագործության դաշտ է, որտեղ պետք է ուշադրությամբ հետևել ինչպես բուն բանակում, այնպես էլ հասարակության մեջ ընթացող սոցիալ-հոգեբանական գործընթացներին, կարողանալ իմաստավորել դրանք, ի հայտ բերել պատճառական կապերը և ճշգրիտ վերլուծության հիման վրա մշակել աշխատանքի ուղղություններ, գտնել արդյունավետ ձևեր ու մեթոդներ: **Դրա համար անպայմանորեն պետք է կիրառվեն գիտական մոտեցումներ: Գիտականությունն ընդհանրապես մեր բանակի որակական ամրապնդման ներկա փուլի անբաժան ուղեկիցն ու կարևորագույն հիմքերից մեկը պետք է լինի»** (ընդգծումը մերն է.– *Վ.Գ.*)[2]:

ՌՍՀ-ների անհրաժեշտության և դրանց հաստատութենացման (ինստիտուցիոնալացման) անհրաժեշտության մասին 2020 թ. մասնագիտական կարևոր դիտարկում է կատարել նաև սոցիոլոգ Ա. Խաչիկյանը. «Ռազմասոցիոլոգիական տեսական և հետազոտական հնարավորություններն արդյունավետորեն կիրառելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ կերպով ներդրել շարունակական ռազմասոցիոլոգիական հետազոտությունները, որոնց արդյունքներով կստեղծվեն բանակի գիտելիքահեն կառավարման համար անհրաժեշտ նախադրյալներ: … Գիտահետազոտական զինանոցի և մասնագիտական ռեսուրսի արդյունավետ օգտագործման դեպքում կարող են ձևավորվել մեխանիզմներ, որոնք խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ հնարավորություն կտան ուսումնասիրելու, բացահայտելու և կարգավորելու ռազմական ոլորտի բազմաթիվ հիմնախնդիրներ»[3]:

Պետք է նշել, որ զինված ուժերում առկա խնդիրների, այդ թվում՝ սո-

---

[2] *Գ. Բ. Հարությունյան,* ՀՀ Զինված ուժերում տարվող դաստիարակչական աշխատանքի համակարգը և բարելավման ուղիները: «ՀԲ»,1996, հմ. 3- 4:

[3] *Ա. Ն. Խաչիկյան,* ՀՀ-ում ռազմական սոցիոլոգիայի զարգացման հիմքերն ու հեռանկարները: «ՀԲ», 2020, հմ. 4:

ցիալական բնույթի, գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը արտացոլված է ՀՀ պաշտպանության նախարարության մշակած «Հայեցակարգ բանակի կերպափոխման (հիմնական ուղենիշները)» փաստաթղթի 5-րդ՝ «Փոփոխությունների հիմնական ելակետերը» բաժնում. «Առանց առկա վիճակի համարժեք գնահատման, խնդիրների ու դրանց պատճառների բացահայտման հնարավոր չէ բարելավել համակարգը»[4]:

Սույն հոդվածի հեղինակի նպատակն է հիմնավորել ռազմասոցիոլոգիական հետազոտությունների կանոնավոր կատարման կարևոր դերը մեր պետության ԶՈՒ-ի ներկա բարեփոխումների գործընթացներում՝ ցույց տալով, մասնավորապես, ո՛ր ուղղություններով և ի՛նչ խնդիրների լուծմանը դրանք կարող են նպաստել:

## 1. ՌՍՀ-ների կիրառության միջազգային փորձի համառոտ ակնարկ

ՌՍ-ն՝ որպես սոցիոլոգիական գիտության առանձին բնագավառ, գործնականում սկսել է ձևավորվել 19-րդ դարի վերջին: Հատկանշական է, որ ՌՍ-ի նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ կերպով մեծացել է այն երկրներում և այն ժամանակ, երբ այդ երկրները հայտնվել են խնդրահարույց ռազմաքաղաքական իրավիճակներում:

Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, օրինակ, լինելով աշխարհի առավել հզոր զինված ուժեր ունեցող պետություններից, միաժամանակ ՌՍՀ-ների ծառայություններից ամենաշուտն ու ամենաշատն օգտված տերություններն են:

Ռուսական կայսրությունում, մասնավորապես՝ 1904–1905 թթ., ռուս-ճապոնական պատերազմում կրած ռազմաքաղաքական պարտությունից հետո ձեռնարկված առաջին ՌՍՀ-ներն ուղղված էին այդ պատերազմում Ռուսաստանի պարտության իրական պատճառների բացահայտմանը: 1906–1908 թթ. կատարվեցին մի շարք հետազոտություններ (այդ թվում՝ հետազոտվեցին պատերազմին մասնակցած և կայսերական Գլխավոր շտաբի (ԳՇ) ակադեմիան 1880–1903 թթ. ավարտած 300 սպաներ), որոնց արդյունքների մի մասն օգտագործվեց ռուսական բանակում 1906–1912 թթ. նախաձեռնված բարեփոխումների ընթացքում[5]:

Որպես արդյունք՝ սպաների կրթության և վերապատրաստման ենթահամակարգում ներդրվեցին նոր ուսումնական ծրագրեր ու մեթոդիկաներ, ընդլայնվեց ռազմաուսումնական հաստատություններ (ՌՈՒՀ) ընդունվող անձանց սոցիալ-խավային կազմը, դժվարությամբ, սակայն, մասնակիորեն ընդունվեց ռազմական սոցիոլոգների այն դրույթը, որի համաձայն՝ **ԶՈՒ-ի բարեփոխումները չպետք է սահմանափակվեն միայն զուտ ռազմական բնույթի միջոցառումներով (որքան էլ դրանք ինքնին կարևոր լինեն), այլ պետք է**

[4] Տես «ՀՀ ՊՆ Հայեցակարգ բանակի կերպափոխման (հիմնական ուղենիշները)», էջ 5 (https://mil.am/files/lib1/Հայաստանի Հանրապետության Բանակի կերպափոխման հայեցակարգը.pdf):

[5] Տես «Актуальные проблемы военной политологии и социологии». Учебное пособие. Под ред. А. И. Позднякова. М., 1998, с. 23:

**ներդաշնակորեն կապվեն խոշոր համապետական սոցիալական փոփոխությունների հետ, այլ կերպ ասած՝ ռազմական բարեփոխումը չի կարող հանգեցվել միայն բանակում կատարվող բարեփոխումներով** (ընդգծումը մերն է – *Վ.Գ.*)[6]:

ՌՍ տեսանկյունից՝ վերը նշված կարևոր մոտեցումն ընկած է նաև ՀՀ ԶՈՒ-ի 2021 թվականից մեկնարկած ներկա բարեփոխումների հիմքում, որի վկայությունն է ՀՀ Վարչապետ Ն. Փաշինյանի հետևյալ շեշտադրումը. «Հայաստանում տեղի ունեցող տնտեսական, իրավական, նաև քաղաքական պրոցեսների ու Զինված ուժերի մարտունակության հստակ կապն արձանագրենք, որովհետև Զինված ուժերն իրենք առանձին վերցված կղզի չեն և նրանք կրում են բոլոր այն ազդեցությունները, բոլոր այն պոզիտիվ և նեգատիվ երևույթների հետքը, որ ունենք և ունենում ենք մեր երկրում, սկսած տնտեսական գործունեության և հարկեր վճարելու մշակույթից»[7]:

1917 թ. հեղափոխությունից հետո Խորհրդային Ռուսաստանում նշանակալիորեն կրճատվեց ՌՍ ուսումնասիրության առարկայական դաշտը, իսկ 1920–1930-ական թվականների սահմանագլխին Ի. Ստալինի հավանությամբ սոցիոլոգիան իր բոլոր առանձին ճյուղերով (այդ թվում՝ ՌՍ-ն) հայտարարվեց բուրժուական կեղծ գիտություն և արգելվեց[8]:

1933 թ. իշխանության գլուխ անցած նացիստական վարչակարգը 1930-ական թվականների կեսերին սոցիոլոգիան արգելեց նաև Գերմանիայում: Միայն 1960-ական թթ. վերջերին Գերմանիայի առաջնորդներն սկսեցին երկրում և աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների ազդեցությամբ կատարվող փոփոխությունները հասկանալու համար փնտրել սոցիոլոգիական բացատրություններ: 2004 թ. Պոտսդամում բացվեցին ՌՍ ուսումնասիրության մասնագիտական դասընթացները, իսկ 2013 թ. հիմնադրվեց Գերմանիայի Զինված ուժերի (Բունդեսվերի) ռազմական պատմության և սոցիալական գիտությունների կենտրոնը, որն այդ պետության դաշնային կառավարության գիտահետազոտական ինստիտուտի կարգավիճակով հետազոտություններ է կատարում ռազմական պատմության, ՌՍ, միջազգային հարաբերությունների և անվտանգության ոլորտներում[9]:

ԱՄՆ-ում ռազմական ոլորտի և բանակի հոգեբանասոցիոլոգիական նշանակալի հետազոտություններ առաջին անգամ կատարվել են առաջին համաշխարհային պատերազմի վերջին շրջանում և դրանից անմիջապես

---

[6] Տես *И. А. Голосенко.* Военная социология в России. «Журнал социологии и социальной антропологии», 1998, т. 1, № 2:

[7] Տես «Անպայման կհասնենք մեր խնդրի լուծմանը, այն է՝ Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը. Վարչապետ Փաշինյանի շնորհավորական խոսքը Բանակի օրվա առթիվ», 28.01.2021 (https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2021/01/28/Nikol-Pashinyan-visit-to-Ministry-of-Defense/):

[8] Տես «Военная социология». Учебник для военных вузов. Под ред. Ю. В. Вермиенко, И. И. Соколовой. М., 2020, с. 61:

[9] Տես “Zentrum für Militärgeschichte und Sozialwissenschaften der Bundeswehr” (https://zms.bundeswehr.de/de):

հետո: Մասնավորապես՝ 1917–1919 թթ. ամերիկյան բանակի հոգեբանական վարչության *(Division of Psychology)* և Հարվարդի համալսարանի գիտնականների խումբը թեստային մեթոդով հետազոտել է 1,7 մլն զինծառայողների, այդ թվում՝ 42 հազ. սպաների մտավոր և հոգեբանական բնութագրերը: Այդ հետազոտության արդյունքներով՝ ավելի քան 16 հազար նորակոչիկ զորացրվել է կամ մարտական ստորաբաժանումներից տեղափոխվել է օժանդակ աշխատանքներ կատարող ստորաբաժանումներ: Մշակվել են նաև սպաների ու տարբեր զինվորական մասնագետների որակավորման գնահատման թերթիկներ և այլն[10]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ում ՌՍ բուռն զարգացմանը հատկապես նպաստեց այն, որ Նախագահ Ֆ. Ռուզվելտն ու նրա մերձավոր շրջապատն ընկալեցին պատերազմական ժամանակաշրջանում պետության և ԶՈՒ-ի կառավարման արդյունավետության մեծացման գործում սոցիոլոգիական հետազոտությունների դրական դերն ու նշանակությունը: Մեծապես նաև դրա շնորհիվ էր, որ ԱՄՆ-ի Բանակի հետազոտական բաժնի *(Research Branch)* առաջին կիրառական հետազոտությունները նախաձեռնվեցին արդեն 1941 թ. դեկտեմբերի 8-ին՝ Փերլ Հարբորի վրա ճապոնացիների հարձակումից ընդամենը մեկ օր հետո: 1942 թ. հունիսից զորքերում կատարվող ՌՍՀ-ներն սկսեցին կրել կանոնավոր բնույթ, իսկ դրանց արդյունքները զինվորական ղեկավարների համար դարձան շատ պահանջված[11]:

Քաղաքական-գաղափարախոսական, հետախուզական, քարոզչական և սոցիալ-մարդասիրական բնույթի անվտանգային խնդիրներ լուծող կազմակերպությունների և հիմնարկների ճյուղավորված ցանցի ձևավորումն ԱՄՆ-ում սկսվել էր դեռ պատերազմի մեջ այդ պետության պաշտոնապես մտնելուց (1941 թ. դեկտեմբերի 7) շատ առաջ: ԱՄՆ-ի ԶՈՒ-ում ստեղծված գիտահետազոտական այդ ցանցի* ուժերով երկրորդ աշխարհամարտի ընթացքում ամենատարբեր պրոբլեմների վերաբերյալ կատարվեցին շուրջ 250 լայնամասշտաբ սոցիոլոգիական հետազոտություններ: Այդ հետազոտությունների արդյունքների վերաբերյալ բարձրագույն հրամանատարության համար կազմված ամենամսյա զեկույցները 1943 թ. ամառվանից ԱՄՆ-ի Բանակի ԳՇ պետ գեներալ Ջ. Մարշալի հրամանով կանոնավորապես ուղարկվում էին

---

[10] Տես *И. В. Образцов.* Социологические исследования в войсках в годы Второй мировой войны: анализ зарубежного опыта. «Социологические исследования», 2015, № 11 (https://www.researchgate.net/publication/322941422_Sociologiceskie_issledovania_v_vojskah_v_gody_Vtoroj_Mirovoj_vojny_analiz_zarubeznogo_opyta_Sociological_Research_Among_the_Troops_During_World_War_II_Analysis_of_International_Experiences):

[11] Տես *S. A. Stouffer, A. A. Lumsdaine, M. H. Lumsdaine, R. M. Williams, M. B. Smith, I. L. Janis, S. A. Star, L. S. Cottrell.* The American Soldier. Studies in Social Psychology in World War II. Princeton, N.J., 1949–1950, Vols 1–4:

* 1944 թ. այդ ցանցը մասնաճյուղեր ուներ ռազմական գործողությունների բոլոր թատերաբեմերում՝ սկսած Եվրոպայից մինչև Խաղաղ օվկիանոս, Ալյասկա և Կարիբյան ավազան:

սպաների շատ ավելի լայն շրջանի՝ գնդերի հրամանատարներին, իսկ դեկտեմբերից՝ անգամ վաշտերի հրամանատարներին: Դրանցում ոչ միայն պարզ ու մատչելի լեզվով շարադրվում էին կատարված հետազոտությունների արդյունքները, այլև ներկայացվում էին խնդիրների լուծմանն ուղղված գործնական առաջարկություններ և հանձնարարականներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում ՌՍ զարգացման համար լուրջ խթան դարձան 1955–1975 թթ. Վիետնամի պատերազմը (որը քաղաքական և փորձագիտական շրջանները գնահատում են որպես ԱՄՆ-ի պատմության ամենատխրահռչակ պատերազմ) և 1991 թ. Պարսից ծոցի պատերազմը, որոնց պատճառով սուր կերպով զգացվեցին ամերիկյան հասարակության վրա ռազմական հաստատությունների գործողությունների անբարենպաստ ազդեցությունները:

Ֆրանսիայում չնայած առաջին համաշխարհային պատերազմից հետո հրապարակվեց զինվորա-քաղաքացիական հարաբերություններին վերաբերող մեծ քանակությամբ գրականություն, սակայն Ալժիրի պատերազմից* (1954–1962 թթ.) հետո միայն՝ 1963 թ., Ֆրանսիայի Զինված ուժերի ԳՇ-ում ստեղծվեց «Ռազմական սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը», որը գիտական-հաստատութենական հենքի վրա դրեց ռազմասոցիոլոգիական հիմնախնդիրների ուսումնասիրությունը[12]:

Կանադան անմիջական մեծ ռազմական վտանգի առջև երբեք չհայտնվելու հետևանքով ընտրել է զինվորական դերի այնպիսի ոչ պատերազմական կատարում, ինչպիսին է մասնակցությունը խաղաղարարական և մարդասիրական օպերացիաներին: ՌՍ-ի նկատմամբ նա որոշակի հետաքրքրություն է ցուցաբերել միայն 1993 թ. Սոմալիի հետաքննությունից** հետո, երբ բազմաթիվ բարձրաստիճան զինվորականներ հեռացան բանակից, իսկ երկրի բնակչության շրջանում կտրուկ կերպով ընկավ բանակի վարկը և

---

* **Ալժիրի պատերազմի** հետևանքով անկում ապրեց Ֆրանսիայի Չորրորդ Հանրապետությունը, բանակում երկու հեղաշրջում տեղի ունեցավ, ի հայտ եկավ ծայրահեղ ազգայնական գաղտնի զինված կազմակերպություն, որը փորձում էր ահաբեկչության միջոցով ստիպել կառավարությանը հրաժարվել Ալժիրի անկախության ճանաչումից (տես *В. А. Упоров.* Война Франции в Алжире 1954- 1962 гг. (https://elar.urfu.ru/bitstream/10995/47384/1/MO-2-47.pdf)):

[12] Տես *Barbara Jankowski, Anne Muxel, Mathias Thura*. La sociologie militaire. Héritages et nouvelles perspectives. “OpenEdition Journals” (https://journals.openedition.org/lectures/54973):

** **Սոմալիի հետաքննությունն** իրականացվել է, այսպես կոչված, Սոմալիի գործի *(Somalia affair)* հետ կապված, որի հիմքում ընկած էր 1993 թ. տեղի ունեցած զինվորական սկանդալը, երբ խաղաղարարական առաքելությամբ այդ երկրում գտնվող կանադացի երկու զինվոր ծեծելով սպանել էին սոմալեցի մի դեռահաս տղայի: Այդ գործողությունը դարձավ կանադական օդադեսանտային գնդում առկա խնդիրները բացահայտելու և գունդը լուծարելու առիթ: Այդ դեպքը լրջորեն խաթարեց նաև կանադական ԶՈՒ-ի բարոյական ոգին և վատթարացրեց ԶՈՒ-ի հեղինակությունը երկրում և աշխարհում: Դրա հետ կապված՝ կարճ ժամանակում տեղի ունեցավ կանադական ԶՈՒ-ի անձնակազմի կրճատում մոտ 25 %-ով:

բարձրագույն քաղաքական ղեկավարության ու բարձր հրամանատարության միջև առաջացան խոր հակասություններ[13]:

Հետաքրքրական է նաև Թուրքիայի օրինակը: 2016 թվականի հուլիսի 25-ին, այսինքն՝ հուլիսի 15-ի հեղաշրջման փորձից ընդամենը 10 օր հետո, այդտեղ հիմնադրվեց Ազգային պաշտպանական համալսարանը (ԹԱՊՀ), որը նպատակ ունի ռազմական կրթությունը խորացնելուն զուգահեռ, պաշտպանության, անվտանգության և ռազմավարության ոլորտներում տարբեր թեմաներով որակյալ և նորարարական բնույթի հետազոտությունների միջոցով հայեցակարգային լուծումներ տրամադրել պետության քաղաքական ղեկավարությանն ու ԶՈւ-ի կառավարման օպերատիվ-ռազմավարական օղակին: Այդ նկատառումներով ԹԱՊՀ բազմաճյուղ կառույցի կարևորագույն օղակներից մեկի՝ Աթաթուրքի անվան ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կազմում ստեղծվեց նաև ՌՍՀ-ների բաժանմունք, ինչպես նաև սկսեց գործել ռազմական սոցիոլոգների պատրաստման մագիստրոսական ուսումնական ծրագիրը[14]:

## 2. ՀՀ ԶՈՒ-ի ռազմասոցիալական պրոբլեմներն արդի փուլում

Վերջին չորս-հինգ տարիների ընթացքում ՀՀ-ի շուրջ տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով առաջացել են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց մեծ մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել և ազդելու է ՀՀ ԶՈւ-ի կազմի, կառուցվածքի, մարտական և բարոյահոգեբանական պատրաստության, ԶՈւ- հասարակություն հարաբերությունների, բանակի և ընդհանրապես պետության նկատմամբ տարբեր սոցիալական խմբերի (ՍԽ-ներ) վերաբերմունքի և ընկալումների վրա: Այդ խնդիրների մեծ մասը ՀՀ ՊՆ-ն ներառել է ՀՀ ԶՈւ-ի բարեփոխումների հիմնական ուղղությունները նախանշող՝ «ՀՀ ՊՆ Հայեցակարգ բանակի կերպափոխման (հիմնական ուղենիշները)» փաստաթղթում (այսուհետ՝ Հայեցակարգ): Ընդ որում, դրանք սահմանվել են որպես ՀՀ ԶՈւ-ի ներկա բարեփոխումների կամ կերպափոխման հիմնական նպատակային գնահատականներ, մասնավորապես՝

- ԶՈւ-ի ղեկավարման և կառավարման, կազմակերպվածքի անհամապատասխանությունը մեր պետության առջև ծառացած սպառնալիքների բնույթին,
- պաշտպանության (ռազմավարական) պլանավորման կարողությունների անբավարար մակարդակը,
- հայրենական ռազմական գիտությունը զարգացնելու անբավարար

[13] Տես *Donna Winslow.* Canadian Society and its Army. “Canadian Military Journal”, Winter 2003–2004 (http://www.journal.forces.gc.ca/vo4/no4/doc/military-socio-eng.pdf):

[14] Տես “Turkish National Defense University (TNDU) Ataturk Institute of Strategic Studies (AISS): General Information and Course Catalogue” (https://www.msu.edu.tr/erasmus/AISS_Erasmus_Course_Catalogue.pdf); “Military Sociology Department” (https://msu.edu.tr/eng/Documents/AISS_Departments/Military_Sociology_Department.pdf):

ներուժը, բանակաշինության կազմակերպման գործում հիմնավոր գիտական և մեթոդական հենքի բացակայությունը,

- զինծառայողների բարոյահոգեբանական պատրաստվածության անհամարժեքությունը զինվորական ծառայության և մարտական արդի խնդիրների կատարման համար անհրաժեշտ պահանջներին,
- զինվորական ծառայության գրավչության անբավարար մակարդակը,
- զորահավաքային և զորակոչային համակարգի անարդյունավետությունը, պատրաստության և համալրման ոչ բարձր մակարդակը. «ՀՀ սահմանափակ զորահավաքային ռեսուրսները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում ժողովրդագրական բացասական միտումները, բնակչության թվի համեմատ մեծաքանակ զինված ուժեր ունենալու անհրաժեշտությունը պարտադրում են նոր առավել արդյունավետ մոտեցումներ որդեգրել զորահավաքային միջոցների համակարգված և արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրման ուղղությամբ»[15],
- տեղեկատվական և կիբեռանվտանգության ապահովման անբավարար մակարդակը և այլն:

Շատ ավելի կարևոր է այն, որ թիրախային խնդիրների սահմանումից զատ Հայեցակարգը նախանշում է նաև այդ խնդիրների համակարգային լուծմանն ուղղված մի շարք կարևոր միջոցառումներ, որոնք համահունչ են սույն հոդվածում արված առաջարկությունների ոգուն, մասնավորապես՝

1. «Զինված ուժերի լավագույն փորձի վերլուծությունը, փոխանակումը, խնդիրների կանխարգելումը կամ դրանց հասցեագրումը օպերատիվ կերպով իրականացնելու նպատակով կձևավորվի Զինված ուժերում քաղված դասերի վերլուծական կենտրոն,... Այն կապահովի զինված ուժերի շարունակական զարգացումը և կատարելագործումը՝ ներքևից վեր սկզբունքով, խնդիրները/գաղափարները վեր հանելու և լուծումները ողջ Զինված ուժերին առաջարկելու միջոցով»[16]:
2. Հայեցակարգում խիստ կարևորվում են բարոյահոգեբանական վիճակի բարելավմանն ուղղված հետևյալ միջոցառումները.
   - մարտական գործողությունների ժամանակ զինծառայողների մարտական ոգին բարձրացնող, ինչպես նաև առօրյա կենսակերպը կարգավորող արժեքային համակարգի ձևավորումը,
   - զինվորական հոգեբանների ինստիտուտի կատարելագործումն ու զարգացումը[17] և այլն:

Հայեցակարգում մատնանշված հիմնախնդիրներից բացի կան նաև ԶՈՒ-ի հետագա կազմակերպական կառուցվածքի որոշման, անձնակազմի համալրման և ներբանակային կյանքի կազմակերպման հետ կապված մի շարք այլ խնդիրներ, մասնավորապես՝

---

[15] Տես «ՀՀ ՊՆ Հայեցակարգ բանակի կերպափոխման (հիմնական ուղենիշները)», էջ 18:

[16] Տես նույն տեղում, էջ 13- 14:

[17] Տես նույն տեղում, «Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում» բաժինը, էջ 21- 23:

- պրոֆեսիոնալ բանակի անցման հետ կապված խնդիրներ,
- զորակոչի ժամանակ սոցիալական արդարության պահպանման, տարբեր մեխանիզմներով ծառայության վերցված զինծառայողների փոխհարաբերությունների հետ կապված խնդիրներ,
- ԶՈՒ-ի տարբեր ենթահամակարգերի համագործակցության՝ մարդկային գործոններով պայմանավորված խնդիրներ,
- բանակում տարբեր սոցիալական խավերի ներկայացվածության հետ կապված խնդիրներ,
- ստորաբաժանումներում միջանձնային հարաբերությունների կարգավորման հետ կապված խնդիրներ և այլն:

### 3. Ռազմասոցիոլոգիական հետազոտությունների դերը ՀՀ ԶՈՒ-ի արդի բարեփոխումների արդյունավետ իրականացման գործում

Մեր պետության և ԶՈՒ-ի առջև ներկայումս ծառացած խնդիրներն ինքնաբերաբար չեն լուծվելու, հետևաբար դրանց արդյունավետ լուծման համար շատ կարևոր է բազմակողմանի և մանրակրկիտ գիտական հետազոտություններով պարզել դրանց պատճառները, բնույթը, իրական ծավալները, հետագա խորացման միտումները, խնդիրների առաջացման հետ առնչվող, ինչպես նաև դրանց լուծման գործում հավանական ներգրավման ենթակա խմբերի մտածելակերպը, տրամադրությունները, վարքը, խնդիրների լուծման գործում ունեցած շարժառիթավորումը (մոտիվացվածությունը) և այլն:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, նմանատիպ խնդիրների լուծման գործում զարգացած երկրներն ավելի քան հարյուր տարի օգտվում են ռազմահումանիտար, այդ թվում՝ ՌՍ հետազոտություններից, որոնց առավել համակարգված կազմակերպման նպատակով այդ երկրների մեծ մասում ստեղծվել են բազմաթիվ գիտահետազոտական կառույցներ, որոնց մի մասը՝ հենց պաշտպանական գերատեսչությունների համակարգերում:

ՀՀ-ում ՌՍ-ի նկատմամբ գործնական հետաքրքրությունն ունի մոտ քսան տարվա պատմություն: Այդ ընթացքում ՀՀ ՊՆ կամ որոշ միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ ձեռնարկվել են մի շարք էմպիրիկ ռազմասոցիոլոգիական հետազոտություններ (ՌՍՀ-ներ), որոնք, սակայն, չեն կրել կանոնավոր բնույթ: Բացի այդ, անցած 7-9 տարիների ընթացքում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների ազդեցությամբ էականորեն փոխվել է (այդ թվում՝ ընդլայնվել է) նաև հրատապ իրականացման կարիք ունեցող ՌՍՀ-ների առարկայական դաշտը:

Գործնականում ՌՍՀ-ներով՝ որպես ԶՈՒ-ի բարեփոխումների գիտական ապահովման միջոցներից մեկի օգնությամբ, հնարավոր է ի հայտ բերել հասարակությունում և ԶՈՒ-ում առկա խնդիրների պատճառները, կանխատեսել դրանց զարգացումներն ու սոցիալական հետևանքները, ինչպես նաև ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության և ԶՈՒ-ի տարբեր մակարդակների հրամանատարների ու պետերի համար մշակել այդ խնդիրների լուծմանն ու համակարգի կատարելագործմանն ուղղված տարաբնույթ գործնական առա-

ջարկություններ ու հանձնարարականներ: Կարծում ենք, որ ՀՀ ԶՈՒ-ի արդի բարեփոխումների արդյունավետ իրականացմանը կոնկրետ աջակցություն ցուցաբերելու տեսանկյունից անհրաժեշտ է առաջիկա տարիներին կանոնավորապես կազմակերպել ՌՍՀ-ներ հետևյալ թեմատիկ ուղղություններով.

1) բանակ–հասարակություն փոխհարաբերությունների ուղղությամբ, այդ թվում՝ ուսումնասիրելու համար.
   - ԶՈՒ-ի և այլ սոցիալական հաստատությունների (ինստիտուտների) (այսուհետ՝ ՍՀ) փոխհարաբերություններն ու համագործակցության վիճակը,
   - ԶՈՒ-ի նկատմամբ տարբեր սոցիալական խմբերի (ՍԽ) վերաբերմունքը,
   - բանակի վարկի բարձրացման հետ կապված խնդիրները, այդ թվում՝ զինծառայության անցնող անձանց միջոցով հասարակության տարբեր ՍԽ-ներին բնորոշ արժեհամակարգերի փոխանցումը ԶՈՒ-ին, բանակի նկատմամբ հասարակության տարբեր ՍՀ-ների և կազմակերպությունների (քաղաքական, տնտեսական, սոցիալական պաշտպանության, կրթական, մշակութային, կրոնական, ՀԿ-ներ, արդարադատության մարմիններ, ԶԼՄ-ներ, տնտեսավարող սուբյեկտներ և այլն) ունեցած տրամադրությունները, վարքը,
   - ԶՈՒ-ի քաղաքացիական վերահսկողության հետ կապված խնդիրները,
   - պետության վարած անվտանգային, այդ թվում՝ պաշտպանական, քաղաքականությանը տարբեր ՍԽ-ների տված գնահատականները,
   - քաղաքացիական հասարակության (ՔՀ), այդ թվում՝ տարբեր ՍՀ-ների և ՍԽ-ների, մասնակցությունը պաշտպանական քաղաքականության մշակման գործընթացներին, և այլն,
2) ԶՈՒ-ի կառավարման կատարելագործման գործընթացներում առկա խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես՝
   - զորակոչի կազմակերպման և պահեստազորի զորահավաքի հետ կապված խնդիրները, այդ գործընթացներում սոցիալական արդարության ապահովման վիճակը,
   - ռազմակրթական գործընթացների կազմակերպման խնդիրները,
   - ԶՈՒ-ում կադրային քաղաքականության խնդիրները,
   - ԶՈՒ-ի տեխնիկատնտեսական և տեղեկատվական ապահովվածության վիճակին զինծառայողների տարբեր խմբերի, ինչպես նաև փորձագիտական շրջանների տված գնահատականները,
   - մարտական հերթապահության և ներքին ծառայության կազմակերպման հետ կապված խնդիրները, և այլն,
3) բանակի սոցիալական կազմի հետ կապված խնդիրների բացահայտման ուղղությամբ, այդ թվում՝
   - հայ սպայի կերպարը, նրա արժեհամակարգը և հասարակությունում ունեցած տեղը,
   - կանանց ներգրավվածությունը Հայաստանի ԶՈՒ-ում, դրա հետ կապված խնդիրները,

- ԶՈՒ-ում ազգային և այլ փոքրամասնությունների ներգրավման հետ կապված խնդիրները,
- բանակի սոցիալական շերտավորումը, ժամկետային ու պայմանագրային զինծառայողների և սպաների սոցիալական կազմը, փոխհարաբերությունները և այլն,

4) զինվորական կոլեկտիվի (ԶԿ) համախմբման, դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման, ստորաբաժանման արդյունավետ գործառության ապահովման հետ կապված պրոբլեմների բացահայտման ուղղությամբ, այդ թվում՝

- տարբեր զորատեսակներում, զորամիավորումներում և զորամասերում ոչ կանոնադրական հարաբերությունների տարածվածությունը, դրանց դրսևորումների առանձնահատկությունները,
- ստորաբաժանումների անձնակազմերի ոչ պաշտոնական ներքին կառուցվածքը, միջանձնային և միջխմբային հարաբերությունների խնդիրները,
- ստորաբաժանումում ԶԿ ձևավորման հետ կապված գաղափարաարժեքային խնդիրները,
- ծառայության պայմաններով զինծառայողների բավարարվածության աստիճանը,
- նորակոչիկների հարմարման խնդիրները,
- զինվորական անձնակազմի ստրեսային դիմադրողականության աստիճանը,
- տարբեր մակարդակների հրամանատարների կառավարչական և առաջնորդական որակները,
- զինվորական առաջխաղացման (կարիերայի) սոցիալական, իրավական և բարոյահոգեբանական խնդիրները, և այլն,

5) զինծառայողների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործընթացներում առկա խնդիրների բացահատման ուղղությամբ, այդ թվում՝

- զոհված, վիրավոր զինծառայողների ու նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության, վիրավորների սոցիալ-հոգեբանական վերականգնման խնդիրները,
- ժամկետային և պայմանագրային զինծառայողների սոցիալական պաշտպանության խնդիրները,
- քաղաքացիական կյանքին զորացրված զինծառայողների վերահարմարման խնդիրները, և այլն,

6) որոշ ոչ բարեկամ պետությունների վարած տեղեկատվական և քարոզչական պատերազմի հետևանքով առաջացող խնդիրների ուսումնասիրությունների ուղղությամբ, այդ թվում՝

- աշխարհում, հատկապես՝ տարածաշրջանում ընթացող ռազմասոցիալական գործընթացների ու մեր հասարակության և ԶՈՒ-ի վրա դրանց հավանական ազդեցությունները,
- որոշ ոչ բարեկամ պետությունների տեղեկատվաքարոզչական գործողությունների հետևանքով առաջացող խնդիրները, և այլն:

Կարծում ենք, որ վերը նշված ուղղություններով ռազմասոցիոլոգիական կանոնավոր հետազոտություններ կատարելու համար հասունացել է ՀՀ պաշտպանության նախարարության (ՊՆ) համակարգում ռազմասոցիոլոգիական հետազոտությունների մասնագիտացված ստորաբաժանման (կենտրոնի) ստեղծումը: Նման կենտրոնի ուժերով կատարվող կանոնավոր ՌՍՀ-ները հնարավորություն կտան մշակելու՝

- գործնական առաջարկություններ և հանձնարարականներ վերոնշյալ ռազմասոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ,
- ռազմաքաղաքական ղեկավարների և պաշտպանական գերատեսչության ղեկավարության համար՝ վերլուծական տեղեկանքներ տարածաշրջանի և աշխարհի՝ ՀՀ համար հավանական վտանգ ներկայացնող պետություններում տեղի ունեցող սոցիալական գործընթացների, մեր պետության և ԶՈՒ-ի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունների ու վերջինների կանխման արդյունավետ միջոցների վերաբերյալ,
- ԶՈՒ-ի առանձին օղակների, տարբեր մակարդակների հրամանատարների, անձնակազմի հետ աշխատանքների գծով տեղակալների, սպահոգեբանների համար՝ հակառակորդի քարոզչական հարձակումներին հակազդելու եղանակներ, ինչպես նաև ինքնուրույն կերպով ՌՍՀ-ներ կազմակերպելու մեթոդիկաներ, և այլն:

Բացի այդ, գերատեսչական ենթակայության ՌՍՀ կենտրոն ունենալու պարագայում երաշխավորվելու է նաև այդ հետազոտությունների միջոցով ՀՀ ԶՈՒ-ում բացահայտված ցավոտ հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկությունների անցանկալի արտահոսքի դեպքերի կանխումը:

**ВОЕННАЯ СОЦИОЛОГИЯ**

# РОЛЬ ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ В СОВРЕМЕННЫХ РЕФОРМАХ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА

*В. П. ГЕВОРГЯН, ученый-аналитик Центра исследований военно-гуманитарных наук НИУО МО РА, социолог*

РЕЗЮМЕ

В последнее время Республика Армения встала перед многочисленными сложными проблемами, связанными с реформированием Вооруженных сил, эффективное и быстрое решение которых предполагает использование современных научных подходов, новейших технологий (в том числе, гуманитарных), которые могут способствовать качественным изменениям ВС РА. В качестве одного из важных средств научного обеспечения реформ рассматривается создание механизма проведения регулярных военно-социологических исследований (ВСИ).

В качестве доказательства полезности применения ВСИ кратко рассмотрен опыт ряда развитых стран мира (России, США и др.), по-

казывающий, как они в тяжелых военно-политических условиях благодаря ВСИ успешно решали ряд сложных проблем по повышению боеготовности и боеспособности войск и обеспечению их боевой и психологической устойчивости.

В общих чертах обсуждается роль ВСИ в деле выявления причин имеющихся в системе ВС проблем, в прогнозировании возможных сценариев развития и социальных последствий этих проблем, а также в процессе разработки на основании проведенных ВСИ различных действенных предложений и рекомендаций, направленных на решение исследуемых проблем и на усовершенствование всей оборонной системы в целом для высшего военно-политического руководства страны и для командиров и начальников различных уровней.

В результате анализа сделан следующий обобщающий вывод: в целях поддержки эффективного и научно обоснованного осуществления современных реформ ВС РА более чем назрела необходимость создания эффективного механизма регулярного проведения ВСИ в системе ВС РА. В качестве такового механизма предлагается создание специализированного военно-социологического подразделения в системе Министерства обороны РА. При этом желательно, чтобы оно имело широкую междисциплинарную направленность (в том числе: военно-психологическую, военно-политологическую и т. д.).

**MILITARY SOCIOLOGY**

## THE ROLE OF MILITARY SOCIOLOGICAL RESEARCH IN MODERN REFORMS IN THE RA ARMED FORCES

*V. P. GEVORGYAN, Research Fellow, Center for Research in Military-Humanitarian Sciences, NDRU, MOD, RA, Sociologist*

SUMMARY

Recently, the Republic of Armenia has faced numerous complex problems related to the reforms being implemented in the Armed Forces, the efficient and rapid solution of which presumes the use of modern scientific approaches, up-to-the-minute technology (including humanitarian one), which can contribute to qualitative changes in the RA Armed Forces. The creation of a mechanism for conducting regular military sociological research (MSR) is reviewed as one of the important means of scientific support for reforms.

As evidence of the MSR employment efficiency, the experience of a number of world developed countries (Russia, the USA, etc.) is briefly reviewed, showing how, in difficult military-political conditions, owing to the MSR, they successfully solved a number of complex problems to increase

the troops combat readiness and combat effectiveness, and ensure their combat and psychological stability.

Broadly speaking, the article discusses the role of the MSR in identifying the causes of problems existing in the Armed Forces system, in predicting possible scenarios for the development as well as social consequences of these problems. Also, based on the carried out MSR, it dwells on the role of the MSR in the process of developing various efficacious proposals and recommendations, targeted at solving the problems under study and improving the entire defense system as a whole for the country's top military-political leadership and for commanders and heads at various levels.

As a result of the analysis, the following general conclusion was drawn: to support the efficient and scientifically based implementation of modern reforms of the RA Armed Forces, there is more than a need to create an effective mechanism for the regular conduct of the MSR in the RA Armed Forces system. As such a mechanism, it is proposed to create a specialized military sociological unit in the system of the RA Ministry of Defense. Moreover, it is desirable that it have a broad interdisciplinary orientation (including military-psychological, military-political, etc).

DOI: 10.61760/18290108-krb.25.1-110

# ՌԱԶՄԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐ*

*Կ. Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, հոգեբանական գիտությունների թեկնածու (ՌԴ), ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի զինվորական իրավունքի և առաջնորդության ամբիոնի զինվորական մանկավարժության և հոգեբանության ցիկլի ավագ դասախոս*



## Ներածություն

Երևի մարդկային գործունեության ոչ մի ոլորտում ղեկավարը չի կրում պատասխանատվության այնպիսի բեռ, ինչպես ռազմական բնագավառում: Այստեղ հրամանատարի որոշումները կապված են ենթակաների կյանքին և առողջությանը վնաս պատճառելու մեծ ռիսկի հետ: Բացի այդ, մարդը բնազդաբար աշխատում է խուսափել վտանգից, ինչը մարտի դաշտում դրսևորվում է որպես «խուսափում մարտից»[1]: Ուստի մարտում հրամանատարը պետք է կարողանա հաղթահարել ոչ միայն իր, այլև իր ենթակաների ինքնապահպանման բնազդը: Իսկ դա նշանակում է, որ սպայի (ուստի և ապագա սպայի) հոգեկանին՝ կայունության, կամայնության, տոկունության տեսակետից, շատ ավելի խիստ պահանջներ պետք է ներկայացվեն, քան այլ տեսակի գործունեություն վարող անձանց:

Ահա այստեղ է, որ առաջին պլան են մղվում ռազմական բուհերի (ՌԲՈՒՀ) կուրսանտի անձնային հատկությունները և մասնագիտության ընտրության գործում առավել ազդու շարժառիթները, դրանց հիմնավորությունն ու կայունությունը, քանի որ դրանք են արդյունավետ կրթություն ստանալու և հետագայում հաջողությամբ ծառայելու կարևոր նախապայմանը: Անշուշտ, սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումն զգալի կերպով նպաստում է ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու և սովորելու երիտասարդության շարժառիթավորմանը: Այդ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հետևողական քայլեր է ձեռնարկում, օրինակ՝ նորավարտ սպաներին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան[2], ատեստավորման միջոցով

---

[*] Հոդվածը ներկայացվել է 23.07.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 19.05.2025:

[1] Տես *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1- 2:

[2] Այդ մասին տես ՀՀ Կառավարության 2022 թ. հոկտեմբերի 27-ի «Ռազմաուսումնական հաստատություն ավարտած և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում կամ Հայաստանի Հանրապետության ազգային ան-

կրկնապատկվում է զինծառայողների աշխատավարձը և այլն: Սակայն միայն սոցիալական գործոնը բավարար չէ, եթե չի ամրապնդվում լավ մասնագետ դառնալու նրանց ներքին դրական շարժառիթավորմամբ[3]: Հետևաբար պետք է հաշվի առնել շարժառիթավորման վրա ազդող այլ գործոններ ևս, օրինակ՝ հասարակության մեջ տիրապետող արժեքները, իդեալները, պահանջմունքները, հետաքրքրությունները և, ինչպես նշել ենք, ապագա սպաների հոգեկան հատկությունները[4]: Ընդսմին նյութական ու հոգևոր արժեքների անսահմանափակ հասարակական արտադրության այս արգասիքները դրդիչ ներուժ են ստանում ներքնայնացված լինելու դեպքում և կատարում են իմաստագոյացման ֆունկցիայի դեր՝ գիտակցության մեջ արտացոլվող իրականությունն օժտելով անձնային իմաստով[5]:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը և մեր դիտարկումները վկայում են, որ ուսումնառության ժամանակ սովորելու նկատմամբ ուսանողների[*] շարժառիթավորումը հաճախ նվազում է: Ըստ այդմ անհրաժեշտ է լինում ձևավորել նոր շարժառիթներ՝ ավելի կայուն և տվյալ անձնավորությանն ավելի հարիր: Ուստի հարց է ծագում, թե որոնք են լավ մասնագետ դառնալու շարժառիթավորման հոգեբանական հիմքերը և ինչ փոխազդեցության մեջ են դրանք տվյալ անձնավորության պահանջմունքների, ճանաչողական գործընթացների, հոգեկան հատկությունների հետ:

## 1. Կուրսանտների շարժառիթավորման սոցիալ-հոգեբանական հիմքերը. տեսական մոտեցում

Հայտնի է, որ պետք է ուսուցանել տասնյակ ուսանողների, որ դրանց թվում լինի գոնե մեկ գերազանց մասնագետ: Իհարկե, ցանկացած բուհ ձգտում է մեծացնելու նման մասնագետների թիվը: Այդ նպատակով կրթական գործընթացներում ուսումնառողների ներգրավումից առաջ կատարվում է նրանց ընտրազատում տարաբնույթ չափանիշներով ու եղանակներով՝

վտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան հատկացնելու կարգը և պայմանները սահմանելու մասին» հմ. 1665-Ն որոշումը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=169911):

[3] Տես *М. Н. Айдаева.* Влияние типа темперамента на мотивацию выбора профессии. «Интеллектуальный потенциал XXI века: ступени познания», 2013 (https://cyberleninka.ru/article/n/vliyanie-tipa-temperamenta-na-motivatsiyu-vybora-professii/viewer):

[4] Տես, օրինակ, *Կ. Հ. Մարգարյան,* Սպայի անձնավորության ձևավորման հարցի շուրջ: «ՀԲ», 2004, հմ. 3- 4:

[5] Տես «Психология. Словарь». Под общей редакцией А. В. Петровского и М. Г. Ярошевского. М., 1990, с. 219:

[*] Դա հատկապես բնորոշ է ԲՈՒՀ-ներում սովորողներին, քանի որ նրանց սովորական միջավայրը և կյանքի ռեժիմը կտրուկ կերպով փոխվում են, առաջանում է ընտանիքի, ընկերների նկատմամբ կարոտ, ազատության սահմանափակում, խնդիրները զուտ իր ուժերով լուծելու անհրաժեշտություն և այլ դժվարություններ ու անհարմարություններ, որոնց հարմարվելու համար պետք է ժամանակ, իսկ կուրսանտները զուրկ են դրանից:

գրավոր ու բանավոր քննություններ, քննազրույցներ և այլն: Դրանք գերազանցապես նպատակաուղղված են ընդունվողների գիտելիքների և ընդունակությունների ստուգմանը: Սակայն վերջին տասնամյակներում հատկապես անգլիալեզու հետազոտական հրապարակումներում ավելի ու ավելի է հիմնավորվում այն մոտեցումը, որ կրթության բնագավառում ուսումնառողների, ապա և մասնագետ դարձած շրջանավարտների հաջողություններն զգալի չափով պայմանավորված են ոչ միայն մտավոր կարողություններով, այլև լավ մասնագետ դառնալու կայուն դրական շարժառիթավորմամբ, որը ծառայում է որպես «վառելիք ընդունակությունները հրկիզելու և դրանք հաջողությունների փոխակերպելու համար»[6]: Միևնույն ժամանակ, նշվում է, որ դրանց միջև կապը թույլ է արտահայտված, թեև շարժառիթները առաջադիմության վրա ազդում են հիմնականում բանականության միջոցով[7]:

Շարժառիթավորման կարևորությունը բացատրվում է այն պարզ տրամաբանությամբ, որ մարդ իր ընդունակությունները, այն էլ՝ հնարավորինս լիարժեք կերպով, գործի է դնում միայն այն դեպքում, երբ հետաքրքրված է տվյալ գործով, ցանկանում է դրա ասպարեզում հասնել հաջողության: Հենց այս գաղափարն է *ձեռքբերման շարժառիթի* տեսության հիմքում[8]:

Ընդհանրապես մարդը ցանկացած գործողություն կատարում է շարժառիթի ազդեցությամբ, մի բացատրական կառուցվածքի, որը կիրառվում է տվյալ անձնավորության վարքը բացատրելու համար (ինչու է նա գործում այս կերպ և ոչ այնպես): Ձեռքբերման շարժառիթավորումը դրսևորվում է որպես անձնավորության ձգտում իր աշխատանքը կատարելու հնարավորինս լավ, լավագույն արդյունքների հասնելու այն ասպարեզում, որն ինքը համարում է իր համար կարևոր: Այս մոտեցումը դարձել է ճանաչողական հոգեբանության ուղղության մասնագետների (Ռ. Ստեռնբերգ, Բ. Վագներ, Ջ. Ատկինսոն, Հ. Հեկհաուզեն և ուրիշներ) առանձնակի ուսումնասիրությունների առարկա:

Որոշ հետազոտողների կարծիքով՝ կարևոր դեր է խաղում նաև «անհաջողություններից խուսափելու» բացասական շարժառիթավորումը, որը դասվում է այնպիսի շարժառիթավորումների շարքը, ինչպիսիք են իշխանության (հակառակ այլ մարդկանց դիմադրությանը՝ կամային ճիգեր գործադրելու ընդունակություն), աֆիլյացիայի, կամ մտերմականության (ձգտում այլ մարդկանց հետ մտերմանալու, շփվելու, հավանության արժանանալու), թշվառության (հասարակությունում ընդունված չլինելու վախ), այլասիրության (ձգտում օգնելու ուրիշներին՝ հակառակ իր շահերի) շարժառիթները: «Ան-

---

[6] Տես *Betsy D. McCoach, Jessica Kay Flake.* The Role of Motivation. APA PsycNet, 2018 (https://doi.org/10.1037/0000038-013):

[7] Տես *Katharine Kriegbaum, Nicolas Becker, Birgit Spinath.* The Relative Importance of Intelligence and Motivation as Predictors of School Achievement: A meta-analysis. “Educational Research Review”, November 2018, Vol. 25 (https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S1747938X18300691?via%3Dihub):

[8] Տես *Т. О. Гордеева.* Мотивация достижения: теории, исследования, проблемы (https://studfile.net/preview/9995716/):

հաջողությունից խուսափելու» շարժառիթով անհատները ձգտում են ոչ թե հաջողության, այլ չձախողվելու: Նման մարդիկ ձախողումից հետո ավելի են ընկճվում, իսկ լավ արդյունքների սովորաբար հասնում են հաջողությունից հետո[9]:

Ընդունված է համարել, որ շարժառիթը «այն նյութական առարկաների ընդհանրացումն է, որոնք մարդու համար արժեք են ներկայացնում և որոնում են նրա գործունեության վեկտորը»[10]: Երբեմն շարժառիթը դիտվում է որպես պահանջմունքի կամ նպատակի հոմանիշ, ինչը սխալ է: Եթե պահանջմունքը սովն է, իսկ նպատակը՝ ուտելը, ապա ճաշով ափսեն մարդու շարժառիթն է[11]:

Զինվորական ծառայությանը մղող շարժառիթները ավանդաբար խարսխվել են ազգային հոգևոր-գաղափարական արժեքների վրա և կարգավորվել են այնպիսի սոցիալ-սահմանակարգային նորմերով, ինչպիսիք են պարտքի, պատվի զգացումը, ինքնազոհողությունը, Հայրենիքն ու հայրենասիրությունը: Սակայն անցյալ դարի երկրորդ կեսին բանակի ու զինվորական ծառայության նկատմամբ վերաբերմունքը փոխվեց՝ շեղվելով դեպի նյութականը՝ ընկալվելով որպես աշխատանք: Ըստ այդմ առաջին պլան մղվեցին այն շարժառիթները, որոնք պայմանավորված էին սոցիալ-տնտեսական ու ֆինանսական ապահովվածության նկատառումներով: Դա սկիզբ առավ ամերիկյան բանակում և տարածվեց այլ երկրներում[12]: Կարծում ենք՝ այս հանգամանքը միանգամայն տրամաբանական էր, քանի որ ամերիկյան զինվորականները պատերազմում էին իրենց երկրից շատ հեռու, ուստի Հայրենիքի պաշտպանության մասին չէր կարող խոսք լինել: Ավելացնենք, որ մեր տեսակետից՝ երկրորդ մոդելը հատկապես սուղ ֆինանսատնտեսական հնարավորություններով պետությունների համար կարող է հղի լինել որոշակի անվտանգային ռիսկերով:

Բազմաթիվ հետազոտություններով հայտնաբերվել է շարժառիթավորման կապը զինվորական ծառայության նկատմամբ վերաբերմունքի հետ: Մասնավորապես՝ ռուսաստանցի հետազոտող Ե. Կառլովան իր հետազոտությունների արդյունքների և գրականության տվյալների հանգամանալից վերլուծության հիման վրա ըստ շարժառիթավորման տիպերի առանձնաց-

---

[9] Տես *И. Ю. Тарасова.* Сущность понятия «мотивация к избеганию неудач» в отечественной психологии. «Вестник науки», 2023, т. 3, № 2 (59) (https://www.вестник-науки.рф/archiv/journal-2-59-3.pdf#page=117):

[10] Տես “PSYCHOLOGIES”, «Мотив» (https://www.psychologies.ru/glossary/12/motiv/):

[11] Տես նույն տեղում:

[12] Տես *Е. Н. Карлова.* Типы мотивации курсантов и их связь с различными показателями отношения к военной профессии. «Социологические исследования», 2018, № 7 (https://www.socis.isras.ru/files/File/2018/2018_7/KARLOVA_95-104.pdf); *Charles C. Moscos.* Institution Versus Occupation: Contrasting Models of Military Organization. International Security Studies Program of the Woodrow Wilson International Center for Scholars, 19 March 1981 (https://apps.dtic.mil/sti/pdfs/ADA096966.pdf):

նում է երեք խումբ ունկնդիրների՝ իդեալիստների, պրագմատիկների և սկեպտիկների: Նա նշում է, որ իդեալիստներն առավել մեծ չափով են գնահատում զինվորական ծառայության սահմանակարգային ու հաստատութենական արժեքները, իրենց նույնականացնում են տարբեր կարգախմբերի զինծառայողների հետ և հակված են դեպի երկարատև ծառայության: Պրագմատիկները կարևորում են ծառայողական աճման հնարավորությունները, նյութական առավելությունները և, միևնույն ժամանակ, գնահատում են ավանդական զինվորական արժեքները ու հակված են համեմատաբար երկարատև զինվորական ծառայության: Մինչդեռ սկեպտիկները սակավ համակրանք են ցուցաբերում զինվորական հաստատութենական ու սահմանակարգային արժեքների, կարգուկանոնի ու կարգապահության նկատմամբ և տրամադրված չեն երկարատև ծառայելու[13]:

Իր հերթին հոգեբան Ա. Վ. Ֆոմինը, ուսումնասիրելով ՌԲՈՒՀ ընդունվողների շարժառիթները, առանձնացնում է նրանց հետևյալ տիպերը՝ *պրագմատիկների* (ընտրություն կատարել են ըստ բուհի մատչելիության), *մատերիալիստների* (ընտրություն կատարել են հետագա նյութական ապահովվածության ակնկալիքով), *ռոմանտիկների* (ընտրել են ըստ հուզական՝ հայրենասիրական, ազգային ավանդական պատկերացումների), *հնազանդականների* («ընտրություն» կատարել են ծնողների ցանկությամբ) և *ավանդականների*, կամ *ավանդույթ շարունակողների* (զինվորականի ընտանիքի զավակներ են)[14]:

Արևմտյան մասնագետները հիմնականում միակարծիք են այն հարցում, որ ուսանողների շարժառիթավորումը մեծապես պայմանավորված է չորս բաղադրիչներով: Թեև անհրաժեշտ է դրանցից առնվազն մեկի առկայությունը, սակայն շարժառիթավորվածության աստիճանը պայմանավորված է դրանց թվով, որքան շատ՝ այնքան լավ: Այդ բաղադրիչներից են.

- *ծեռնահասություն (competence).* ուսանողը համարում է, որ կարող է լուծել տվյալ խնդիրը,
- *վերահսկողություն - ինքնուրույնություն (control/autonomy).* ուսանողը զգում է վերահսկողությունը՝ տեսնելով իր գործողությունների և արդյունքի միջև կապը, սակայն պահպանում է իր ինքնուրույնությունը՝ ունենալով որոշակի ազատություն տվյալ խնդրի կատարման ու կատարման ընտրության հարցում,
- *հետաքրքրություն - արժեք (interest/value).* ուսանողը որոշակի հետաքրքրություն է ցուցաբերում առաջադրանքի կատարման նկատմամբ կամ արժեքավորում է դրա կատարումը,
- *հարաբերակցվածություն (relatedness).* առաջադրանքի կատարման շնորհիվ ուսանողն արժանանում է որոշակի սոցիալական պարգևի՝ որո-

[13] Տես *Ե. Ն. Կառլովա,* Նշ. աշխ.:

[14] Տես *А. В. Фомин.* Аксиологические факторы военно-профессионального выбора российской молодежи. Диссертация кандидата социологических наук. Саратов, 2015:

շակի դասի կամ այլ ցանկալի սոցիալական խմբի պատկանելության զգացումի կամ իր համար որոշակի սոցիալական արժեք ներկայացնող մարդու հավանության[15]:

Մասնագետները նաև նշում են, որ ՌԲՈՒՀ-ների ունկնդիրների ուսումնամասնագիտական շարժառիթավորումը, որը նրանց ուղղորդել է բուհի ընտրության ժամանակ, ուսման ընթացքում սկսում է նվազել, սակայն բարձր կուրսերում* դարձյալ որոշ չափով վերականգնվում է[16]: Սա հույժ կարևոր հանգամանք է, որը անհրաժեշտաբար պետք է հաշվի առնեն դասախոսները, որպեսզի չկորցնեն իրենց ուսանողներին: Չէ՞ որ շարժառիթավորմամբ են պայմանավորված ուսանողի ակտիվությունը, այն էներգիան, որը նա ներդրում է յուրաքանչյուր խնդիր լուծելու համար. թե ինչ է նա մտածում և զգում այդ խնդրի առնչությամբ ու որքան երկար է համառում այդ խնդրում[17]:

Ինչ վերաբերում է կուրսանտների շարժառիթավորման նվազմանը, ապա կարելի է առանձնացնել հետևյալ պատճառները. ցածր մակարդակի գիտելիքներ բուհ ընդունվելու ժամանակ (տվյալ առարկայից կուրսանտի ունեցած գիտելիքների անբավարարությունը խանգարում է նրան լիարժեք կերպով մասնակցելու պարապմունքներին, ինչը հանգեցնում է այդ առարկայի նկատմամբ հետաքրքրության կորստի), գիտելիքների ստացման պայմանների ու ձևերի փոփոխություն (քանի որ ռազմական բուհում ամեն բան կանոնակարգված է ըստ ժամանակի՝ համաձայն օրակարգի, չկան քաղաք ազատ ելքի հնարավորություն, ծնողական խնամակալություն ու շփումներ և այլն), ձեռք բերվող մասնագիտության նկատմամբ հետաքրքրության կորուստ (քանի որ ընդունվողներից շատերը վատ պատկերացում ունեն իրենց մասնագիտության մասին)[18]:

---

[15] Տես *Jacob Filgana, John Sakiyo, D. M. Gwany and A. U. Okoronka.* Motivation in Learning. “Asian Journal of Education and Social Studies”, 2020, Vol. 10, N 4 (https://www.researchgate.net/publication/344199983_Motivation_in_Learning):

* Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ բարձր կուրսերում սովորող կուրսանտներին փոխադրել վերահսկելի հանրակացարանային ապրելակերպի՝ ազատ ելքումուտքով՝ նրանց նախապատրաստելով սպայական կյանքին:

[16] Տես, օրինակ, *Ե. Ն. Կառլովա,* Նշ. աշխ., *Г. А. Виноградова, О. Б. Бобков.* Динамика учебно-профессиональной мотивации курсантов в процессе обучения в военном вузе. «Известия Самарского научного центра Российской академии наук», 2012, т. 14, № 2 (https://cyberleninka.ru/article/n/dinamika-uchebno-professionalnoy-motivatsii-kursantov-v-protsesse-obucheniya-v-voennom-vuze/viewer):

[17] Տես *Ramli Bakar.* The Effect of Learning Motivation on Student's Productive Competencies in Vocational High School, West Sumatra. “International Journal of Asian Social Science”, 2014, Vol. 4, N 6 (https://archive.aessweb.com/index.php/5007/article/view/2672/4057):

[18] Տես *Ю. В. Микрюков.* Формирование мотивации у курсантов военных вузов в условиях профессиональной подготовки. «Вестник Южно-Уральского государственного гуманитарно-педагогического университета», 2018, № 8 (https://cyberleninka.ru/article/n/formirovanie-motivatsii-u-kursantov-voennyh-vuzov-v-usloviyah-

## 2. ՈՒսուցման ընթացքում կուրսանտների խառնվածքի հաշվառմամբ շարժառիթավորման հոգեբանամանկավարժական որոշ եղանակներ

Սպայի կարևոր բնութագրերից է վտանգի պայմաններում արագ ու ճիշտ կողմնորոշվելու, հստակ ու հիմնավոր որոշում ընդունելու և համապատասխանաբար արդյունավետ կերպով գործելու կարողությունը: Ուստի հրամանատարական և պրոֆեսորադասախոսական կազմը սովորաբար ուշադրություն է դարձնում այն բանին, թե ինչպիսի տեմպով և որակով են կուրսանտները կատարում իրենց առաջադրանքները, քանի որ դասախոսներն ու անմիջական հրամանատարները համարում են, թե լավ պատրաստված կուրսանտը անգամ ամենաբարդ իրավիճակներում հաջողությամբ կկատարի առաջադրանքը: Կարծում ենք, որ այս պնդումը չի կարելի ընդունել անվերապահորեն, քանի որ առաջադրանքի կատարումը գնահատելիս պետք է նաև հաշվի առնել կուրսանտի անհատական հոգեկան հատկությունները, քանի որ մի բան է գործել պարապմունքի, անգամ զորավարժության ժամանակ, և այլ՝ թեժ մարտի բովում:

Մարդու տարբերակիչ հոգեֆիզիոլոգիական գծերի նկարագրության համար առանձնակի կարևորություն ունի խառնվածքը, կամ բարձրագույն նյարդային գործունեության տիպը, որը այդ նկարագրության հիմնական բնութագրիչն է: Խառնվածք է կոչվում «անհատի հոգեկան գործունեության դինամիկական հատկանիշների բնութագիրը՝ ըստ հոգեկան գործընթացների ու վիճակների, տեմպի, ռիթմի և ինտենսիվության: Խառնվածքի հիմնական բաղադրամասերն են՝ ա) անհատի ընդհանուր հոգեկան ակտիվությունը, որի դրսևորումներից են համառությունը, նպատակասլացությունը, ուշադրության կայունությունը և այլն, բ) հուզականությունը, որը բնորոշվում է անհատի զգացմունքների ծագման յուրահատկություններով (տպավորվող լինելը, իմպուլսիվությունը և հուզական շարժունությունը), գ) էքստրավերսիան և ինտրովերսիան, որոնք ցույց են տալիս անհատի ակտիվության շարժառիթների աղբյուրը, դ) խառնվածքի շարժական բաղադրիչը (շարժումների արագությունը, ուժը, կտրուկությունը և այլն)՝ ներհոգեկան վիճակների դինամիկայի դրսևորման միջոցները»[19]:

Նաև հայտնի է, որ հոգեկան հատկություններից խառնվածքն է առավել էական ազդեցություն գործում ուսումնական գործընթացներում կուրսանտի արդյունավետ ներգրավվածության վրա[20]:

---

professionalnoy-podgotovki/viewer); *О. Б. Бобков, Г. А. Виноградова.* Факторы, влияющие на формирование учебно-профессиональной мотивации курсантов военного вуза. «Известия Самарского научного центра Российской академии наук», 2012, т. 14, № 2 (https://cyberleninka.ru/article/n/faktory-vliyayuschie-na-formirovanie-uchebno-professionalnoy-motivatsii-kursantov-voennogo-vuza/viewer):

[19] Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5: Ե., 1979, էջ 32:

[20] Տես, օրինակ, *Е. А. Трубинова, Т. В. Гультяева, Е. С. Ванюкова.* Влияние типа темперамента на учебную деятельность. “International scientific review”, 2017

Ուսումնամասնագիտական գործունեության ժամանակ, պայմանավորված նյարդային համակարգով, շարժառիթները տարբեր ազդեցություններ ու դրսևորումներ են ունենում: Օրինակ` ուժեղ տիպի նյարդային համակարգ ունեցող կուրսանտները քննությունների, զորավարժությունների ժամանակ կարող են ցուցաբերել ավելի լավ արդյունքներ, քան ուսման ընթացքում, մինչդեռ թույլ տիպի նյարդային համակարգ ունեցող կուրսանտները ավելի հաջող կերպով են իրենց դրսևորում ուսման ժամանակ, իսկ քննությունների, զորավարժությունների ժամանակ նրանց արդյունքները վատանում են` կորցնելով կայունությունը: Դա բացատրվում է խառնվածքների տարբերություններով, այսինքն` ըստ գրգռականության, դիմացկունության, պատասխանատվության, ռիսկի ազդեցությամբ առաջացող հուզական վիճակներին հարմարվելու կարողության[21]: Ընդսմին թույլ նյարդային համակարգով անձնավորությունները սովորաբար ստատիկ, միապաղաղ բնույթի աշխատանք կատարելիս դիմացկունության առումով գերազանցում են ուժեղներին:

Ուսումնական գործընթացում մեծ ծավալով տեղեկույթին, սոցիալական հաղորդակցման բազմաչափությանը, մեծ պատասխանատվությանը և պարտականություններին կուրսանտը արձագանքում է ըստ իր խառնվածքի տիպի: Ուստի կուրսանտի շարժառիթավորմանն ուղղված հոգեբանամանկավարժական ներգործության մեթոդներն արդյունավետ կլինեն, եթե հաշվի առնվեն խառնվածքի տիպին բնորոշ բնութագրերը[22]: Այսպես.

1. սանգվինիկները եռանդուն ու աշխույժ են, օժտված են մեծ աշխատունակությամբ և ունեն զարգացած հաղորդակցային հմտություններ, որոնց շնորհիվ կարողանում են հեշտությամբ հաստատել միջանձնային կապեր: Նրանք համեմատաբար հեշտ են տանում անհաջողությունները, անախորժությունները, քննադատությանը արձագանքում են հանգիստ, նրանց շարժումներն ու դիմախաղը արտահայտիչ են, նրանց հատուկ են տրամադրության փոփոխականությունը, հումորի զգացումը, խոսքի հուզական հագեցվածությունը: Սակայն նրանք դժվարությամբ են երկար ժամանակով կենտրոնանում խնդիրների վրա, հաճախ անհամբեր են և շտապողական, կարող են շուտ հրաժարվել մինչ այդ իրենց հետաքրքրությունը հարուցած գործից:

Ուսուցման ժամանակ անհրաժեշտ է, որ նրանց մատուցվող նյութը հա-

(https://cyberleninka.ru/article/n/vliyanie-tipa-temperamenta-na-uchebnuyu-deyatelnost/viewer); *Thomas Oakland, Diana Joyce-Beaulieu.* Temperament-based Learning Styles and School-based Applications. “Canadian Journal of School Psychology”, December 2004, Vol. 19, N 1- 2 (https://www.researchgate.net/publication/313414118_Temperament-based_Learning_Styles_and_School-based_Applications):

[21] Տես, օրինակ, *Ա. Ա. Մուրադյան,* Ուսանողի հուզական վիճակի փոփոխությունների ընթացքի հավանականային մոդել: «ՀԲ», 2023, հմ. 2:

[22] Տես, օրինակ, «Как темперамент влияет на учебу?», 10 апреля 2015 (https://repetit.ru/blog/articles/kak-temperament-vliyaet-na-uchebu); «Учёт типа темперамента при учебной мотивации студентов», 11.03.2022 (https://www.informio.ru/publications/id6820/Ucht-tipa-temperamenta-pri-uchebnoi-motivacii-studentov):

մեմված լինի բազմաթիվ հետաքրքրաշարժ օրինակներով ու կատակներով, առաջադրանքները լինեն բազմաբովանդակ: Դասախոսները պետք է օգտագործեն թե՛ գովասանք, թե՛ քննադատություն: Բարդ առաջադրանքները անհրաժեշտ է բաժանել մի քանի մասերի, ինչը կուրսանտին կօգնի ավելի լավ կենտրոնանալ և հաջողությամբ կատարել դրանք:

2. Խոլերիկները ծայրահեղ եռանդուն մարդիկ են, նրանք ընդունակ են նվիրվելու գործին բացառիկ խանդավառությամբ, արագաշարժ են և պոռթկուն, նրանց բնորոշ են հուզական բռնկումները, տրամադրության կտրուկ փոփոխությունները: Ունեն արտահայտիչ «հրամայական» խոսք, ուժեղ կամք, վերլուծական մտածողություն և կազմակերպչական լավ ունակություններ: Սակայն անհամբերատար են, դյուրաբորբոք և կրքոտ, ինչը հաճախ մեծ տհաճություն է պատճառում ոչ միայն շրջապատի մարդկանց, այլև հենց իրենց: Խոլերիկների հույզերը առաջանում են նույն արագությամբ, ինչպես և սանգվինիկներինը, սակայն դրանք տարբերվում են իրենց ուժգնությամբ և տևականությամբ: Նման մարդիկ կարող են ուրիշների նկատմամբ լինել հույժ ագրեսիվ և բռնկվել ցանկացած մանրուքից: Խոլերիկները անհաջողություններին արձագանքում են խիստ բացասաբար:

Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է խուսափել միապաղաղ առաջադրանքներից, հանձնարարել բազմազանեցված առաջադրանքներ, ուշադրություն դարձնել համարժեք ինքնագնահատման կարողությունների զարգացմանը, աշխատել խուսափել ուրիշների ներկայությամբ քննադատությունից, ինչը նրանց կօգնի անհաջողությունների դեպքում զերծ մնալ բուռն հուզական արձագանքումներից: Հուզական լարվածության ժամանակ պետք է փորձել շեղել նրանց ուշադրությունը:

3. Ֆլեգմատիկները հավասարակշռված են ու դանդաղաշարժ, դժվարությամբ են հարմարվում փոփոխություններին: Նրանց ձգտումները և տրամադրությունները կայուն են, զգացմունքները՝ հաստատուն և խոր, խոսքը և գործողությունները համաչափ են, երբեմն նույնիսկ չափից ավելի դանդաղեցված: Նրանց բնորոշ են սառնասրտությունը, բծախնդրությունը, հաճախակի դրսևորվող համառությունը, հավատարմությունը սովորություններին: Միայն շատ ուժեղ տպավորությունները կարող են նրանց հանել հավասարակշռությունից և ստիպել բուռն կերպով դրսևորել իրենց ապրումները: Ձախողումներին ու քննադատությանը արձագանքում են հանգիստ, և երբեմն թվում է, թե այդ ամենը նրանց ընդհանրապես չի անհանգստացնում, ինչը, սակայն, միշտ չէ, որ ճիշտ է:

Ուսումնական գործընթացում կարծրատիպային վարքի հակված լինելու պատճառով նրանք կարող են հանդիպել լուրջ դժվարությունների: Անհրաժեշտ է նրանց աստիճանաբար ներգրավել հետաքրքրական առաջադրանքներում և դրանց պատրաստվելու համար տրամադրել բավարար ժամանակ, խրախուսմամբ բարձրացնել ինքնավստահության աստիճանը, զարգացնել հաղորդակցման կարողությունները և նվազեցնել արտաքին բացասական գործոնների ազդեցությունը:

4. Մելանխոլիկների զգացմունքներն առաջանում են դանդաղորեն, սակայն աչքի են ընկնում իրենց խորությամբ և կայունությամբ: Հեշտ վիրավորվում են, հիվանդագին հակազդում վիրավորանքներին կամ դառնություններին (շատ անգամ երևակայական), դյուրազգաց են, սակայն, արտաքնապես թույլ են հակազդում երևույթներին: Դիմախաղը աղքատ է, շարժումները՝ զուսպ, անվստահ, երկչոտ, խոսքը անաշխույժ է, մարած: Մելանխոլիկը մտախոհ է, կասկածամիտ, տառապում է դատարկ, չնչին բաների պատճառով: Այսպիսով՝ այն, ինչը սրտին մոտ չի ընդունի սանգվինիկը, իր ճանապարհից դեն կնետի խոլերիկը, չի նկատի կամ կշրջանցի ֆլեգմատիկը, մելանխոլիկին կստիպի տառապել, կդժբախտացնի: Քննադատությունը, հատկապես՝ անհիմն ու կոպիտ ձևով արտահայտված, կարող է խորապես վիրավորել նրան և հանգեցնել ծանր հուզական ապրումների: Մելանխոլիկը ունենում է զարգացած ստեղծագործական ու վերլուծական ունակություններ և կարողանում է ձևավորել կայուն դրական հարաբերություններ, սակայն դժվար է հաղթահարում ծախողումները և նման իրավիճակներում մեկուսանում է:

Ուսումնական գործընթացում մելանխոլիկին պետք է ներգրավել աստիճանաբար՝ մեծացնելով նրա ինքնավստահությունը և իր ուժերի նկատմամբ հավատը: Հաճախակի գովել՝ ուշադրությունը հրավիրելով առաջադրանքի արդյունավետ կատարման վրա, ձևավորել անհրաժեշտ դրական բարոյահոգեբանական միջավայր, որը կնպաստի ուսման նկատմամբ նրանց դրական դիրքորոշումների ձևավորմանը: Առաջադրանքի կատարման համար պետք է տրամադրել անհրաժեշտ ժամանակ և նվազեցնել բացասական ազդեցությունները:

Ինչպես տեսնում ենք, խառնվածքի որոշ հատկություններ կարող են բավական հակասական ազդեցություն թողնել մասնագիտական գործունեության ընթացքի վրա: Ամեն ինչ կախված կլինի այն բանից, թե ինչպես է դրանք հաշվի առնում հրամանատարական ու դասախոսական կազմը: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ մեծ ակտիվություն առաջացնող հետաքրքիր առաջադրանքի մատուցման ժամանակ խոլերիկների զսպվածության աստիճանը պակաս չէ, քան սանգվինիկներինը, իսկ մելանխոլիկների աշխատունակությունն ավելի ցածր չէ, քան ֆլեգմատիկներինը: Առաջադրանքի կատարման հնարավորությունների տեսակետից խառնվածքի հատկությունները կարող են ազդել դրանց կատարման յուրօրինակության վրա[23]:

Կարծում ենք, որ կայուն ուսումնական շարժառիթի և ճանաչողական ակտիվության զարգացման համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները.

- խրախուսում և պատիժ,
- պրոբլեմային իրավիճակների լուծման և ստեղծագործական ունակութ-

[23] Տես *Էլդա Գրին,* Խառնվածք: Ե., 2002, էջ 47:

յունների զարգացման, պատասխանատվության և օգտակար լինելու ցանկության ձևավորման համար անհրաժեշտ մասնագիտական առաջադրանքների հանձնարարում,

- խմբային աշխատանքի առաջադրանքների կատարման նկատմամբ հետաքրքրության ձևավորում, ինքնաստուգման և փոխստուգման մեխանիզմների կիրառման հմտությունների զարգացում,
- այլընտրանքային լուծումների խրախուսում և այլն:

Տվյալ եղանակները կիրառելիս անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրել կուրսանտների ուսումնամասնագիտական շարժառիթավորման մակարդակի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները: Այդ ամենի հաշվառմամբ էլ պետք է կատարելագործվեն կիրառվող մեթոդները: Պատահական չէ, որ առաջատար պետությունների ռազմաուսումնական հաստատություններում պարբերաբար կատարվում են հետազոտություններ, որոնք դասախոսական ու հրամանատարական կազմի համար ծառայում են որպես մեթոդական ուղեցույց կուրսանտների շարժառիթավորման մակարդակի բարձրացման նպատակով[24]:

**Ամփոփում**

Եվ այսպես. յուրաքանչյուր քայլ կատարելու (կամ չկատարելու) համար մարդ պետք է ունենա համապատասխան շարժառիթ: Ընդսմին որքան ավելի կարևոր է այդ քայլը, այնքան ավելի ծանրակշիռ պետք է լինի շարժառիթը: Հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է կյանքը վտանգելու հետ կապված գործողությանը: Դա առաջին հերթին առնչվում է զինված պայքարի վարմանը, երբ ինքնապահպանման բնազդը հրամայաբար մղում է մարդուն խուսափելու մարտից: Ուստի հրամանատարը՝ սպան, պետք է կարողանա հաղթահարել ոչ միայն իր բնազդի թելադրանքը, այլև իր ենթակայի: Ահա թե ինչպես մարտում իր զինվորին պետք է շարժառիթավորի հրամանատարը Գարեգին Նժդեհի պատկերավոր նկարագրությամբ. «Քիչ անգամ է նա դիմում զինվորների բանականությանը, բայց միշտ էլ՝ սրտին: Նա սիրտ է դնում իր ամեն մի խոսքի մեջ, ահա¢թե ինչո₵ եթե կտրեք նրա խոսքերը՝ նրանցից արյուն կհոսի:… ահա¢թե ինչո₵ նա երևում է ամեն տեղ, հասնում ամենին, որպեսզի … անխաթար պահի զորքերի ներքին բարոյական կապը, որ ամեն մեկին զգացնել տա, թե իր հետ է ամբողջ բանակը, ազգը, ցեղը և ի₵նքը՝ հաջողության Աստվածը»[25]:

Պակաս կարևոր չէ ճիշտ շարժառիթավորումը նաև ապագա սպայի

[24] Տես օրինակ, *Е. Н. Арбузова.* Особенности применения методик исследования мотивации человека. «Вестник Санкт-Петербургского университета МВД России», 2010, № 1(45); *Е. Н. Карлова.* Типы мотивации курсантов и их связь с различными показателями отношения к военной профессии. «Социологические исследования», 2018. № 7; *Amy Wrzesniewski, Barry Schwartz, Xiangyu Cong, Michael Kane, Audrey Omar, Thomas Kolditz.* Multiple types of motives don't multiply the motivation of West Point cadets. "PNAS", 29 July 2014, Vol. 111, N 30 (https://www.pnas.org/doi/epdf/10.1073/pnas.1405298111):

պատրաստման ժամանակ: Իհարկե սոցիալական ապահովվածությամբ շարժառիթավորումը կարևոր է, սակայն ամենևին էլ բավարար չէ: Պետք է ընտրել առավել «երկարակյաց» ու կայուն շարժառիթներ, որոնք հնարավորինս համահունչ լինեն կուրսանտի հոգեկան հատկություններին, հատկապես՝ խառնվածքին, և հոգեվիճակին:

Իհարկե, մասնագիտական գրականությունում նկարագրված են բազմաթիվ հետազոտություններ, որոնց արդյունքների թանձրուկը մենք փորձեցինք այստեղ ներկայացնել: Սակայն պետք չէ մոռանալ, որ դրանք կատարվել են այլ հասարակական միջավայրում ձևավորված, այլ ազգային հոգեկերտվածքով երիտասարդների նկատմամբ, ուստի չեն կարող համարվել մեր իրողության համար միանգամայն հավաստի և ընդունելի: Ուստի կարծում ենք, որ նման հետազոտություններ պետք է պարբերաբար կատարվեն նաև մեր ակադեմիայում և դրանց արդյունքների ընդհանրացմամբ մշակվեն համապատասխան ուղեցույցներ:

[25] *Գ. Նժդեհ,* Երկեր, հ. 1: Ե., 2002, էջ 37:

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ**

# МОТИВЫ ЭФФЕКТИВНОГО ОБУЧЕНИЯ КУРСАНТОВ ВОЕННЫХ ВУЗОВ

*К. Р. КАРАПЕТЯН, кандидат психологических наук (РФ), старший лектор цикла Военной педагогики и психологии кафедры Военного права и лидерства Военной академии им. Вазгена Саргсяна МО РА*

РЕЗЮМЕ

Известно, что для совершения (или не совершения) какого-либо шага, у человека должен быть соответствующий мотив. При этом чем важнее этот шаг, тем весомее должен быть мотив, в особенности, когда речь идет о действиях, связанных с риском для жизни. В первую очередь, это касается ведения вооруженной борьбы, когда инстинкт самосохранения диктует человеку стремление к уклонению от боя. Поэтому офицер-командир должен уметь преодолевать не только веление своего инстинкта, но и у подчиненного. Образное описание мотивирования командиром своего воина в бою приводит видный армянский военный и военно-политический деятель первой половины XX века Гарегин Нжде: «Редко, когда он обращается к разуму воинов, но всегда – к сердцу. Он вкладывает сердце в каждое свое слово, вот почему, если вы разрежете его слова, то из них польется кровь. … вот почему он виден повсюду, он рядом с каждым, чтобы … в целост-

ности сохранить внутреннюю моральную связь в войсках, чтобы дать каждому прочувствовать, что с ним вся армия, нация, племя и сам Бог успеха».

Не менее важна и правильная мотивация в процессе подготовки будущего офицера. Конечно, мотивация социальной обеспеченностью важна, но отнюдь не достаточна. Необходимо выбрать наиболее «живучие» устойчивые мотивы, которые бы возможно полнее соответствовали психическим свойствам курсантов, в особенности их темпераменту, и душевному состоянию.

Конечно, в профессиональной литературе описано много исследований, выжимку из результатов которых мы постарались представить здесь. Однако не следует забывать, что они проводились с молодыми людьми, сформировавшимися в другой общественной среде, с другим национальным психическим складом, поэтому не могут считаться вполне достоверными и приемлемыми для нашей реальности. Следовательно, на наш взгляд, такие исследования должны регулярно проводиться и в нашей академии, дабы посредством обобщения их результатов были разработаны соответствующие ориентировки и наставления.

**MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION**

## MOTIVES FOR EFFICIENT LEARNING AMONG STUDENTS IN MILITARY ACADEMIES

*K. R. KARAPETYAN, PhD in Psychological Sciences (RF), Senior Lecturer, Cycle of Military Pedagogy and Psychology, Chair of Military Law and Leadership, Vazgen Sargsyan Military Academy, MOD, RA*

SUMMARY

Commonly in order to commit an action or refuse doing one, a person always has to be properly motivated. Yet, the more important the action is, the more grounded the motivation has to be, especially when it deals with risking one's life. This primarily relates to the conduct of armed struggle, when the instinct of self-preservation dictates a person some intake to avoid battle. Therefore, a commanding officer must be able to overcome not only the dictates of his own instinct, but also those of his subordinate. As Garegin Nzhdeh, prominent Armenian military and military-political figure of the first half of the 20th century, vividly put it, here is how a commander ought to motivate his warrier in the battle: "Little he turns to his soldiers' reasoning, but always to their hearts. He himself puts heart in every word of his uttered, hence, if we cut his words out, they will bleed. …. hence, he is seen everywhere, he reaches to everybody, in order to …

keep the internal moral bond of the troops intact, and in this way make everybody feel that the entire army, the nation, the tribe, and the God of success thyself, stand by him".

Proper motivation is no less important during the process of a future officer's training. Motivation through social security is by no means essential, all the same not sufficient. It is fundamental that the most "long-lasting" and stable motivations conceivable be chosen, to the most possible extent consistent with the cadets' mental traits, especially temperament, and their state of mind.

Of course, numerous studies have been detailed in the professional literature, the digest of which we have tried to present in the article hereinabove. However, it should be borne in mind that those were conducted with young people brought up in quite different social environment and with a different national psychic setup, therefore for our reality they cannot be considered completely reliable and acceptable. Consequently, we assume that studies of this type should be regularly conducted in our academy, too, and appropriate guidelines should be developed by generalizing their results.

# ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստագորի գնդապետ,*
*Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, կապիտան, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,*
*Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

## ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

անկարգություններ – беспорядки – disturbances, unrest

անձնային հատկություն – личностное качество – personal quality, personality trait

անձնապաշտական իշխանություն – авторитарная власть – authoritarian power

անվտանգային ճարտարապետություն – архитектура безопасности – security architecture

աշխատակարգ – режим – schedule

աշխարհաքաղաքական առճակատում – геополитическая конфронтация – geopolitical confrontation

ապաշրջափակում – деблокирование, разблокирование – unblocking

ապաստան – убежище – shelter

ապրանքաշրջանառություն – товарооборот – trade turnover

արագանցանելի խճուղի – скоростное шоссе – speedway, highway

արգելափակում – блокировка – blocking

արդյունաբերական հավաքակայան – промышленный парк – industrial estate, industrial park

արմատականություն – радикализм – radicalism

արտանետում – выброс – emission

բազմազանեցում – диверсификация – diversification

բազմակենտրոն աշխարհակարգ – полицентричный миропорядок, многоцентричный миропорядок – polycentric world order

բազմատեսակ միջանցք – мультимодальный коридор – multimodal corridor

բանելակարգ – режим – mode

բեռնամփոփ – контейнер – container, pod, shelter

բեռնարկղ – տես *բեռնամփոփ*

բռնաճնշում – репрессия – repression

բռնի տեղահանում – депортация – forced displacement

գիտելիքահեն կառավարում – наукоемкое управление – knowledge-intensive management

գործակցություն – 1. взаимодействие, 2. сотрудничество – 1. interaction, 2. coordination

դրդապատճառ – побудительная причина – incentive, stimulus, impetus

երթուղի – маршрут – itinerary, route

զավթողագործական քաղաքականություն – экспансионистская политика – expansion policy, expansionist policy

զեկույց – рапорт – report
զեկուցագիր – докладная – report
զեկուցում – доклад – report
զորակայան – военная база, база – base, military base
էթնիկական զտում – этническая чистка – ethnic cleansing
ընթացակարգ – процедура – procedure
թանձրուկ – сгусток – clot
թողարկում (արժեթղթերի) – эмиссия (ценных бумаг) – issuance
ինքնապահպանման բնազդ – инстинкт самосохранения – instinct for self-preservation
ծայրահեղական իսլամ – исламский экстремизм – Islamic extremism
ծայրահեղականություն – 1. экстремизм, 2. տես *արմատականություն* – 1. extremism, ultraism, 2. տես *արմատականություն*
կազմակերպվածք – организационное устройство, организация – organizational structure, organization
կազմակերպություն – организация – organization
կամայական կալանավորում – произвольный арест, незаконный арест – arbitrary arrest
կամայնություն – волюнтаризм – voluntarism
հաղորդակցային ուղի – տես *հաղորդակցության ուղի*
հաղորդակցության ուղի – путь сообщения, коммуникация – line of communications, communication
համադասում – координация – coordination
հայտագրություն – доклад – report
հաստատութենացում – институционализация – institutionalization
հավասարակշռող ուժ – уравновешивающая сила – balancing power
հավաքագրում – вербовка, рекрутирование – recruitment
հարցազրույց – интервью – interview
ձեռնհասություն – компетентность – competence
ճառագայթում – излучение – emission, radiation
մայրուղային ցանցի թողունակություն – пропускная способность магистральной сети – capacity of primary highway system
մեկուսականխում – блокирование – blockade, block
միջնորդության դադարեցում – прекращение посредничества – cessation of mediation
մշտազննական աշխատանք – мониторинговая работа – monitoring work
մտերմականություն – аффилиация – affiliation
ներքնայնացում – интериоризация – interiorization
նշանակություն – значение, вес – significance, weight
նռնականետ – гранатомет – grenade launcher
շարժառիթ – мотив – motive
շարժառիթավորում – мотивация, мотивирование – motivation, motivating
շարժիչ ուժ – движущая сила – driving force
շրջապատնեշում – блокада, блокирование – blockade, block
շրջափակում – блокада – blockade
ուղորազերծող երկաթուղային մայրագիծ – спрямляющая железнодорожная магистраль – cut-

off railway line
պակասող օղակ – недостающее звено – missing link
պատերազմի մեկնարկ – начало войны – outbreak of war
պարեկ – патруль – patrol
պարեկորդ – патрульный – patrol
պետությանամետ գործունեություն – деятельность в интересах государства – activities in state interest
ռազմավարական գերակայություն – стратегический приоритет – strategic priority
ռազմավարական զսպում – стратегическое сдерживание – strategic deterrence
ռազմավարական ինքնավարություն – տես *ռազմավարական ինքնուրույնություն*
ռազմավարական ինքնուրույնություն – стратегическая автономность, стратегическая автономия – strategic autonomy
ռազմավարական մերձեցում – стратегическое сближение – strategic rapproachement
ռեժիմ – режим – regime
սահմանակարգված համակարգ – институционализированная система – institutionalized system
սահմանակարգում – институционализация – institutionalization
վարչակազմ – администрация – administration
վարչակարգ – режим – regime
տարածաշրջայնացում – регионализация – regionalization
տարածաշրջանային ընդհանրություն – региональная общность – regional commonality
տարանցիկ բեռնափոխադրում – транзитная грузоперевозка – transit traffic
տարատեսակում – диверсификация – diversification
ուժային հաշվեկշիռ – силовой баланс – power balance
ուղեբացում – деблокирование дорог – unblocking transport links
ուղեկապում – блокирование дорог – blocking
փոխաբեռնման կետ – пункт перегрузки – transfer point, place of transshipment
փոխադրունակություն – грузопропускная способность – tonnage capability
փոխազդեցություն – 1. взаимодействие, 2. взаимовлияние – 1. interaction, coordination, 2. interinfluence
փոխգործություն – взаимодействие – interaction, coordination
քննազրույց – собеседование – interview
օպտիկալուսանկարչական դիտման արբանյակ – оптико-электронный спутник наблюдения – optical Earth-imaging satellite

## ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

авторитарная власть – անձնապաշտական իշխանություն
администрация – վարչակազմ
архитектура безопасности – անվտանգային ճարտարապետություն
аффилиация – մտերմականություն
база – см. *военная база*
беспорядки – անկարգություններ
блокада – 1. շրջափակում, 2. շրջա-

պատնեշում
блокирование – 1. մեկուսականխում, 2. см. *блокада 1, 2*
– блокирование дорог – ուղեկապում
блокировка – արգելափակում
вербовка – հավաքագրում
вес – см. *значение*
взаимовлияние – փոխազդեցություն
взаимодействие – 1. գործակցություն, 2. փոխգործություն, 3. փոխազդեցություն
военная база – զորակայան
волюнтаризм – կամայնություն
выброс – արտանետում
геополитическая конфронтация – աշխարհաքաղաքական առճակատում
гранатомет – նռնականետ
грузопропускная способность – փոխադրունակություն
движущая сила – շարժիչ ուժ
деблокирование – ապաշրջափակում
– деблокирование дорог – ուղեբացում
депортация – բռնի տեղահանում
деятельность в интересах государства – պետութենամետ գործունեություն
диверсификация – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
доклад – 1. զեկուցում, 2. հայտագրություն
докладная – զեկուցագիր
значение – նշանակություն
излучение – ճառագայթում
инстинкт самосохранения – ինքնապահպանման բնազդ
институционализация – 1. հաստատութենացում, 2. սահմանակարգում
институционализированная система – սահմանակարգված համակարգ
интервью – հարցազրույց
интериоризация – ներքնայնացում
исламский экстремизм – ծայրահեղական իսլամ
коммуникация – см. *путь сообщения*
компетентность – ձեռնհասություն
контейнер – բեռնամփոփ, բեռնարկղ
координация – համադասում
личностное качество – անձնային հատկություն
маршрут – երթուղի
многоцентричный миропорядок – см. *полицентричный миропорядок*
мониторинговая работа – մշտազննական աշխատանք
мотив – շարժառիթ
мотивация – շարժառիթավորում
мотивирование – см. *мотивация*
мультимодальный коридор – բազմատեսակ միջանցք
наукоемкое управление – գիտելիքահեն կառավարում
начало войны – պատերազմի մեկնարկ
недостающее звено – պակասող օղակ
незаконный арест – см. *произвольный арест*
оптико-электронный спутник наблюдения – օպտիկալուսանկարչական դիտման արբանյակ
организационное устройство – կազմակերպվածք
организация – 1. կազմակերպություն, 2. см. *организационное устройство*
патруль – պարեկ
патрульный – պարեկորդ
побудительная причина – դրդա-

պատճառ
полицентричный миропорядок – բազմակենտրոն աշխարհակարգ
прекращение посредничества – միջնորդության դադարեցում
произвольный арест – կամայական կալանավորում
промышленный парк – արդյունաբերական հավաքակայան
пропускная способность магистральной сети – մայրուղային ցանցի թողունակություն
процедура – ընթացակարգ
пункт перегрузки – փոխաբեռնման կետ
путь сообщения – հաղորդակցության ուղի, հաղորդակցային ուղի
радикализм – 1. արմատականություն, 2. ծայրահեղականություն
разблокирование – см. *деблокирование*
рапорт – 1. զեկույց, 2. *см. докладная*
регионализация – տարածաշրջայնացում
региональная общность – տարածաշրջանային ընդհանրություն
режим – 1. աշխատակարգ, 2. բանելակարգ, 3. ռեժիմ, 4. վարչակարգ
рекрутирование – см. *вербовка*
репрессия – բռնաճնշում
сгусток – թանձրուկ
силовой баланс – ուժային հաշվեկշիռ
скоростное шоссе – արագանցանելի խճուղի
собеседование – քննազրույց
сотрудничество – գործակցություն
спрямляющая железнодорожная магистраль – ուղղաձիգ երկաթուղային մայրագիծ
стратегическая автономия – см. *стратегическая автономность*
стратегическая автономность – ռազմավարական ինքնուրույնություն, ռազմավարական ինքնավարություն
стратегический приоритет – ռազմավարական գերակայություն
стратегическое сближение – ռազմավարական մերձեցում
стратегическое сдерживание – ռազմավարական զսպում
товарооборот – ապրանքաշրջանառություն
транзитная грузоперевозка – տարանցիկ բեռնափոխադրում
убежище – ապաստան
уравновешивающая сила – հավասարակշռող ուժ
экспансионистская политика – զավթողագործական քաղաքականություն
экстремизм – ծայրահեղականություն
эмиссия – թողարկում (արժեթղթերի)
этническая чистка – էթնիկական զտում

## ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

activities in state interest – պետութենամետ գործունեություն
administration – վարչակազմ
affiliation – մտերմականություն
arbitrary arrest – կամայական կալանավորում
authoritarian power – անձնապաշտական իշխանություն
balancing power – հավասարակշռող ուժ

base – զորակայան
block – see *blockade 2, 3*
blockade – 1. շրջափակում, 2. շրջապատնեշում, 3. մեկուսականխում
blocking – 1. արգելափակում, 2. ուղեկապում
capacity of primary highway system – մայրուղային ցանցի թողունակություն
cessation of mediation – միջնորդության դադարեցում
clot – թանձրուկ
communication – see *line of communications*
competence – ծեռնհասություն
container – բեռնամփոփ, բեռնարկղ
coordination – 1. համադասում, 2. see *interaction*
cut-off railway line – ոլորազերծող երկաթուղային մայրագիծ
disturbances – անկարգություններ
diversification – 1. բազմազանեցում, 2. տարատեսակում
driving force – շարժիչ ուժ
emission – 1. ճառագայթում, 2. արտանետում
ethnic cleansing – էթնիկական զտում
expansionist policy – see *expansion policy*
expansion policy – զավթողագործական քաղաքականություն
extremism – ծայրահեղականություն
forced displacement – բռնի տեղահանում
geopolitical confrontation – աշխարհաքաղաքական առճակատում
grenade launcher – նռնականետ
highway – see *speedway*
itinerary – երթուղի
impetus – see *incentive*
incentive – դրդապատճառ
industrial estate – արդյունաբերական հավաքակայան
industrial park – see *industrial estate*
instinct for self-preservation – ինքնապահպանման բնազդ
institutionalization – 1. հաստատութենացում, 2. սահմանակարգում
institutionalized system – սահմանակարգված համակարգ
interaction – 1. գործակցություն, 2. փոխգործություն, 3. փոխազդեցություն
interinfluence – փոխազդեցություն
interiorization – ներքնայնացում
interview – 1. հարցազրույց, 2. քննազրույց
Islamic extremism – ծայրահեղական իսլամ
issuance – թողարկում (արժեթղթերի)
knowledge-intensive management – գիտելիքահեն կառավարում
line of communications – հաղորդակցության ուղի, հաղորդակցային ուղի
military base – see *base*
missing link – պակասող օղակ
mode – բանելակարգ
monitoring work – մշտազննական աշխատանք
motivating – see *motivation*
motivation – շարժառիթավորում
motive – շարժառիթ
multimodal corridor – բազմատեսակ միջանցք
optical Earth-imaging satellite – օպտիկալուսանկարչական դիտման արբանյակ
organization – 1. կազմակերպություն, 2. see *organizational structure*
organizational structure – կազմակերպվածք
outbreak of war – պատերազմի մեկնարկ

patrol – 1. պարեկ, 2. պարեկորդ
personality trait – see *personal quality*
personal quality – անձնային հատկություն
place of transshipment – see *transfer point*
pod – see *container*
polycentric world order – բազմակենտրոն աշխարհակարգ
power balance – ուժային հաշվեկշիռ
procedure – ընթացակարգ
radiation – see *emission 1*
radicalism – 1. արմատականություն, 2. ծայրահեղականություն
recruitment – հավաքագրում
regime – 1. ռեժիմ, 2. վարչակարգ
regional commonality – տարածաշրջանային ընդհանրություն
regionalization – տարածաշրջայնացում
report – 1. զեկուցագիր, 2. զեկույց, 3. զեկուցում, 4. հայտագրություն
repression – բռնաճնշում
route – see *itinerary*
schedule – աշխատակարգ
security architecture – անվտանգային ճարտարապետություն
shelter – 1. ապաստան, 2. see *container*
significance – նշանակություն, կշիռ
speedway – արագանցանելի խճուղի
stimulus – see *incentive*
strategic autonomy – ռազմավարական ինքնուրույնություն, ռազմավարական ինքնավարություն
strategic deterrence – ռազմավարական զսպում
strategic priority – ռազմավարական գերակայություն
strategic rapproachement – ռազմավարական մերձեցում
tonnage capability – փոխադրունակություն
trade turnover – ապրանքաշրջանառություն
transfer point – փոխաբեռնման կետ
transit traffic – տարանցիկ բեռնափոխադրում
ultraism – see *extremism*
unblocking – ապաշրջափակում
unblocking transport links – ուղեբացում
unrest – see *disturbances*
voluntarism – կամայնություն
willfulness – see *voluntarism*
weight – see *significance*

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի հաստատած «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 12 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 27500 նիշ, ներառյալ՝ բացատները), խմբագրության որոշմամբ նյութը կարող է լինել մինչև 20 էջ: Նյութին կից պետք է լինեն ռուսերեն և անգլերեն ամփոփումներ (150–250 բառ): Պետք է նշված լինեն հեղինակի անուն-հայրանուն-ազգանունը, կոչումները, աստիճանները, կազմակերպությունը, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները: Համացանցային հղումները ընդունելի են, եթե դրանք վերցված են պաշտոնական կայքերից:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի (JPEG կամ TIFF), առնվազն 300 DPI (լուսանկարները, գծանկարները) խտությամբ:

Նյութում պետք է վերծանված լինեն բոլոր օգտագործված հապավումները:

Հեղինակները պատասխանատու են նյութում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Պարտադիր չէ, որ հեղինակների դիրքորոշումը համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Նյութերը հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал «Айкакан банак» НИУО МО РА включен в утвержденный ВАК-ом «Перечень периодических изданий, приемлемых для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Материалы должны быть представлены на армянском языке, в двух экземплярах, набранных с межстрочным интервалом в 1,5 пункта, объемом до 12 компьютерных страниц (максимум 27500 знаков с пробелами), по решению редакции объем материала может доходить до 20 страниц. К материалу должны прилагаться резюме на русском и английском языках (150–250 слов). Должны быть указаны фамилия-имя-отчество автора, его звания, ученая степень, организация, адрес электронной почты, номер телефона.

Авторы обязаны указывать наиболее важные использованные источники. Допускаются ссылки на интернет-ресурсы, если это официальные сайты.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотографии должны быть четкими и пригодными для печати (в формате *JPEG* или *TIFF)*, плотностью минимум 300 *DPI* (фотографии, графические рисунки).

В материале должна даваться расшифровка всех использованных сокращений.

Авторы несут ответственность за достоверность приводимых в статье фактов и сохранение секретности.

Мнение авторов может не совпадать с позицией редакции.

Материалы публикуются после обязательного научного рецензирования.

Частичная или полная перепечатка материалов допускается только с письменного согласия редакции.

Рукописи не возвращаются.

## For the information of the authors and readers

The Defense-Academic Journal “Haikakan Banak”, NDRU, MOD, RA, is included in “The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates’ dissertations”, affirmed by the SCC.

The materials must be presented in Armenian, in two copies, typed with a line spacing of 1.5 points, with a volume of up to 12 computer pages (maximum 27500 characters with spaces). By the decision of the editorial board, the volume of the material can reach up to 20 pages. The articles should be submitted with summaries in Russian and English (150–250 words). The author's surname, first name, patronymic, titles, military and academic degrees, organization, e-mail address, phone number must be indicated.

Authors should provide footnotes (endnotes) to the most important sources used. References from the Internet are allowed if they are taken from official websites.

Diagrams, schemes, charts, drawings, photographs must be clear and printable (in JPEG or TIFF format), with a density of at least 300 DPI (photographs, graphic drawings).

The material must contain a decoding of all the acronyms and abbreviations used.

The author is responsible for the accuracy of the facts presented in the article and for keeping confidentiality.

The opinions expressed in the articles are those of the authors and do not purport to reflect the opinions of the editorial office.

The materials are published after mandatory scientific review.

Partial or complete reprint of materials is allowed only with the written consent of the editorial office.

The manuscripts are not returned to the authors.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Թեմատիկ հոդվածների գիտական խմբագիր՝ *Դ. Մ. Մանասյան*
Գիտական խմբագիր՝ *Ա. Զ. Պետրոսյան*
Թարգմանիչներ՝ *Ա. Ա. Մարտիրոսյան, Ն. Ս. Մկրտչյան*
Անգլերեն տեքստի վերաբերյալ խորհրդատվությունը՝ *Ն. Ս. Մկրտչյանի*
Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ռ. Ղուկասյանի, Տ. Մ. Տիրացույանի*
Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Գ. Վ. Իսկանդարյանի*
Հանդեսի շապիկի 2-րդ, 3-րդ էջերի լուսանկարները՝ mil.am կայքի

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՈՒլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-2 5
Պաշտոնական վերկայք՝ http://haykakanbanak.am
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2025 թ.

Ստորագրվել է տպագրության 19.05.2025:
Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է ԱՁ Հայկ Չիվչյան տպարանում

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ




ՀՀ Պաշտպանության նախարար *Սուրեն Պապիկյանը* Հնդկաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում «Աերո Ինդիա» ցուցահանդեսի շրջանակներում մասնակցել է պաշտպանության նախարարների խորհրդակցությանը. մասնակիցների խմբանկարը

Հնդկաստան, 2025 թ. փետրվարի 11



ՀՀ Պաշտպանության նախարար *Սուրեն Պապիկյանի* և ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության Արտակարգ և Լիազոր դեսպան *Օլիվիե Դըկոտինյիի* հանդիպումը

Երևան, 2025 թ. փետրվարի 21



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1 (123). 2025